





ՄԻԱԲԱՆ, (Գ. Տ. ՄԿՐՏՉԵԱՆ)

# ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԵՏՄՈՒԹԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԾՄԻՐՈՒԹԻՒՆ



ՎԱՀԱՐԾԱՎԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԴՈՅ Ա. ԼՀՄԻԱՆՆԻ

Մայր Աթոռի Տպարանում՝ վաճառում՝ ևն հետեւեալ գրքեզը:

Ո. կ.


1.	Բագրեանդ և Զբարաշխ գաւառ,	աշխ.	Ա. Հայկունի	1	40
2.	Դեռլինգերի Նամակները, թարգմ. Խաչվանքեան			—	50
3.	Էլիզէ Ռէկլի, Ռուսական Հայաստան, թարգմ. Միաբան—			30	
4.	Նոյնը Լազիստան—Հայաստան և Քիւրդիստան				
	թարգ. Միաբան	•	•	•	— 50
5.	Խանգարմունք Հայկաբանութեան, աշխ. Գ. Եպիս.				
	Այլաղեան	•	•	•	— 20
6.	Կիրակուայ Հանգստութիւնը և նորա նշանակութիւնը				
	առողջութեան համար, Գօկ. Նէէարի թարգ. բժ.				
	Ա. Զարգարեան	•	•	•	— 20
7.	Մարգարիտ Արքայութեան, գրեց Խրիմեան Հայրիկ				— 30
8.	Խաջի ձառ, գրեց Խրիմեան Հայրիկ	•	•	•	— 30
9.	Դատաստանագիրք Հայոց, Մխիթար Գօշի.	•	•	•	— 3
10.	Մանկական Պարտէզ, թարգ. բժ. Լ. Տիգրանեան				— 20
11.	Պապիկ և Թոռնիկ, գրեց Խրիմեան Հայրիկ	•	•	•	— 60
12.	Պատմութիւն Ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ,				
	աշխ. Ա. Եպիս. Մխիթարեան	•	•	•	— 20
13.	Պատմութիւն Սամուել քհ. Անեցւոյ, հրատ. Ա. Տէր				
	Միքելեան	•	•	•	— 1 20
14.	Զամբո, Ախմէօն կաթուղիկոսի				— 1
15.	Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գա-				
	ւառացն Արարատայ Ա. Հատ. աշխ. Յ. Եպիս.				
	Շահնշապունեան	•	•	•	— 2
16.	Նոյն Բ. Հատող				— 2
17.	Տօնացձյց, աշխ. Գ. քհ. Աղանեան				— 50
18.	Պարզ Քարոզներ, Ա. Գիրք աշխ. Եմ. քհ. Նազարեան				— 15
19.	Նոյնը Բ. Գիրք				— 15

ՄԻԱԲԱՆ (Գ. Տ. ՄԿՐՏՉԵԱՆ)

# ԽԱՐԵՎԵՅՈՒ ՊԵՏՄՈՒԹԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԵՍԻՐՈՒԹԻՒՆ

Հ 25258



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՒԹ Ա. ԼՇԱՐԵԱՆԻ

1896

*ՀՐԱՄԱՆԻ ԽՈՎ*

**S+ S+ ՄԿՐՏՉ**

ԳԵՂԱՓՈԼԻ ԵՐԵ ԱՐՅԱՐԱՐԱՅԻՑ ԿԱԹՈՒՊԵԿԱՅԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ ՀԱՅԱՍ



*ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՅԱՐԱՐԱՅԻ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՅԱՐԱՐԱՅԻ ԿԱԹՈՒՊԵԿԱՅԻ

8831

## ՅԵՐԱՋԸՆԻՆ

Սրանից եօթը տարի առաջ սկսուած այս յօդուածները հրատարակուեցան 1990—91 մուի Արարատներում։ մի և նոյն ժամանակ արտատպուելով մինչեւ այս հրատարակութեան 72 դերեսը։ Արկարատե բացակայութեանս պատճառով՝ սրանց շարունակութիւնը գործ եկաւ ուրիշ ձևով և ծրագրով 1894 թուի Արարատներում «Հայկականք» վերտառութեամբ։ \* Մեր տպարանի նոր վարչութիւնը՝ ջանալով անխնամ զիճակը բարեկարգել՝ ի թիւս ուրիշ կիսկատար թողուան հրատարակութեանց այս արտատպութեան միքանի մնացած երեսներն էլ ամբողջացնել փութաց։

Եօթն երկար տարիներից յետոյնորից մի ակնարկ ձգելով այս յօդուածների վրայ՝ շատ բան գտնում եմ չնացած և սրբագրելի։ Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել։ Մի կողմից Խորենացու վրայ կատարուած նորանոր հետախուզութիւնները՝ միւս կողմից այս յօդուածների հեղինակի երկարամեայ թարթափումները մեր ձեռագրերի հազարաւոր հատորներում միմիայն այդ բընական հետեւանքին կարող էին հացնել։ Աւստի և պէտք է նայել այս գըրուածքին իրեւ նոր սկսողի առաջին փորձերի վրայ։

Սակայն այսուամենայնիւ կան կէտեր գրուածքում որոնք հիմնական գծերով այսօր էլ չեն թուում կորցրած լինել իրենց հետաքրքրականութիւնը, գոնէ յօդուածագրի աչքում։ Ա և Ի յօդուածներում արդպիսի կէտերիցն է թարգմանական ընթերցուածների գոյութեան ազացուցութիւնների կարեւորութիւնը բնագրական հետազօտութեան տեսակէտից։ Աւելի արժանի են աւշադրութեան Գ և Դ յօդուածները, նուրիսուած Խորենացու չորրորդ գրքին։ Այս մասում գրեթե փոփոխելու բան չեմ գտնում։ Դ-րդ յօդուածում նկարագրուած ձեռագիրը անհամեմատ աւելի նշանաւոր գործ է։ կաւ ոչ թէ Խորենացու այլ Ղազարի Շնանաւնի (Մծուրնացու)։ Սերէսոսի և մասամբ Կորիւնի բնագրերի քննադատութեան համար։ Այս մասին ասելիքներ կմնան առաջին պատեհ առթիւ Խ-րդ յօդուածում առաջարկուած սրբագրութիւններից լիովին արդարացաւ Սմբատ—Տրդատի մասին եղած վարկածը (ան Հայկականք ՓԱ), Վերջին այս է՝ Զ-րդ յօդուածը՝ իր գլխաւոր կէտերով այսօր էլ մեռում է գեռ միակ փորձը ճշտելու և սահմանագծելու Խորենացու իրեւ աղբիւր գործ ածած անվաւերական Մարարափատակութաւալլ։

Այսպիսով դիւրանում է և Հնարաւոր գառնում Սերէսոսին կից մեզ հասած Մծուրնացու և Խորենացու Մարարափատակութիւնը կամ լաւ ևս

\* Կայ եւ առանձին զբով հրատ. 1895, Վաղարշապատ:

մինոյն երկասիրութեած է ու մի ընդ հանուր աղբիւրից բղիսող երկու տարրեր խմբագրութիւններ լինելը ապացուցանելը։ \*

Հնացած և անպայման սրբագրելի կէտերիցն են մանր նկատողութիւններից շատերը օրինակ՝ «հաւ և համրաւ» ընթերցուածների մասին յառաջ բերուած խախուտ վարկածները — բոլորովին անընդունելին —, այլ և միքանի շատ խնդրական և լոկ պատահականութեան վրայ հիմնուած մերձեցումները։ Երես 45 «ի քմի (?) կացեալ» հարցականով ընթերցուածը անշուշտ պէտք է հասկանալ «ի քմին կացեալ» այն է կացեալ ի դարանի (քմին = դարան, արարերէն բառ)։ և այսպիսի ուրիշ մանր սրբագրութիւններ Խորենացուն վերագառնալու անշուշտ մենք գեր շատ անդամ առիթ կունենակի։

\* \*

Մեր այս փոքրիկ աշխատութիւնը և նման փորձերը մի գլխաւոր նրապատակ են ունեցել միայն, այն է՝ միջավայր և շրջան պատրաստել իւրովսան՝ քաղաքակրթուած կեդրոններից հեռու անկիւնում՝ գրական — զիտական աշխատանքների համար։ Մեր սակաւամիւ նախորդները երկի անհամեմատ աւելի աննպաստ պայմանների մէջ են աշխատելիս եղել։ Հաւականարար գեռ շատ գժուարութիւնների պէտք կընի յաղթել և այսուհետեւ Կանոնաւոր և կարգաւորեալ մատենադարանի պակասութիւնը (մասնաւորապէս տպագիր զբքերի), զիտական հետաքրքրութիւն ունեցող ընկերների և գործակիցների սակաւութիւնը, լուսաւոր աշխարհից հեռու և անջատուած լինելը և այլ անհրաժեշտ նպաստող պայմանների բացակայութիւնը մեծամեծ խոշընդուներ են։ Բայց անշուշտ կզայժմանակի — և թերևս՝ արգեն իսկ է — երբ զբական զբաղմունքը գոնեոչ նուազ պատուաւոր և պատուարեր պիտի համարուի հասարակի աշքում, քան ուրիշ որեւէ բարձր պաշտօն և պաշտօնայիշարութիւն, Բարեբաղդարար տեղիք կայ յուսալու, որ շատ հեռու չե և այն ժամանակը, որ նոյն իսկ մեզանում՝ վանականներիս մէջ, մոռացուած առանեների կարգը պիտի անցնի այն բնորոշ ասացուածը՝ Առարանի առանեներից, թէ Բազումք են որ զիիր ոչ գիտեն։ Օտարազգի և հայ հեռաւոր զիտուն բարեկամներիս հրապարակաւ շնորհակալութիւն յայտնելով՝ նրանց գէպի ինձ ու զզած անընդհանուանքների փոխարէն։ Հարկ եմ համարում յիշեցնել, որ մեր հանգամանքներում գտնուող գործիչների համար տոկալն և յարատելը ոչ թէ մի առանձին արժանիք, այլ բարոյական պարտք է և անհրաժեշտութիւն։

#### ԳԱԼՈՒՍ ՏԵՐ ՄԿՐՏՉԵԱՆ

40 Մարտի 1896

Այս հետեւանքին եկան եւ Փետտեր (Հանդ. Ամս. 1894, յունուար) եւ Մատ = Օհանջանի Իշորն Առունե, 1894։ Մեզ համար ճնշուամոզիւ չեն Գուտշմեղի եւ մասամազ Կարիեր Կրկն եւ Կրկն պազումները, որ եթ թէ Խորենացին եւ Մարասաց մինելոյն անօթ լինէին (M. A. Carrière: La Légende d'Abgar dans l'Historie d'Arménie de Moïse de Khoren, եռ. 2):

# ԽՈՐԵՆԵՑՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԵԼՆ

ՈՒՍՈՒՄՆԱԾՈՒԹՅՈՒՆ

## Ա.

Պատմութեան բնագրի թարգմանութեան ենթարկութելը. — Կունդ

Արամազդ. — Ախալ կէտագրութիւն. — Քերականական սխալներ.

Խորենացու պատմութեան գիրքը մեր ամրող զրականութեան մէջ բաշառիկ և արտօնեալ տեղ ունի գրաւած։ Հայկական միտքը երբեք չէ արտայայտուել այնպիսի կորովութեամբ և այնպիսի վայելու արուեստով, ինչպէս այդ եղել է պատմահօր զլուխ—զործոցում։ Աստի հայկական մտքի և ոչ մի արտայայտութիւն չէ զրաւել լուսաւորեալ աշխարհի լուրջ ուշագրութիւնը այն չափով, ինչ չափով այդ բանին արժանացել է Խորենացին։ Բազմաթիւ թարգմանութիւններ զանազան լեզուներով, քննադատութիւններ, թեր և գէմ կարծիքներ, անթիւ ծանօթութիւններ, ուսումնասիրութիւններ և ենթագրութիւններ իրենց նիւթ են ունեցել Խորենացու ամրող երկասիրութիւնը, կամ նորա այս կամ այն հատուածը։

Այսուամենայնիւ, մեր կարծիքով, Խորենացու ուսումնասիրութեան դորձը ոչ միայն գեռ վերջացած չէ, այլ, համարձակութիւն չլինի ասել, գեռ նոր է սկսում։ Խորովանն օգնել այդ մեծ գործին, թէև նուազ և աննշան չափով, ամեն մի գրագիտի բաղձալի է և, կարծեմ, ներելի ցանկութիւն։ Այդցանկութիւնն ես ել ունեցայ և ահա, այժմս, մի շարք միմեանցից անկախ ինքնուրոյն, յօդուածներով կամենում եմ հաղորդել մեր հին մատհնագրութեամբ հետաքրքրուող ընթերցողներին իմ մօտ մի տարուայ ուսումնասիրութեանց արդինկը։

Նախապէս խնդում ենք ընթերցողն նայել այս յօդուածներին իրենց եթե ստուերագրերի (էպիս) վրայ՝ որովհետեւ Խորենացու ուսումնասիրութիւնը ոչ միայն գեր ի վեր է մեր թշլ ուժերից՝ այլ և վաղաժամ։

Խորենացու երկասիրութիւնը լաւ ուսումնասիրուելու համար զեր կարօտ է մեծ նախապատրաստական աշխատութեանց և մանրակրկիտ հետազոտութեանց։ Խորենացու հին ձեռագիրներ մինչև այժմն չեն գտնուել, եղածներն ել ինամբով չեն ուսումնասիրուած։ Առաջինը, ինեւ ու ներկի, ---

Հայն աւիտուր է. իսկ առանց ճիշտ կամ ըստ կարելոյն ճշտուած բնագրի միւս այլ տեսակ բոլոր աշխատասիրութիւնները՝ մեկնութիւն, ստորգարանութիւն, թարգմանութիւն, քննադատութիւն շատ անդամ կորցնում են իրենց ամենահաստատուն չիմքը:

Այս ամառ ես բաղդ ունեցայ պ. 'Նիկ. Մառի \*) հետ միասին համեմատել Խորենացու մի նոր ձեռագիր, բոլորագիր, մագաղաթեայ և անթուական: Այս համեմատութեան հետեանքի և արդիւնքի մասին կը բատարակէ պ. Մառը, իսկ ես կօգտուիմ այս համեմատութիւնից միայն այն դէպքերում: Երբ այդ կարեսը կլինի իմ այս կամ այն ենթադրութեանց կամ կարծիքների հաստատական ապացոյց գտնելու համար:

Բնակչութեան մասնակիութեան հետեւ Մինչեւ այժմս յայտնի էին Խորենացու պատմութեան այս կամ այն բառի զանազան ձևերը՝ որոնցից մէկը կամ միւսը ընտրելի էր համարում: Նայելով թէ որն աւելի հասկանալի էր և համապատասխանում էր ընդհանուր մոքին: Մեր համեմատած նոր ձեռագիրը, որն իւր զրչի անունով կանուանենք «Ներսէս զրչի օրինակ», գրապէս ապացուցանում է մի նոր և անսպասելի երեսոյթ, այն է՝ որ Խորենացու բնակչութեան մասնակիութեան մասնակիութեան մասնակիութեան Այս ծանրակշիռ երեսոյթի չափը և ընդարձակութիւնը գեռ ևս գժուարին է որոշել միմիայն Ներսէս զրչի օրինակով, բայց փաստը մնում է փաստ և որի մասին գաղափար տալու համար մէջ բերենք մի քանի օրինակներ:

**Տպագիր (Տփիսիս 1881).** Կատարել զկամս ցանկութեան նորա և գառնալ մեծաւ դրէւէւ և խաղաղութեամբ ի տեղի իւր Ա. 15.

Ներս զրիչ «Կատարել զկամս ցանկութեան նորա և գառնալ մեծաւ դրէւէւ և խաղաղութեամբ ի տեղի իւր»:

**Տպագ.** «Եւ յէտնաց ըղձալի ինքն և ժամանակ իւր»: (Ա. 24)

2եռագ. «Եւ յէտնաց զկամս ցանկութեան նորա և գառնալ մեծաւ դրէւէւ և խաղաղութեամբ ի տեղի իւր»: (Ա. 25)

Տպագ. «Եւ յէտնաց Ցիգրանայ զկամս ցանկութեան նորա և գառնալ մեծաւ դրէւէւ և խաղաղութեամբ ի տեղի իւր»:

Տպագ. «Եւ յէտնաց Ցիգրանայ զկամս ցանկութեան նորա և գառնալ մեծաւ դրէւէւ և խաղաղութեամբ ի տեղի իւր»: (Ա. 28.)

Տպագ. «Եւ յէտնաց Ցիգրանայ զկամս ցանկութեան նորա և գառնալ մեծաւ դրէւէւ և խաղաղութեամբ ի տեղի իւր»:

Տպագ. «Եւ յէտնաց Ցիգրանայ զկամս ցանկութեան նորա և գառնալ մեծաւ դրէւէւ և խաղաղութեամբ ի տեղի իւր»: (Պ. 6)

Տպագ. «Եւ յէտնաց Ցիգրանայ զկամս ցանկութեան նորա և գառնալ մեծաւ դրէւէւ և խաղաղութեամբ ի տեղի իւր»:

Տպագ. «Եւ յէտնաց Ցիգրանայ զկամս ցանկութեան նորա և գառնալ մեծաւ դրէւէւ և խաղաղութեամբ ի տեղի իւր»: (Պ. 18)

Զեռագ. «Զայսու ժամանակաւ . . . ու շիշի վարձելով իւղաբերէ»

Տպագ. Թողլով զթագաւորութիւնն Պարսից որդւոյ իւրում Արշաւրի,

ու եւ իւրի ժամանէ և ուղայ. (Բ. 24)

Զեռագ. Թողլով. . . . ժաման ուղայ իւրի յայտ»

Տպագ. «Եւ ի մէջ այսպիսեաց խառն երազոց թուեր ինձ կալ ի զե-  
րայ տանեաց իմոց արքունեացս, և զնոյն ինքն վերին երեսս  
յարկացս տեսանել չէ չէցին և բուշույն շատրուանօք զարդա-  
րեալ»: (Ա. 26.)

Զեռագ. «Եւ ի մէջ . . . գեղեցկօք բազմագունիւք զարդարեալ շա-  
դըրուանօք»:

Տպագ. Ուստի և ի քրտան ասուի վահեաւ յինէն փախեաւ յինէն  
քունն»: (Ա. 26.)

Զեռագ. Ուստի և ի քրտան ասուի յայտնուեաւ եւ ուղարկուեաւ ասուն-  
փախեաւ յինէն քունն»:

Դեռ այսպէս կարելի է շարել բազմաթիւ օրինակներ:

Ակներեւ է որ «պարգև», և «պատարագ», «յետնոց», և «զինեացս»,  
«զհարցուածս», և «զհարցունս», յօժարութիւն» և «հաւանութիւն»,  
«առաջնորդ» և գլխապետ: մէկը միւսի թարգմանութիւն են: Եթէ, ինչ-  
պէս ենթադրում ենք, սկզբնական բնագրում եղել է «պատարագօք»,  
յետոյ չէրահանուած թարգմանուել է՝ «պարգևօք»: Բառերի նման և ամ-  
բողջ նախագասութիւններ ենթարկուել են նոյնանման փոփոխութեան —  
թարգմանութեան: Աշակերտաց թէ արդեօք բոլոր ընթերցողների դիւրու-  
թեան համար էր կատարում այս թարգմանութիւնը՝ դեռ ևս կանուխ է  
որոշել: Բայց մի բան անկասկած է մեզ համար, որ այդ թարգմանութիւ-  
նը կատարուել է ուշագրիւց գէպի ուշագրիւց գէպի ուշագրիւց: Մեր  
համոզմունքն է որ սկզբնական ձևն է. «մանկան տղայոյ փոքրկան յոյժ»,  
իսկ թարգմանութիւն է՝ «որ էր փոքրիկ մանուկ և տղայ»:

Նոյնպէս բնագիրն է՝ Աչ զիւրն կարծելով քեռորդի, իսկ թարգմա-  
նութիւն է՝ «չկարծելով ինքնեան քուեր որդի»: Բնագիրն է «զլիսապետ»,  
իսկ թարգմանութիւն է՝ «առաջնորդ»:

Ընդհանրապէս բնագիրը կարելի եղածին չափ ճշտելուն մեծապէս  
նպաստելու է այս նարի հաւանագութեան հանրիս եւ իրողութիւնը գիտենալը: Ա-  
մենամենծ ուշագրութիւն պէտք է գարձնել Խորենացու բոլոր այն բառերի  
և ոճերի վրայ, որոնք ուլրոյն: կամ լաւ ևս ինքնուրօյն գործածութիւն  
ունին: Այս բառերի և ոճերի ուտումնասիրութիւնը միայն կարող է անսխալ  
առաջնորդել մեզ ուղղագոյն ընթերցուածների ընտրողութեան գործում:

Օրինակ, վեր առնենք «բովանդակ» և «բաւական» բառերը։ Խորենացինն օրիուսն էլ գործ է ածում սովորական նշանակութեամբ։ Բայց Խորենացին ունի «բովանդակի» մի աւելի հին, վաղնջական գործածութիւն։ Բոց վանդակ։ սովորաբար նշանակում է՝ համայն, ընդհանուր, ամբողջ։ Բայց Խորենացին ունի և այսպիսի գործածութիւն։ «Եւ վասն այսորիկ այտչափ բովանդակ լիցի ասել» (Ա. 10)։ Այս գեպքում «բովանդակ» նշանակում է բարեկան, assez, довольно. Միանդամ իմանալով բովանդակի այս վաղնջական գործածութիւնը, շատ հատուածների թարգմանութիւնը հեշտանում է։

Հետևալ օրինակում ակներեւ է, որ բարեկան բարեկանութիւնն է, «բովանդակ վարկուցեալ մնացելոց ասհմանացն տիրել» (Պ. 8)։ Բնագրում անշուշտ բովանդակ էր և ոչ բաւական, թէկ երկուսի նշանակութիւն էլ միւնոյն է։ Հ. Խ. Ստեփանէ (աշխարհ. խորեն. ծնթ. 566.) ընտրելի է համարում «բաւական», ընթերցուածը, երեկի միայն այն պատճառով։ որ այս բառն աւելի համարելի է, բայց հասկանալիութիւնը բաւարար պատճառ և հիմունք չէ։ Բովանդակի վաղնջական գործածութեան ահա և այլ օրինակ։ Բայց պատահեն միմեանց առ բաձրաւանդակի միոց բլորով քարագագամնիւ, որ այժմ ասի Ազղոնիայ, և մօտեալք ի միմեանս ձիգ ասպարիզօք միջոցացն, ամրանան երկոքին կողմանքըն բարեկան աւուրս։ (Պ. 4)։ — Կարելի է բերել և ուրիշ օրինակներ, բայց բաւականանք այս չափով։

Թարգմանութեան ենթարկութիւլը մի անօրինակ երեսոյթ չէ մեր գրականութեան մէջ։ Հակառակ ուղղութեամբ՝ ռամկականից գեպի գրաբարը փոփոխութեան օրինակ ունինք արգեն (Տե՛ս Հանդէս Ամսօրեայ, 1890, մայիս, եր. 105. «Պատկեր տարբերութեանց երկուց ձեռագրաց։»)։ Համոզուած եմ որ ապագայ ուսումնասիրութիւնները շատ նորանոր փաստեր պիտի լնձնեսեն մեզ, այս երեսոյթն ապացուցանող։

Առաջ Աւագանութ. «Թարգմանութիւնը» մեծաւ մասամբ վերաբերում է արտաքինին—լեզուին, և ոչ ներբին բովանդակութեանը։ Բայց կարող են պատահել գեպքեր, երբ թարգմանութիւննը սխալ է կատարուած կամ նպատակաւոր է (tendancieux դիտաւորական)։

Այսպիսի գեպքերում սկզբնագիրը վերականգնելու խնդիրը սաստիկ գժուաբանում է և բարգում, և կամ նոյն իսկ, անհնարին գառնում։ Խորենացու այսպիսի մի ասացուած՝ «բաւական լիցի ասացեալս վասն նորա։ կարող է պատահել որ թարգմանական լինի, բայց որի բնագիրը գժուաբ չէ ննթագրել և գտնել, քանի որ ունինք և այսպիսի ասացուած։ Եւ վասն այսորիկ այտչափ բովանդակ լիցի ասել։» Բայց երբ թարգմանութիւնը կամ փոփոխութիւնը նպատակաւոր է, օրինակ, մի հեթանոս

սական ասացուածի տրուած է քրիստոնէական կերպարանք, այսպիսի գեաքում բնագիրը վերականդնելը, կամ ընթերցուածների մէջ ընտրութիւն անելը սաստիկ գժուարանալու է:

Այսպիսի մի նպատակաւոր փոփոխութեան ենթարկուած է մեր կարծիքով Խորհենացու մինչև ցայժմս մթին և անհասկանալի մնացած կտորներից մին, որ է Արամազդի հետեւալ հատուածը:

«Սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան՝ Հայկ, Արամ, Տիգրան. քանզի ըստ իմ՝ քաջաց ազդք քաջքն՝ իսկ միջոցքն՝ որպէս գէպ ումերթուիցի կոչել Բայց ըստ գիւցազնութեանն կարծեաց՝ ճշմարիտ է և ասելս մեր. ոչ Արամազդ ոք, այլ ի կամեցողն լինել Արամազդ, չորից և այլոց անուանելոց Արամազդ, յորոց մի է և Կունդ ոմն Արամազդ. Այսպէս և բաղումք անուանեալ Տիգրաննք, մի է և միայնակ սա ի Հայկազնացուց, որ զԱժգահակ սպան, և զտուն նորա ի գերութիւն վարեաց, և զԱնդյշ մայրն վիշապաց. օժանդակ կամօք և յօժարութեամբ զԿիւրոս ռւնելով, զիշեանութիւնն Մարաց և Պարսից յինքն յափշտակեաց» (Ա. 31):

Այս ամբողջ պարբերութեան մէջ մի բան շատ որոշ է, այդ այն է՝ որ Համեմատուած են միմեանց հետ Արամազդներն ու Տիգրանները, Խնչպէս որ չորս Արամազդից միայն մինն է Կունդ Արամազդ, այսպէս և քաջում. Տիգրաններից մի և միայնակն է Տիգրան Հայկալունը, որ Աժգահակին սպանեց, Անոյշ տիկնոջը գերեց, Մարաց և Պարսից իշխանութիւնները յափշտակեց, Արամազդը և Տիգրան այնպէս սերտ կապուած են բաղդատութեամբ, որ անկարելի է նրանց անջտել, առանց ամբողջ պարբերութիւնն աղճատելու ուստի և սփայլում են ֆրանսիացի թարգմանիչը՝ Լանգլուան, և նորանից առնելով՝ Հ. Ստեփանէն, Արամազդի կտորը համարելով յետոյ ներմուծուած—interpolation, ընդմիջարկութիւն:

Պարբերութեան ընդհանուր միտքը, ըստ մեր կարծեաց, շատ պարզ է. մութն է մնում և անվերածանելի Կունդ բառը, որ գրում են իրեւ յատուկ անուն: Խտալական թարգմանիչը՝ պարսկերէնով մեկնում է կունդը իրեւ «Հզօր, պատերազմասէր». Cund nel persiano val forte bellico \*)։ Էմինն ուզզակի խոստովանում է, որ չէ հասկանում կունդ բառը, որը ոչ մի ուրիշ տեղում չէ հանգիպում: Կունդը իրիւ Հզօր կամ զլիսաւոր. շատ յարմար է գալիս պարբերութեան ընդհանուր մոքին, — Արամազդների մէջ կունդ Արամազդը, ինչպէս Տիգրանների մէջ՝ Տիգրան Հայկալունը:

\*) Mose Corenese. Venezia, 1850 p. 84. n. 1.

Բայց թէ ինչ պարսկական բառից է առնում իտալերէնի թարգմանիչը այդ կունդի մեկնութիւնը, յայտնի չէ, ուստի և կասկածելի, եւ մի թէ Հայոց մեծ Արամազդը, չորս Արամազդներից մեծագոյնը, կրում էր մի այնպիսի մակրիր, ստորոգելի, որ հայերէնում չունէր իւր նշանակութիւնը և այսօր մեղ անհասկանալի է մնում:

Այս մտածութեամբ առաջնորդուած մենք կունդի մէջ տեսնում ենք հայերէն բառ, մինչև այսօր էլ ժողովրդեան մէջ գործածական։ Կունդ նշանակում է մազերը թափուած զլուխ, քալ, քաշալ, ճաղատ, կնդակ։ Կունդ նշանակում է մազերը տակից խուզել, Սրանից է երեկ և կոնդ (բլուր) բառը, իրու բառ, որի մասին մենք խօսելու ենք մի այլ անդամ։ Եղել են և կան կունդ մականուն կրողներ, օրինակ՝ Կունդ Սարգիս վարդապետ, որ զրած է Պուկասու և Յովհաննու աւետարանաց մեկնութիւն, Սարկաւագ վարդապետի աշակերտը։

Բայց կունդ, կնդակ կոչել Արամազդին կարելի էր միայն անարգական մտքով, այնպիսի անարգութիւն, որին չդիմացաւ մինչև անդամ «այրն աստուծոյ» Եղիսէ մարգարէն, և անտառից երկու արջ կանչեց և իրեն կնդակ կոչող մանրիկ մանուկներից քառասուն և երկուսին պատառել տուեց։ (Դ. Թագ. զլ. Բ.)

Կունդի այս բացատրութիւնը հակասում է ամբողջ պարբերութեան մաքին, որի մէջ Արամազդը ոչ միայն չէ անարգուած, այլ համեմատուած է սիրելի հերոսի՝ Տիգրանի հետ։

Այս ակներև հակասութեան գաղտնիքը պէտքէ տեսնել ։ Առաջարկութեան մէջ, որի մասին խօսեցանք վերևում, Արամազդի պատուարեր և մեծարական ստորօգելին կարող էր թարգմանուել անարգական բառով քրիստոնեայ և նեղահայեաց ընդօրինակողից կամ Խորենացի մեկնող վարժապետ — վարդապետից։ Եւ յիրաւի, Ներսէս զրիչը տալիս է մի նոր ընթերցուած, որ լիովին ապացուցանում է մեր այս վարկածը։ «Կունդ ոմն Արամազդի» փոխանակ Ներսիսի օրինակն ունի՝ «կատար ոմն Արամազդ»։ Ներսէս սաստիկ տգէտ զրիչ է, կամ աւելի ճիշտ ասած, նա ոչ թէ ընդօրինակում է, այլ առանց հասկանալու Նիւրու է զրերը, ուստի և անկարող է որև է ինկնուրոյնութեան։ Նա ընդօրինակած է անկասկած, ինչպէս բաղմաթիւ նշաններից երևում է, Երիշ-Երիշ-Երիշ, առանց իւր կողմից որև է փոփոխութիւն անելու Նիւրու-Նիւրու ունենալու։ Այս բոլորը մեղ զրաւական են, որ սկզբնագրում եղել է «կատար» և ոչ թէ «կունդ»։ Եւ կունդն ինչ է, եթէ ոչ կատարի անարգական թարգմանութիւնը։ Խորինացու բարեպաշտ մեկնիչ վարդապետը չէ կամեցել չաստուած Արամազդին անուանել «կատար», զլուխ, ուստի և կոչել է քաշալ—զլուխ, այն է՝ «կունդ», թէեւ այս կամայական փոփո-

Խոռվթեամբ յետագայ սերունդների համար անվերածանելի էր դառնալու մի ամբողջ պարբերութիւն։

Թէ այս տեսակ մի «ժարդմանութիւն» հնարաւոր էր Խորենացու մէջ այդ մենք տեսանք վերևում, ուր ցցց տուինք որ ոչ միայն բառեր, այլ ամբողջ Նախադասութիւններ ենթարկուել են միւնցին զործողութեանը։

Մուում է Խոսել մի փոքրիկ տարրերութեան վրայ։ Ներսէս զրիչն ունի ոչ թէ «կատար ոմն», այլ «կատար ումն»։ և այսպէս հեռու հեռու դրուած։ Աւրեմն և կարելի է կարդալ և «կատար ոմն Արամազդ» և «կատարումն Արամազդ»։

Մի բան միայն ակներեւ է, որ «կունդ ոմն» փոփոխողը կարդացել է «կատար ոմն»։

Բատ մեղ կարող էր լինել և «կատարումն Արամազդ», իբրև «ըրումն», «կատարեալ», այլ և իբրև՝ ինդրուածոց կատարող Արամազդ։ Աստուածածնի մակդիրներ ունինք՝ հաճկատար, կամակատար, խնդրակատար, և այլն և այլն։ Այդ մակդիրները շատ հին են, Շամիրամ աստուածներին անուանում է «հեշտացուցիչք և վահանակ»։ Այս պէս և հետեւեալ հատուածում։ Եւ այս (չար) . . . անկասկած զզլուս ի վերայ ուսոց Իիւրասպեայ դնելով և Խոսելով յականջօն՝ ուսուցաներ զանբարի արուեստըն, զոր յառասպելին մանուկ սատանայի ասեն \*), և սպասաւորելով լինէր վահանակ։ (ի պարսից առասպել. բ. )։

Այսպէս կամ այնպէս. մի բան ակներեւ է, որ «կունդ» «կատարի» թարդմանութիւնն է. Իսկ «կատար ոմն» կամ «կատարումն» կարող էր ունենալ ոչ միայն դիւնքն նշանակութիւն, այլ և մի տեսակ բառախաղ լինել «կամեցողի հետ»։ Ոչ Արամազդ ոք, այլ ի վահանակ լինել Արամազդ, չորից ևս այլոց անուանելոց Արամազդ, յորոց մի է և վահանակ Արամազդ։ \*

\*). «Մանուկ սատանայի» թարդմանիչները վաստ են թարդմանել. «Թարդի սատանայի». Сынъ диавола, il figliuolo di satana, le fils de satan այս. «Մանուկ» մասին մի ուրիշ անդամ։

\*\*) Այս հասուածն էլ բոլոր թարդմանիչները շատ վաստ են թարդմանել. Դնենք նորագոյն աշխարհաբար թարդմանութիւնը։

Զեայ ոչ ինչ Արամազդ, բոլոր Արամազդ լինել կամեցողների համար ուրիշ չորս անուանեալ Արամազդներ կան, որոնցից մին է կունդ. Արամազդ։

Մինչդեռ, ըստ մեղ պէտք է թարդմանել այսպէս։

Արամազդ, կայ միայն կամեցողների համար եւ չորս (այլ եւ այլ) Արամազդների մէկն է միայն կունդ. (կատար)Արամազդ։

Թարդմանիչների սխալներն ուղղելը շատ ժամանեակ կիւլք սեղանից եւ յօդուածը կերպարացներ, ուստի եւ այդ զանց արինք։

Աւագրի թարգմանութեան ենթարկուելու ծանրակշիռ իրողութիւնը

հնագրի թարգմանութեան ենթարկուելու ծանրակշիռ իրողութիւնը հաւաստելուց յետոյ չենք կարող առանց ուշադրութեան թողնել այն աղաւաղումները, որոնք սպրոցել են բնագրի մէջ սխալ կէտադրութիւնից աւելորդ նախդիրներից. Մեզ յաջողուց ուղղել հետևեալ աղճառում և աւելորդ նախդիրներից. Մեզ յաջողուց ուղղել հետևեալ աղճառում և ները. Տպագիր. Եւ զի՞նչ լինիցի այն, եթէ ոչ նախ ինձ մեռանել և ապա լինել Զ-Շ-Ն-Հ-Ի ի վերայ Արեաց, և զաստուածուհեաց ունել զտեղի. Բայց արդ ընտրելի է քեզ այժմ չ՛ յայսցանէ կամ լինել եղայրասէր և կործանումն խայտառակելի յանդիման Արեաց յանձն առնուլ, և կամ զանձին իմանալով զբարի՝ խորհուրդ օդտակար ի մէջ բերել և յաղագ առաջիկայիցն չոգալ. (Ա. 29).

Այս պարբերութեան մէջ պարզ է որ երկու անուն—բայի կայ հայցական հոլովալ, ընդգէմ քերականական տարրական կանոնների. Եւ երսէս զրիչը տալիս է ուղիղ ընթերցուած. Եւ զի՞նչ լինիցի այս, եթէ ոչ նախ ինձ մեռանել և ապա լինել Զ-Շ-Ն-Հ-Ի ի վերայ Արեաց, և զաստուածուհեաց ունել զտեղի. Բայց արդ ընտրելի է քեզ այժմ չ՛ յայսցանէ կամ լինել եղայրասէր և կործանում. . . ևայն ևայն.

Աւելորդ զայ նախդիրը ներս սպրոցած պէտքէ լինի Զ-Շ-Ն-Հ-Ի սկզբնագիր զայի պատճառով. Հին ձեռագրերում տողադարձը կատարւում է ոչ վանկերի տրոյմամբ, այլ տառերի. Մի գիր անգամ կարող է տողի վերջում մնալ, և բառի Յ-Նացած գրերը կարող էին անցնել միւս տողը. Բաւական էր որ անուշադիր գրիչը Զ-արուհու զան կրկներ, գրելով այդ տառը մի անգամ տողի վերջում և նոյնը կրկնելով հետևեալ տողի սկզբում և կտացուեր, զԶ-արուհի, իսկ սրա և չաստուածուհեաց բառի հետևութեամբ աւելացրած է և նոր զայ Դ-ի վրայ:

Խորենացու մէջ բաւական շատ տեղեր հանդիպում ենք այնպիսի քերականական խորթութեանց և բացառութեանց, որոնք բացատրելու համար ուղիղ ձանապարհն է ամեն ջանք գործ գնել Բ-Ն-Շ-Շ-Շ Ք-Շ-Ա-Ն-Հ-Ն-Ե և ոչ թէ ստեղծել քերականական բացառիկ կանոներ այս կամ այն խորթութիւնը, շատ անգամ առաջ եկած զրչի սխալից, ոչ միայն մեկնելու, արդարացնելու, այլ և այդ վրիփակները սրբագործելու համար:

Աչա և երկու պարբերութիւն աղաւաղուած սխալ կէտադրութեամբ. Տպագիր. Յարդարեալ զամենայն կարգեցից քեզ ի զիրս յայսոսիկ զաղդիս մերս զաւագագոյն զարս և զնախնիս, որ ինչ վասն սոցա զրայցը և իրակութիւնք, ոչինչ կամամտածական և ոչինչ անպատշաճ ի սմայարմարելով բան, այլ որ ինչ ի զրոց. իսկ ըստ նմանեացն ապա և որ ինչ ի բանից արանց իմաստնոց և յայսոսիկ քաջախոհակաց, յորոց մեք արդարապէս ջանացաք հաւաքել զհնագրութիւնս» (Ա. 19).

Տպագիր. «Իսկ որ ինչ զինի մաշուանն Խոսրովու մինչև ցթագաւորութիւնն Տրդատայ ի ժամանակա անիշխանութեանն պատմէ, սայդ համարելով երկրորդեմ համառօտ բանիւք»: Բայց որ ինչ և ի թագաւորութեանն Տրդատայ և յետ նորա, ոչ հեղգութեամբ և անզգուշաբար վրիպեալ և ոչ կամաւոր միսալանօք ի սմա յարմարեալ բան, այլ որ ինչ ի իշխատակաց դիւնագիր մատենիցն Յունաց: Իսկ ըստ նմանեացն ապա և որ ինչ ի համբաւուց արանց իմաստնոց և հնախօս սիրաբանից ստուգապէս տեղեկացեալ արդարաբար քեզ զրուցեցաք» (Բ. 75):

Հնմերցողների խորին ուշագրութիւնն ենք հրափրում այս երկու հատուածի վերջին պարբերութեանց վրայ, որոնք սկսում են «իսկ ըստ նմանեացն» բառերով: «Իսկ»—ով սկսուած պարբերութիւնները չեն վեճութեամբ, թերի են երեսւմ, նրանց պակասում է բայց: Բայց թերի համարել այդ պարբերութիւնները շատ գժուար են, քանի որ երբեմն եւ դուրս եւ եւ եւ, անջատուած լինելով միմեանցից 89ը գլխով: Մանաւանդ որ երկրորդ օրինակի վերջին պարբերութիւնը է մրանգամայն և գլխի վերջը:

Երկու հատուածն էլ միտաւեսակ կը սրբագրուին, նրանց թերութիւնը կանչեանայ: Արայուցիչ բայի կարօտութիւն չի զգացուիլ այլ ևս, եթէ կէտերը տեղափոխներ այսպէս՝ դնելով «իսկ»-ի առաջի միջակէտը և վերջակէտը «իսկ»-ից յետոյ: «ոչինչ կամամտածական և ոչինչ անպատշաճ ի սմա յարմարելով բան, ոչ ո՛չ ինչ է չըստ ինչ: Ըստ նմանեացն ապա և որ ինչ ի բանից արանց իմաստնոց . . . . :

— Ոչ կամաւոր միսալանօք ի սմա յարմարեալ բան, ոչ ո՛չ ինչ է չըստ ինչ: Դիւնագիր Յունացն Յունացն էն: Ըստ նմանեացն ապա և որ ինչ ի համբաւուց արանց իմաստնոց և հնախօս սիրաբանից ստուգապէս տեղեկացեալ արդարաբար քեզ զրուցեցաք»:

Այս կոպիտ վրիպակները ծագել են «իսկ» բառի երկու նշանակութեանց շփոթութիւնից և այսուափ երկար գարերով գիմացել են բազմաթիւ ընդօրինակողների, հրատարակիչների, համեմատողների, թարգմանիչների, քննադատների փորձիչ և հետախուզող ակնարկներին: «Իսկ» փոխանակ հասկացուելու «բուն» մաքով այն է՝ «բուն գրեթից», կամ ինչուն մատեաններից», հասկացուել է իրեւ «բայց», որով և կէտադրութիւնը շեղուել է և ամբողջ պարբերութիւնը:

«Իսկ»ի սխալ ըմբռնումից առաջացած նմանօրինակ մի սխալ կայ և առաջին գիրք՝ առաջին գլխում, բայց այդ արդէն ուղղուած է Վենետիկի 1881 - ի Խորենացու հրատարակութեան մէջ:



F.

Անդրագաղթութիւն. — Անտրիի թարգմանութեան հնդարկաւիլն ապացուցանող նոր օրինակներ. — Թարգմանութեան հաւասակածն պատճառը. — Մի նոր օրինակ նպատակաւոր թարգմանութեան. — Բնդմիջարկութիւններ խորհնոցու բնագրում. գորդի. լանուն և դասից. — Պակասաւոր և խեղաթիւրուած բառեր. — Հումանաւոցներ:

Առաջին յօլուածում ցոյց տուինք Խորենացու Պատմութեան «Թարգմանութեան». Ենթարկուիլը. մի քանի օրինակներ բերելով ներսէս գրչի և տպագրի այլ և այլ ընթերցուածներից. Բայց որովհետեւ այդ մէջ բերուած օրինակները կարող են անբաւարար համարուիլ մի այնպիսի ծանրակըշին երեւյթ ապացուցանելու համար. որպիսին է «Թարգմանութիւնը», ուստի և աւելորդ չենք համարում նորից ընթերցուածների օրինակներ բերել. նոյն երեսոյին ապացուցանող:

«Թարգմանութեան» բազմաթիւ օրինակներ կան մինչև այժմն յայտնի եղած և բաղդատուած Խորենացու ձեռագիրներում, բայց որովհետեւ մեր նպատակը չէ այստեղ՝ բոլոր այդ թարգմանական ընթերցուածները ժողովել ուստի և բաւականանենք մի քանի օրինակներ էլ բերելով միայն Կարինեանցի Բաղդատութիւնից, (այսպէս անուանեալ՝ Ներսէս Ամբրոնացու օրինակից): Նետեևալ յառաջ բերուած օրինակները միմիայն առաջն գրքից են: զԼուիների շարակարգութեանց համեմատ գասաւորուած:

«ԱԵՀազոյն — բարձրագոյն», «պիտանաւոր — պիտանազոյն», «զՈյդ հոգեորացն բարբառին բանից — զոյդ հոգեորացն մի արանին բանից», «ի ժամանակագրաց — ի պատմագրաց», «ի վիպագրացն — ի վիպասանիցն», «մինչև ցայժմ — մինչև ցայսօր ժամանակի», «անշարժ իւրոյ թագաւորութեանն լինել — անշարժ իւրոյ թագաւորութեանն մնալ», «խրիստոացեալ — հպարտացեալ», «յերկիր անկանի ոլաքն — յերկիր հարստի սլաքն», «բովանդակ — բաւական», «հնդիւր հազարովք — հինգ հազար», «երկու հազարօք — երկու հազար», «բազում — ամբաւ», «ի գիւտական մրցական տոփանացն — ի գիւտական պակշոտութենէն», «խրախնձանալ — զուարձանալ», «փախ և աւ ի մէնջ պատահումն — է անցի մէնջ պատահումն», «սքանչելիք — գեղեցիկը», «և ոչը զնուաստ առ առ արհամարհեր — և ոչ զստ ու կան արհամարհեր», «որպիսի — զինչպիսի», «ոչ յամել — ոչ մնաց կամ մնայ», «զարգարեալ — յօրինեալ», «արձոյ ի մն սլացման թեռվք — արձուան ման սլացեալ թեռվք», «գանձիւք — ընչիւք», «հիւմն . . . հեղուսնելով բանս — . . . հուլու

վելու վրանու անբանութեան — ամրաստանութեան ։ անբանութեան  
— այլարանութեան ։ և այլն, և այլն։

Անշուշտ պիտ բոլոր օրինակները միատեսակ արժեք չունին ։ թարգմա-  
նութիւն ապացուցանելու համար ։ Հնդիւք հազարովք և հինգ հազար  
լնմերցուածները կարող են չլինել թարգմանութիւն ։ գիտակցութեամբ  
կատարուած այլ ակամայ ։ Այդ բառերը կարող էին գրաւած լինել իրեւ  
թիւ և տառերով և զանազան ձևով կարգացուած ։ Կան և օրինակներ ։ ո-  
րոնք կամաւոր թարգմանութիւն չեն, այլ կարող են ծագած լինել երկու  
բառի արտաքին նմանութիւնից, ինչպէս զոր օրինակ՝ «յարմարելով»—«օ-  
րինելով», «գիտացուք»—«տեսուք», «գիտել»—«տանել» և այլն, և այլն։  
Բայց իմ կարծիքով ոչ մի կասկած չէ կարելի յարուցանել այն բանի մա-  
սին, որ «վեհագոյն և բարձրագոյն» թարգմանութիւն է այսպէս և «ան-  
կանի ։ հարստի», «խրոխտացեալ»—«հպարտացեալ», «խրախճանալ»—  
զուարձանալ, փախեաւ — էանց, «նուաստ» — «ստուկ», «յամէ» — «ը-  
նայ» և այլն և այլն։

Այսպիսով ուրեմն աներկրայելի է որ Խորենացու Պատմութեան բնա-  
գի բազմաթիւ բառեր, նաև ոճեր ու գարձուածներ, ենթարկուել են  
թարգմանութեան։

Այս երեսյթի ամենահաւանական քացատրութիւնն այն է, որ Խորե-  
նացու Պատմութիւնը՝ ինչպէս նաև նրա անուամբ յայտնի՝ Աշխարհա-  
գրութիւնը գասակիքը են եղել։ Աարժապետի տուած քացատրութիւն-  
ները նշանակուել են աշակերտներից լուսանցքում կամ բնագրի մէջ և  
վերջին ընդօրինակողներից ընդունուել են իրեւ սրբագրութիւն։ Այս-  
պիսով բնագիքը ենթարկուել է անհամար փափոխութեանց և շատ անդամ  
այլանդակուել։ Այս էլ պէտք է աւելացնել որ մեր միտքն այն չէ, որ  
բոլոր ընթերցուածների տարրերութիւնները վերագրենք թարգմանու-  
թեան, քան լիցի։

Այսուածում տեսանք, որ թարգմանութիւնը կարող է լինել եր-  
բեմն և նպատակաւոր, ինչպէս էր օրինակ՝ Արամազդի տիտղոսներից  
«Առնդ ։ կատարը» \*)

\* Այսիէթի Արամազդը Խորենացու կոչում է «ամբողուային»։ Անու Արա-  
մազդը հաւանականաբար կրում էր նաև «Աղիմագեան» մակղիքը, որի պատճո-  
ւով եւ ինչպէս կարծում է մի բանասէր, Աւզիւս էր կոչում Հանու քրմերից  
մին, մեհենական պատմութեանց գորզը։ Մեր պատմութեան մէջ յիշում է եւ մի  
ոյլ Արամազդ ։ ատակւրականի Անձեւացեաց գաւառում։ Պազատ էերան վրայ,  
ո կունդ ։ բառը իբրեւ ճազատ գործ է ածում եւ Սիւնեաց և ովհակապար էլ-  
միանի Աղբում։

Այսպիսի մի նպատակաւոր թարգմանութեան՝ կամ լաւ ևս ասել, փոփոխութեան օրինակ կարելի է համարել Խորենացու և Հետեւեալ կտորը. «Թէ ընդէր չ ա կ առ ա կ Հոգւոյն անմիաբանեց ան այլքն ի պատմագրաց, զիւլուսուեայ ասեմ, զիւղմավիպէն և զԱրիւգենայ» (Ա. 4). Կարծում եմ որ սկզբնագրում այս հատուածը պէտք է լիներ այսպէս. «Թէ ընդէր հակառակ Հոգւոյն միաբանեց ան այլքն ի պատմագրաց, զիւլուսուեայ ասեմ, զիւղմավիպէն և զԱրիւգենայ». Բայց որովհետեւ այդ միաբանութիւնը հակառակ Հոգւոյն Սրբոյ է, ուստի և բարեպաշտ սրբազրողը միաբանեցանը գարձրել է անմիաբանեցան, ինչպէս որ Կատար Արամազդը—Առողջ Արամազդ:

Խորենացու Պատմութեան բնագրի կրած փոփոխութիւնները չեն սահմանափակում անշուշտ մինչև այժմն յիշուած. «Թարգմանութեամբ», աղջատումներով՝ կէտագրական սխալներով՝ յատուկ և հասարակ անունների շփոթմամբ, և այլն, և լն:

Այդ բնագրին ենթարկուել է անկասկած նաև յապատումների և յաւելու ածների. Յապատման օրինակներ շատ կան ձեռագիրներում, որոնցից մի քանիսը սպազել են և տպագրի մէջ. Ա. զիրք, զլուխ 5, Հայկից մինչև Արայ հայ հայապետների ցանկի մէջ պակասում է Հայկի անունը, որով Արմենակը գառնում է Բէլի հակառակորդը և նրան սպանողը, որ և յայտնի հակառութիւն է: — «Նոյնպէս և զմերն ի Հայկայ մինչև ցԱրայն գեղեցիկ, զոր սպան կաթոսն Շամիրամ», թռւէ այսպէս. Արայն գեղեցիկ՝ Արամեայ, Հարմեայ, Գեղամեայ, Ամասեայ, Արամափսեայ, Արամենակայ, (Հայկայ), որ եզեւ հակառակ Բէլայ միանգամայն և կենախուզ: Այս բանում անշուշտ Խորենացին մեղաւոր չէ, հակառութիւնը ծագում է բնագրի աղաւազումից:

Այսպիսի յապատման օրինակ կարելի է համարել, ըստ մեզ, նաև Ա. զիրք, զլ. 18. Հետեւեալ հատուածը. «զի ասէ ի բանից այլոց նախ յաղագս ծննդեանն Շամիրամայ, և ապա ուրեմն զպատերազմն Հնդկաց»: Այս կրծառ հատուածի փոխանակ Կարինեանցի բաղդատած ձեռագիրը տալիս է աւելի լրիւ և, ըստ մեզ, աւելի հարազատ ընթերցուած. «զի ասէ ի (բանից) բազմաց այլոց նախ յաղագս ծննդեանն Շամիրամայ, և

«Տեսին ի նմա զարքոյուշին

• \* • \* •  
Զանձամբը արկեալ զքուրէ խաւարին,

Հերքըն ճողեալ, սրպէս կը ն գին,

Ատիքն ցամուք զերդ սկընդկին և,

ապատերազմ՝ Շամիրամայ ընդ Զրադաշտի, և զյաղթին առէ Շամիրամայ, և ապա ու բեմ զպատերազմն Հնդկաց։ Եւ ապա ուրեմն ասացուածը բաւական ապացոյց է վերջին ընդարձակագոյն հատուածի հարազատութեանը։

Ինչպէս յապատման, նյոյնպէս և յաւելուածի շատ օրինակներ կարելի է բերել։ Ակներեւ է որ այժմեան տպագրի դիրք Բ. գլ. 8-ի վերնագիրը։ Երկրորդ թագաւորութեան լինել ի զաւակէ Աշգահակայ Մարաց թագաւորին։ յետոյ և աւելացրած, քանի որ այդ ութերորդ գլուխը սկզբնագրում եօթներորդի մասն էր և չէր կազմում առանձին գլուխ։ Այսպէս է նաև ներսէս գրչի օրինակում։ Այսպէս՝ յաւելուած է մեր կարծիքով և «Ակիզըն մատենին» վերնագիրը հետեւալ հատուածում։

«Եւ խուզեալ սորա զամենայն մատեանսն, գտանէ մատեան մի հելլեն գրով։ յորյ վերայ էր, ասէ, վերնագիրն այսպիսին։ (Ակիզըն մատենին) Այս մատեան հրամանաւ Ազեքսանդրի ի Քաղդէտցւոց բարբառոյ փախեալ ի յոյնն, որ ունի զրուն հնոց և զնախնեացն բանս։ Փակագծի մէջ զրուած երկու բառը երեւի ընդօրինակողից զրուած է եղել նախապէս լուսանցքում Մարիբասի մատենի սկիզբը ցոյց տալու համար և յետոյ ներմուծուել է բնագրի մէջ, ինչպէս որ է այժմն տպագիրներում։ Այս երկու բառը պակասում են նաև ներսէս գրչի օրինակում։

Յապաւումների և յաւելուածների մեր այս մէջ բերած օրինակները յայտնի էին արդէն մեծ մասամբ, թէև անուշագիր թողուած Խորենացու բնագիրն հրատարակողներից։ Այս բոլորը ցոյց են տալիս որ մեր այժմեան ունեցած բնագրիը կարող է ճշտութեան և կատարելութեան կողմից շատ թերի լինել։ Եօթը ձայնաւոր գրերի յաւելուածը Գ. գիրք, 53 գլխում, որ մինչեւ այսօր էլ գուրս չէ ճգուած բնագրից, յայտնի է թէ որչափ շփոթութեանց պատճառ գարձաւ։ Այդ ձայնաւորների ընդմիջարկութիւնը չկայ նաև ներսէս գրչի օրինակում։

Բայց այս բոլոր ընդմիջարկութիւնները շատ աննշան են, համեմատած այն յաւելուածին, որ մենք ենթագրում ենք թէ եղած է Խորենացու երկասիրութեան մէջ, զիրք Ա. գլ. 6. Մէջ բերենք ամբողջ պարբերութիւնը.

Բայց պարտ է մեր զումանց անգիր հին զրոյցա, որ պատմեալ եղեն վաղ ուրեմն ի մէջ իմաստնոցն յունաց, և հայի Անշ է Դշ այսաւ ի գործի և ի բառաւ առան իսլեցեց, և երբուր առ գործի, թէպէտ և յոյժ սակաւուք՝ երկրորդել։ Յորոց մի ոմն ի նոցանէ վարժեալ փիլիսոփայութեամբ, ասէր այսպէս, թէ Ալ ծերք, յորժամ էի ի մէջ յունաց զիմաստութիւն վարժելով, գէպ եղեւ ի միում աւուրց՝ զի վասն աշխարհա-

զրութեանց և բաժանմանց ազդաց ի մէջ արանց իմաստնոց և հմտագունից բան ճառիւր. ովանք այլազգաբար և ոմանք այլարանաբար զբայց մատենից տային. իսկ որ կատարելագոյնն էր ի նոսա. Ալիմպիոդորոս անուն այսպէս ասաց. Պատմեցից ձեզ ելն. և լ.

Այս պարբերութեան գծուած տողերը մենք Խորենացունը չենք համարում. Գորդի. Բանան և Դաւիթ ոչ թէ փիլիսոփաների անուններ են, ինչպէս կարծուել է մինչև այժմ. այլ եօթներորդ գարից սկսեալ և այս Տարօնի ժողովրդական հերոսներ են:

Դուրս հանելով բնագրից այդ կասկածելի տողերը՝ պարբերութիւնը կստանայ հետեւեալ ձեւը. « Բայց պարտ է մեզ զոմանց անգիր հին զրցյաց, որ պատմեալ եղին վայ ուրեմն ի մէջ իմաստնոցն Յունաց. թէպէտ և յոյժ սակաւուք՝ երկրորդել. Յորոց մի ոմն ի նոցանէ վարժեալ փիլիսոփայութեամբ ելն. ». Այս զրցյաները, որոնց մասին խօսում է Խորենացին, վերաբերում էին Տարօնին և Սիմ լերան. Արտագրողներից մէկը, որ գուցէ Տարօնեցի էր և տեղեակ այդ երկրի անհատնում զրցյաներին, աւելացրեց լուսանցքում իւր գիտեցածը՝ « Եւ հասին մինչև ի մեզ այս զրցյաց ի Գորդի և ի Բանան անուն կոչեցեալս. ևս յերրորդ ոմն Դաւիթ. Իրանից յետոյ եկող ընդօրինակողներից մին մացրած կլինի այս յաւելուածը բնագրի մէջ և կարելի եղածին շափ համաձայնեցրած և կապակցած պարբերութեան ամրողջութեան հետ. Սակայն այսուամենայնիւ անկապութիւնը ակներեւ է. այդ երեսումէ մանաւանդ. այս զրուցք աւելորդ կրկնութիւնից:

Կարող են մեզ առարկել. թէ այս տեսակ յաւելուած կարող էր լինել Խորենացու մի օրինակի մէջ միայն. մինչդեռ մեզ հասած բոլոր օրինակներումն էլ այս հատուածը ամբողջութեամբ կայ բնագրի մէջ. — Բայց այս գեռ չէ ապացուցանում, որ երբ և իցե չպիտի գտնուի աւելի հարազատ օրինակ, որ ազատ լինի այս ներմուծութիւնից, այս ընդմիջարկութիւնից:

Այս էլ կայ, որ ընդօրինակողները սովորաբար « պակասաւոր » համարուած « օրինակները լրացնում էին աւելի կատարեալ », « Հարուստ » օրինակներից, այնպէս որ յաւելուածները մեծ հնարականութիւն կամ հնարաւորութիւն ( chance ) ունեին բնագրի մէջ մտնելու.

Մեր այս ենթագրութեան ապացոյց է ներմուծուած հատուածի անհարթ լիզուն և նորա անկապութիւնը պարբերութեան ամրողջութեան հետ. Պարբերութիւնը առանց այս ներմուծութեան աւելի կապակցեալ, կոկ և ամրողջ է թւում. Գորդի. Բանան. և Դաւիթ փիլիսոփաներ չեն գտնուել մինչև ցայսօր, չնայելով մանրամասն խօսզարկութեանց և զանազան ենթագրութեանց. Գորդին համեմատուել է մի ոմն « Գորդիաս Աթենացու »

հետ: որ մի անգամ է միայն յիշում իրեւ ապրած ք. օ. կ00 տարի առաջ: (Կտալ. թարգ. և Collection T. I. p. 388. n. 3):

Տարօնի պատմական դիցազնական վէպը ամենալնդարձակն է երեսում մեր հայրենիքի վիպասանութեանց մէջ: Քիւզանդի պատմութիւնը պարունակում է իւր մէջ այդ վիպագրութեան մի մեծ մասը: Յովհան Մամիկոննի և Զենորի պատմութիւնները նմանապէս լրացուցիչ մասն են Տարօնի և շրջակայ երկիրների ժողովրդական դիցազներգութեան: Ալրուանձտեանի և Արեգեանի նոր ժամանակներս դրի առած Սասունցի Քաւիթը: և «Քաւիթ» և Մշերը: այդ պատմական վէպի շարունակութիւնն են: Բայց Խորենացին պահպանել է աւելի հին յիշատակութիւն այդ վիպական պատմութեան: առնելով հայկական և թերեւ յունական (Ոլիմփոսդոր փիլիսոփայ) անդիր զրոյցներից:

Գորդիի, Բանանի և Քաւիթի անունները աւելացնող գրիչը կամեցել է բացատրել Խորենացու ակնարկութիւնները. այս երեք անունն էլ մեզ անհասկանալի կը մնային, իմէ չունենայինք Սրուանձտեանի և Արեգեանի ժողովածուները: Գորդին ժողովրդական դիցազներգութեան Ցռան Աէրգոյ կամ Ցռ Վէգին է, Բանանը—Հէնով Օհանն է կամ Ցռնանը: իսկ Քաւիթը—Թուլան կամ Թլոր Քաւիթն է: Թէև ժողովրդական վէպն իւր ամրողութեամբ մեզ յայտնի չէ գեռ ես, բայց յայտնի եղած մասումն էլ արգէն գտնում ենք համեմատութեան բաւարար նիւթ: Աւշագրութեան արժանի է և այն: որ ժողովրդական վէպի միջում: Գորդին, Բանանը և Քաւիթը ճիշտ նոյն կարգովն են յիշւում: ինչպէս և Խորենացու յաւելուածի—ընդմիջարկութեան մէջ: Քաւիթն ամենից փարոն է: Վէրգոն ընտանեաց տէր է: Ցովհանը կամ Ցռնանը անդաւակ: այս վերջին երկուսը Քաւիթի հօրեղբայրներն են: Ընտանեաց մէջ աւագն է Վէրգոն կամ Գորդին: իսկ կրտսերը— Քաւիթը:

Աւշագրութեամբ քննելով՝ այս ժողովրդական դիցազների հետքը կարելի է գտնել թերեւ և մեր հին մատենագրութեան մէջ: Գորդ կամ Գորդի անունը յիշւում է Ցովհան Մամիկոննի պատմութեան մէջ: Գորդ Շատախոս: «Եշխան Արջուց կողմանն: որ կոչեաց զանուն գաւառին իւրում՝ Շատախ: վասն աւելի անուան իւրում: (եր. 54): Բանանը կարող է լինել Ցովհան Խութեցին: որ բազմաթիւ քաջագործութիւններից յետոյ նահատակուեց Բուղայից թ: դարի կիսում:

«Թարգմանութեան և ընդմիջարկութեան խնդիրներից թէև պակաս նշանաւոր: բայց այսուամենայնիւ շատ հետաքրքրական են Խորենացու պակասաւոր: կամ՝ կիսատ: բառերը, թէև սրանց թիւր շատ մեծ չէ լինելու: Այսպիսի բառերի օրինակներ յայտնի են եղել մինչև ցայժմն միայն մի քանի հատ: որոնցից յիշենք մի քանի նշանաւորները: Անու-

շատանի պատմութեան մէջ կայ հետեւեալ հատուածը. «Սօս անուանիւր քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիսն Արամանեկայ, որ Արամա- ւիր զորոց զսաղարթուցն սօսափիւն, ըստ հանդարտ և կամ սաստիկ շնչելոյ օգոյն և թռուստ շարժումն, սովորեցան ի հմայս աշխարհիս հայկազանց, և զայս բազում ժամանակս» (Ա. 20):

Այս հատուածի «եեթուստ» —ը Վենետիկի 1881-ի հրատարակութիւ- նը գեղեցիկ կերպով սրբագրում է՝ «եեթ սստոց շարժումն», որ հարկաւ հիմնուած պէտք է լինի որեւ է նոր և աւելի հարազատ ընթերցուածի վրայ: Հ. Ալիշան (Այրարատ, եր. 151, ձ. 3.) առաջարկում է «եե- թուստը» կարդալ — «եթաւ սստոց» \*): Այսպէս կամ այնպէս «սստոց» բառից մնացել է բազմաթիւ ձեռագիրներում միայն առաջին վանկը՝ ուստ կամ սստ: Մի այլ օրինակ. «Քանզի Լազիկա, Պոնդոս, Փոխողիա, Մաժաք և այլք, ոչ գիտելով զհամ պատերազմին Երշակայ, առ Մա- կեդոնացւոց պետութիւնն զմիաբանութիւն գաշանցն հաստատուն պա- չէին» (Բ. 4): Զ.համ պակասաւոր բառը Հ. Խ. Ստեփանէ, (Ճանօթ. 200.) ըստ Կարինեանցի օրինակին: յաջողապէս ուղղում է՝ «զհամ- բաւ: Այս գեպքումն էլ զհամբաւ բառից պահպանուել էր միմիայն առաջին վանկը՝ զ ա մ»:

Աւրիշ օրինակ. «Գեղեցիկ զայս քեզ հարեւալ ի փառս և անջան հեշտութիւն»: (Ա. 3.): «Հարեւալ ի փառս» անսովոր և խորթ ոճը Լամբրոնացու օրինակն ուղղում է շատ յաջող կերպով «համարեալ ի փառս և անջան հեշտութիւն»: Այս ուղղագրութիւնը արդէն մտել է Վենետիկի 1881-ի հրատարակութեան մէջ: Այս գեպքում «համարեալի» միջին ամ վանկն է գուրս ընկել: Եւ գեռ կարելի է այսպիսի մի քանի օրինակներ էլ շարեւ բայց անցնինք մեր ասելիքին:

Այս բոլոր օրինակները ցոյց են տալիս որ «պակասաւոր» և խեղաթիւ- րուած բառերը այնչափ էլ սակաւաթիւ և հազուագիւտ շնչն մեր այժ- մեան ունեցած բնագրում: Երկու այսպիսի խեղաթիւրուած բառերի վրայ կամենում եմ «Հաւակրել ընթերցողի լուրջ ուշագրութիւնը». Ահա օրի- նակները. 1. «Հաւառակ Հոգւցին խորհել միաբանեցան (անմիաբանեցան) այլքն ի պատմագրաց, զի՞ւռոսեայ \*\*) ասեմ, զբազմավիպէն և զԱրիւգե-

\*) Հ. Ալիշանի այս վարկանշը յիշեցնում է մեզ Ակաթանգեղոսի հետեւեալ հա- տուածը. «Իբրիւ եկն եմուտ ի խորան մնդք եւ յինթրիս բազմացաւ. Եւ իբրիւ ընդ գինսի մտին, հրաման ետ թագաւորն Դիմիքորի՝ զի պատկս եւ թաւ ս ս ա տառոց նուէրս տարցի բագնին Անտառական ողատկերին»:

\*\*) Այս «զի՞ւռառուեայ» բառի փոխանակ տպագիր կրոհնացիներն ունին թե ո ա տ ընթերցուած. «զ թ ի և ո ո ա տաեմ. զբազմավիպէն եւ զԱրիւգենաց».

նայ. կամ զնոյն ինքն զնաւակառուցեն և զայլոց նահապետացն. ոչ միայն վասն անուանց և ժամանակաց. այլ (և) վասն ոչ սկիզբն զառ ի մէնջ չաւ ացն կարգելոյ ազգի մարդկան. (Ա. 4). — 2. «Բայց ես այժմ ուրախացայց հաւ առնելը պառաջիկայից իմոց բանից ի սիրելոյն իմմէ և քան զշատս յարդարախօսէ. ի Բիւռոսեանն Սիրիղեայ». (Ա. 6.). Հիմնուած զլիսաւորապէս Խորենացու այս երկու վկայութեան վրայ նոր հայկազեան բառդիբը ընդունել է իւր բառերի շարքում այս հաւ բառը. իրբեւ «ծագ հնութեան սկիզբն» նշանակող և անտեղի կերպով նոյնացրել է «հաւակ» շատ քիչ գործածական բառի հետ. որ նշանակում է՝ պատճառ. սկզբնապատճառ. Յայտնի է որ հաւ նշանակում է նախահայր, պապ, բայց ոչ երբէք սկիզբն. Մանաւանդ որ առաջին օրինակում սկիզբն բառն էլ գտնուում է հաւ ացն-ի հետ միասին. «ոչ սկիզբն զառ ի մէնջ հաւ ացն կարգելոյ ազգի մարդկան». Մեր կարծիքն այս է. հաստի ուշու է իւրի հաստի և հաստի. Ինչպէս որ համարեալը ինչպէս տեսանք վերևում, մի վանկի յապաւմամբ գարձել է հարեալ այսպէս էլ համբաւը, ամբ վանկի դուրս ընկնելովը գարձել է հաւ և համբաւաւացն — հաւ ացն. Երկու գեպքումն էլ խօսքը Բիւռոսի տեղեկութեանց. կամ Խորենացու բառով ասելով. համբաւների մասին է. «Բայց ես այժմ ուրախացայց, ասում է Խորենացին. համբաւ և առնելով առաջիկայից իմոց բանից ի սիրելոյն իմմէ և քան զշատս յարդարախօսէ. ի Բիւռոսեանն Սիրիղեայ». Մնումէ մեզ ցցց տալ որ Խորենացին սովորութիւն ունէր ուրիշ մատենագիրներից ոչ անմիջապէս տեղեկութիւնները կոչել համբաւ. հայդ բանին վկայութիւն. Ոչ կամաւոր սխալանօք ի սմա յարմարեալ բան. այլ որ ինչ ի յիշատակաց գիւռանագիր մատենիցն Յունաց իսկը ըստ նմանեացն ապա և որ ինչ ի համբաւուց (կամ՝ ի համբաւաց) արանց իմաստնոց և հնախօս սիրաբանից ստորգապէս տեղեկացեալ արդարաբար քեզ զրուցեցաք». (Բ. 75.). Ըստային օրինակի միտքն էլ այն է, որ Բիւռոսի տուած համբաւները (տեղեկութիւնները) նաւակառուցի (Նույի) և միւս նահապետների մասին. անունների և ժամանակների վերաբերութեամբ. այլ և մարդկային ազգի սկզբնաւորութեան մասին. համաձայն շեն Սուրբ Կըքին. Մեր այս ենթագրութիւնը կարող է ծառայել իրբեւ նոր ապացոյց Խորենացու ճշգրտութեանը և ճշմարտասիրութեանը. նա չէ թագնում իւր աղբիւները. ինչպէս կարծեցին քըննագատներից շատերը. նա յիշում է յակոնէ-յանուանէ իւր աղբիւրը, եթէ որ այդ աղբիւրից անձամբ և անմիջապէս է օգտուել (օրեւսերիսին. Բ. 10.). Զէ մոռանում յիշեցնել ընթերցողին, որ գըքերի պակասութեան պատճառով շատ անգամ ստիպուած է յիշուղու-



թեամբ գրել. «Այլ որչափ ջան և յիշողութիւնք բաւիցեն, պատմեցար ստուգապէս ի մեծէն Աղքասանդրէ մինչեւ ի վախճան սրբոյն Տրդատայ, յայժ կանուխ և հեռի ժամանակօք» (Վ. 1.), Խւրախութեամբ յիշում է, եթէ իւր պատմածն ապացուցանող որ և է, թէ կուզ աննշան, չի մունք կամ հեռաւոր ակնարկութիւն է գտնում որ և է հեղինակի մօտ (Ա. 21): Աերջապէս իւր ոչ անընդմիջապէս է համբաւ տեղեկութիւնները անուանում է համբաւ, ակնարկելով դրանով որ այդ տեղեկութիւնները ոչ թէ բուն աղբիւրիցն է քաղել այլ ուրիշից:

Այս երկու օրինակների համբաւ բառի խեղաթիւրումը շատ հինգէտք է լինի: Դեռ ոչ մի ձեռագրում չէ հանդիպել ուղիղ ընթերցուած: Աարինեանցի բաղդատած օրինակում հաւացն—ի փոխանակ գրուած է հաւատար մացեալը որ և ընդունել է Հ. Խորէնը իրքեւ ուղղագոյն ընթերցուած (տե՛ս աշխ. Խորէն. ծանօթ. 18): Մինչդեռ պարզ է որ հաւատար մացեալը թարգմանութիւն կամ մեկնութիւն է հաւացն մթին և անհասկանալի ընթերցուածի: «Հաւատար մացեալ» մեկնութիւնը գրողը առել է այդ՝ նոյն զինի հետեւալ ասացուածից. «հաւատացուք աստանօր զրան»: սկսանելով յաղացս այսորիկ որպէս և հաւատացեալ եմք» (Ա. 4.): Նոյն ձեռագիրը «հաւատանելով» անհասկանալի ասացուածի փոխանակ ունի «հաւանելով» ընթերցուածը: որ նշյնպէս թարգմանութիւն է և անհարազատ, որ սակայն ցոյց է տալիս որ «հաւա» «հաւացն» նմանապէս անհասկանալի էին և Լամբրոնացու ժամանակ, այլ և կարօտ քիչ թէ շատ յաջող մեկնութեան:

¶.

ԽՈՐԵՆԸՑՈՒ ՀՈՐԻՌՈՒ ԳԻՒՔԸ

Մեր այժմեան ունեցած Խորենացու Պատմութիւնը բաղկացած է երեք գրքից: Եթէ որ Թովմա Արծրունին, Խորենացուց չորս - հինգ գար յետոյ, գրապէս չվկայէր Խորենացու չորս որդ գրքի գոյութեան մասին, ոչքի մաքից չէր անցնիլ այդպիսի մի գիրք ենթաղրել Բայց ինչպէս յայտնի է, Թովմա Արծրունին իւր Պատմութեան մէջ (Ս. Պետերբուրգ, 1887: եր. 76) աշկարայ վկայում է Խորենացու չորրորդ գրքի կամ գըր-

1) Տե՛ս Աբարտ ամսագիր, հոկտեմբեր և դեկտեմբեր, 1890.

ուագի մասին, որից ինքը և քաղուածքներ է արել Աւատի և պէտք եղաւ որոնել այդ չորրորդ գիրքը, Խորենացու Պատմութեան արժէ քը հառկացողը միայն կարող է գնահատել այդ կորուստի չափը, որ ունեցել է մեր գրականութիւնը այդ չորրորդ գրքի անհետանալովը, Աւատի և ակներև է, թէ ո՞րչափ ցաւ պէտք է պատճառէր այդ կորուստը, և թէ քանի բանասէրներ պիտի ճգնէին, եթէ հնար է, վերագրանել, գտնել, եթէ ոչ այդ կորած չորրորդ գիրքը գոնէ նրա հետքերը :

Հանգուցեալ Էմինը 2 առաջնորդուելով անշուշտ ոչ այնշափ տրամաբանօքն, որչափ այդ կորած գրքի հետքերը գտնելու բուռն ցանկութեամբ, Խորենացու «ի Պարսից առասպելեաց» երկու գլուխները և Գ գրքի 62 գլուխը համարում էր չորրորդ անհետացած գրքի մասերից 5 :

1) Արտնից ուզիք քառասուն տարի առաջ ահմ թէ ինչ վավագանաք էր իսոսում ։ Ալէշանը սցդ կորած Գ գրքի համար, «Ոչ ինչ պատուականագոյն ի թանգարանս դպրութեան մերոց հայրենիաց քան զՊատմութիւն Հայոց Առաջինի Խարինացւոյ, եւ ոչ կորուստ բազմողէտ կոմը գիտ բազմատենչուի քան զի Սորտանուանեալ գրոց, կարծիս անգամ հանգիստման գիտի նորին, յարդահոտել անդիւրում՝ անցեցուցանէ եւ զանձուկ զրկանացս ։ Ի՞շմինիկ եւ բարենշան գրէի զօրն յարում յայտնէին երկինք զնածկեան ի հազարամետայ հնագլենէ, եւ ոչ խողառ ի դուռն եւ յամուլ ժամանակի համարէի զի ձգէլ կետնս, նա եւ պարծան արդեօք զկեալն իմ տու ոյնպիսեաւ ցանկալի գիւտիւ, Այլ թէպէտ իցեն եւ թէպէտ ոչ ճակատագրեալ ինչ վայելքն այն, մինիթարեցայց գոնեայ իմով առ այլս յուսուգրութեամբ, եւլն եւոյլն » (Բազմագէպ, 1851, եր. 69).

2) Խորենացու Պատմութեան Բ գիրք, 2 գլուխը առուած է, «Թագտորէ ի վերոյ Պարթեւաց Արշակ քաջ ի քաղաքին, որ կոչի Բահզը Առաւատին, յիրկրին Քուշանացու Հանգուցեալ Էմինը իւր՝ Խորենացու ռուսերէն թարգմանութեան մէջ այն կարծիքն էր յայտնել, որ պէտք է Առաւատին բառը կարգալ՝ Առաւատին = Առաւոտին, հիմնուելով այն բանի վրայ, որ Գ'ձերբըլոյի մեկնութեամբ Բակդրոյ (Բահզ քաղաքի յունակոն անունը) եւ Բակդրիա Ժայռում են պարսկական Բ ահ տր բառից, որ Նշանակում Ե՛ ար եւ եւ լք, Էմինի ոյս կարծիքն յայտնելուց յիշոյ գտնուել է Խորեն. Աշխարհացրոյցի մի նոր օրինակում տուած՝ Բ ահ լի. Բ ամ ի կ (Աշխարհացրոյ թարգ. Ժանօթ. 186), Հանգուցեալ Պատկանեան Բ ամ ի կ բառը մեկնում է լուսաւած ամ ն չ (Մատը ձև Արք. Հօնարակ, ԵԱ. Ա. Եր. 4), Բազդիք բերմամբ մեզ յաջողուեց. իմ եւ Պ. Մարի քաղատած Ճեռագրուած՝ (Կերսէն գրչի օրինակ) գտնել Առաւաւատին = Առաւոտին ընթերցուածը. նոյն իսկ Խորենացու Պատմութեան բնագրում, Ուրեմն բոլորին արդարանում է Հանգուցեալ Էմինի այս հնիթագրութիւնը եւ Ժամանակ է արդէն, որ Խոր բնագրի նոր հրատարակութեան մէջ Առաւատինը ուղղուի՝ Առաւոտին. Առաւաւատին ընթերցուած կայ եւ Միւ Անեցու մէջ, եր. 20.

3) Էմինի կարծիքները Խորենացու Դ գրքի մասին (Կտօր. Արմեն. Ա. Խօր. 17) ընտրովի առնուած են ։ Ալէշանի վերսիշեալ յօդուածից. թէեւ առանց տղթիւն յիշելու, Համեմատիր նմանապէս Էմինի և Յարէկների և մասին ունեցած կարծիքը Հայկագետն բառգիրք. Արալէզ քառակ հետ:

Հայոց Ալիշան մինչև անդամ համարեց գտած լինել այդ չորրորդ դրբից մի հատուած Տրդատ թագաւորի սպանութեան և թաղման վերաբերեալ : Ուրիշ շատ զիտնականներ և բանասէրներ բազմաթիւ վարկածներ և հաջագրութիւններ են արել այդ չորրորդ դրբի գոյութեան և չգոյութեան և մինչև իսկ նրա բովանդակութեան մասին : Կարինեանց ենթագրում եր, որ Խորենացուն թշնամի՝ տգետ և մոլի հոգեռուականները պէտք է ոչնչացրած լինին այդ գիրքը 2 : Վարկածների և ենթագրութեանց մի փոքրիկ մատենադրութիւն կազմուեց այդ չորրորդ դրբի շուրջը և Խորենացիով զբաղուող իւրաքանչիւր բանասէր, հայ թէ օտարազգի : չէր կարող որևէ է կարծիք չյայտնել այդ մասին : Նոյն իսկ նրանք, որոնք չէին ընդունում այդ չորրորդ դրբի գոյութիւնը, այդպիսիներն անդամ, ասում ենք, չէին կարող վերջնականապէս ազատուիլ այդ կորուսեալ դրբի գոյութեան գաղափարից, և այս շատ իրաւամբ, որովհետև Թ. Արծրունու ակնյայտնի վկայութեան դէմ շատ գժուար է ենթագրական փաստերով և տրամարանական վարկածներով կոռուել : Օրինակ, Հ. Խորէն Ստեփանէն, որ չորրորդ դրբի գոյութիւնը հեքողներիցն է, այսուամենայնիւ, վերջիվերջը ընդունում է մի այդպիսի դրբի գոյութիւնը : Ահա թէ ինչպէս է դատում Խորենացու այս նորագոյն թարգմանիչը . « 2 որրորդ դրբի գոյութիւնը ինչպէս տեսանք դեռ ևս կարծիքական է, նորա մէջ բովանդակած նիւթերի մասին կարծիքները զանազան են, մանաւանդ որ չկայ և ոչ մի դրական վկայութիւն նորագոյութեան Պովեսէի թէ ժամանակակից և թէ չեռաւոր պատմագիրն երի մէջ (Հապա Թովմա Արծրունի՞ն) : Աւստի աւելի շրջանկատութեամբ պիտի խօսուի այսպիսի խնդրի վերա : Իսկ լաւագոյն ապացոյց, թէ Պովեսէի պատմութիւնը բաղկացած էր մի մի այն երեք դրբից, այդ գրքերի վերնագիրներն են : Հեղինակը և զիրքը կոչում է « Ծըն ընդ ար ան ու թիւն և այ ոց մեծաց », Բ զիրքը կոչում է « Բան միջակ պատմութեան նախնաց մերոց », և Կ զիրքը կոչում է « Աւարտ ար ան ու թիւն մերոց հայրենեաց » : Այդ Գ զիրքն Աւարտ ար ան ու թիւն կոչելուց յետոյ, ինչպէս ենթագրենք Դ զիրքի գոյութիւնը, Թովմայ Արծրունու վերսիշեալ խօսքը բացատրելու համար մեղ հաւանական է թուում Լանդուայի կարծիքը, թէ գուցէ Ա. Խորենացու աշակերտներից մին կամեցած լինի շարունակել իւր վարդապետի Պատմութիւնը, և զրել է նոյնպէս նորա կեանքի վերա քանի մի

1) Այս բուօքի մասին տես Հմինի Խորեն, Խուսաւ, Թարդ, — ուազմովէսպա : 1851 . Խր . 75 եւ Աշխարհաբար Խորեն, յառաջաբան, յաւելուած եւ ծանօթ . 540, 779 :

2) Տես Շնազրատութիւնն Կորինեանցի, յառաջաբան :

տեղեկութիւններ: Եւ որովհետև այս շարունակութիւնը կամ Թովմայի ասած ՚ գիրքը, որի մէջ նորա խօսքով պիտի բովանդակուէին Հայաստանում պատահած անցքերի պատմութիւնը մինչև Զենոն կայսեր օրերը, անհամեմատ աւելի ստորին էր առաջին երեք գրքերից, այս պատճառով նա չկարողացաւ Հայերի նոյնպիսի խնամատարութեան առարկայ գառնալ՝ (Առաջաբան, եր. ԽԳ):

Այսուամենային, ասել է թէ Հ. Խորէն էլ Լանգլուայի հետ միասին ընդունում են չորրորդ գիրք, թէև գրուած ոչ Խորենացուց, այլ նրա մի աշակերտից: Այս էլ պէտք չէ մոռանալ: որ այժմեան մեր ունեցած Խորենացու Պատմութեան լրիւ և ամրող լինելը, հանգերձ իւր աւ արտաբանութեամբ: այլև թերատութեան ոչ մի նշան չունենալը չէ կարող տրամարանօրէն համարուիլ իրեկ հերթումն չորրորդ գրքի գոյութեան, այլ այդ պապացց է միայն այն բանին, որ Խորենացին իւր Պատմութեան երեք առաջին գրքերը գրելիս չէ ունեցել մտագրութիւն մի չորրորդն էլ աւելացնելու: բայց չէ՞ որ կարող էր, երեք գրքի աւարտումից յետոյ, այդ մտագրութիւնը փոխել, ուստի և ծնունդ կառնէր մի նոր գիրք, որ իրեկ շարունակութիւն առաջին երեք գրքերի՝ կինէր չորրորդ: Այս մի այնպիսի երեսյթ է, որ ամեն քիչ թէ շատ գրող կարող է իւր վրայ փորձել:

Այս բանին օրինակ ունիք և հին Պայրութիւնից: Եղիշէն իւր պատմութեան յառաջաբանում թւում է իւր յեղանակները: «Ահա նշանագրեցի յայսմ եւթն յեղանակիս»: Յետոյ մի առ մի թուելով եօթն եղանակները կամ հատուածները իրենց բովանդակութեամբ, աւելացնումէ: «Յայսմ յեւթն գլուխս կարգագրեալ և եղեալ ծայր աւ լի ը պ ար ապ մամբ զ ս կ ի զ ը ն և զ մ ի ջ ո ց ն և զ կ ա տ ա ր ա ծ ն: զ ի հանապազ ընթեռնուցուս: Այսպիսի բացորոշ ծրագրից յետոյ ում մտքից կարող էր անցնել թէ նա զրելու էր և Ու թ ե ր ո ր դ յ ե զ ա ն ա ն ա կ: Բայց այդ Աւթերորդ յեղանակը գրուեց և մեզ հասաւ: Այսպէս կարող էր գրուել և Խորենացու ՚ գիրքը նոյն իսկ Աւարտաբանութիւնից յետոյ:

Այսպէս կամ այնպէս, առայժմ մեր միտքը չէ ընդունել կամ հերքել ՚ գրքի գոյութիւնը: Միայն չենք կարող չաւելացնել և այն, որ այս հարցով զբաղուող բոլոր բանասէրներն էլ մոռացել են ամենագրական և ծանրակշիռ փաստը, որի զօրութեամբ կարելի էր կասկածանքով վերաբերուիլ Թ. Արծրունու տուած տեղեկութեանը: Այդ այն է, որ Խորենացուց օգտուող բոլոր պատմաբանները՝ Սեբէսու, Յովհաննէս Պաթողիկոս, նոյն իսկ ինքը Թովման, որոնք շատ տեղեր գրեթէ բառ առ բառ ընդօրինակել են Խորեն: Պատմութիւնը, չունին մի այնպիսի նորբան, որ չգտնուէ էր յեր այժմեան ունեցած Խորենացու

երեք չառորներում։ Աւրեմն Դ գիրքը չէր պարունակում ոչինչ նոր, ոչ միայն գլխաւոր անցքերի վերաբերութեամբ, այլ նաև նոյնիսկ մանը ամասնութիւններ՝ կամ այլապէս ասած, չկար Դ գիրք։

Եյս բոլորը շատ գեղեցիկ դատողութիւններ են, ընդունակ կասկածանքի ենթարկելու Թովմա Արծրունու բացարձակ հաստատական յառաջադրութիւնը (assertion), բայց ոչ բաւարար՝ նրան վերջնականապէս հերքելու համար։ Օթելլոյի թաշկինակի նման Թովմա Արծրունու չորսորդը առ միշտ կմնայ կասկածանքի շարժառիթ։

Եւ մենք ոչինչ չէինք գրիլ այս արգեն ծեծուած և ծամուած խնդրի մասին, եթէ չունենայինք յայտնելու բոլորովին նոր բան։

Մինչև այժմ այս խնդրին հետազոտող բոլոր բանասէրները համաձայն են եղել միմեանց հետ կատարելապէս՝ իրենց ուղղութեամբ։ բոլորեքեանն էլ որ ոն ել են այդ ենթադրական ըրրորդ գիրքը, ոչ միայն իրապէս, այն է՝ մատենադարաններում և մատեաններում։ այլ և իրենց դատողական զինարանում։ Բոլորն էլ առհասարակ մոռ աց ել են քննութեան ենթարկել այդ իրենց բոլոր խուզարկութիւնների բուն սկզբնապատճառը՝ Թովմայի խօսքերը, որ միակ աղբիւրն են այս ամեն վարկածների և խուզարկութեանց։ Թովմայի ասածին վերաբերուել են բոլորովին ոչ Թովմայօրէն, այլ կատարեալ հաւատով։ Մինչդեռ չէ որ Թովմա Արծրունու այդ մի չորս որ դ խօսքը կարող է սխալ լինել կամ աղջատուած։ Եւ պէտք չէ մոռանալ, որ այդ միակ «չորս որ դ ն» է մեր ամբողջ գրականութեան մէջ, Խորինացու չորրորդ գրքի գոյութեանը վկայող։

Ուստի և մենք կամենում ենք այս խնդրում ընթանալ բոլորովին նոր ուղղութեամբ, մի կողմ թողնելով գլխովին վաղաժամ՝ հարցասիրութիւնը, թէ ինչ կարող էր բովանդակել Խորինացու չորրորդ գիրքը։ կամ թէ ում ձեռքով կարող էր զրուած լինել կամ թէ ինչպէս և ինչ պատճառով անհետացած։ կամ թէ Խորինացու ո՞ր գլուխներում փնտուել ակնարկութիւններ այդ կորած զրքի վերաբերութեամբ, և կամ մեր գրականութեան ո՞ր հատուկտորներն ու հատուածներն համարել իրրե այդ կորած զրքի թողած հետքեր։ Եյս պատճառով մենք չենք համառօտում այստեղ, այս խնդրով զբաղուած բանասէրների վարկածները և անցնում ենք ուղղակի Թովմայի հատուածի ուսումնասիրութեանը։

Աւրեմն և թողներուի մեջ փոքր ինչ աւելի ընդարձակօրէն յառաջ

1) Այս կործիքը թէ Դ գիրքը պահուած է Երաւանումի Հայոց վանկաւմ մեզ բոլորովին անհաւանական է թուամ, եթէ մի այդպիսի բան գոյութիւն ունենար, շատունց հրատարակւած կլինէր որդէն։

բերել Արծրունու այդ՝ մեզ հետաքրքրող հատուածը, տեղտեղ յապաւումներով:

«Եւ թագաւորեալ Պռամ՝ որդի Յազկերտի՝ կոչէ ի դուռն զսուրբն և Սահակ Հայոց Կաթողիկոս: Որոյ առեալ զթոռունս իւր զւմայեակ և Համազասպեան գնան առ արքայ ի Տիսաոն: Քանզի Աարքան անցեալ «գնացեալ էր սուրբ վարդապետաւն Մաշտոցիւ առ կայսր Թէոդորոս և առ Ատոմիկոս արքեպիսկոպոս հանդերձ թղթովք սրբոյն Սահակայ: տանհլով ընդ իւրեանց և զգիր և զրառ հայերէն գալրութեան . . . (պամում է Մեսրովայի և Աարքանի գործնէութիւնը Յունական բաժնում, ըստ Խորենացու (Գ դիրք) և ըստ Կորինի):

«Իսկ ի հասանել սրբոյն Սահակայ ի Դուռն արքունի հանդերձ նախարարօքն՝ զիջանէ ցածնու Առամ՝ ի բարկութենէն . . . (պատմում է Արտաշրի գահակալելը և գահընկեցութիւնը, Նախարարների շար միաբանութիւնը ընդգեմ թագաւորի, և Սուրբմակ արեղայի մոլեգնոտ փառամոլութիւնը և լուսում էլ յայտնի են մեզ Խորենացու երրորդ գրքից):

«Եւ եղէ ի դառնալն Սրբոյն Սահակայ ի Պարսից՝ եկն առ նա դարձեալ Աղան Արծրունի, և ընկալաւ ի նմանէ սրեմ կրօնաւորութեան, և երթեալ բնակէ առանձնապէս ի Գողթն գաւառի ի տեղուոջ վարդապետ պատութեան սրբոյն Մեսրովայ» . . .

(Պատմում է Նախարարների Սահակ Պարթևի հետ հաշտուիլը և Սահակ Պարթևի տեսիլը): «Եւ այս ամենայն այսպէս եղեալ՝ կեց ե ալսուրըն և Սահակ ամս Ճի (Հարիւր քսան) փոխի յաշխարհէս ի կարգս հրեշտակաց, և տարեալ հանդուցանեն զնշխարս սրբոյն յԱշտիշատ Տարօնյ ի տեղուոջ վկայարանի սրբոյն Վկրտչին և Աթանագինի վկային: Ի նմին ամի յետ վեց ամսոյ անցանելոյ փոխի և սուրբ հայրապետն Մաշտոց, և խաչանշան լուսով խաղացուցանեն բազմութեամբ Նախարարացն Հայոց ի ձեռն Աահանայ Ամասունոյ, որ էր ի ժամանակին սպարապետ Հայոց. և տարեալ հանդուցանեն զնա ի յՕշական գիւղ, ի գաւառին՝ որ կոչի Ռոտ Արագածու: » (տես նշյնը՝ Խորեն. Գ. 67 և Կորին՝ Պատմութիւն Մեսրովայ, Աենետ. 1833, եր. 25—27):

«Յամի երկրորդի Յազկերտի որդւոյ Պռամայ երկրորդի՝ բարձաւ թագաւորութիւնն ի տանէն Հայոց, որ տեեաց ամս նուիւ և վախճանեցաւ:

«Եւ բառնալոյ թագաւորութեանն ի տանէն Արշակունիաց, և Հայրապետութեանն ի տանէն սրբոյն Գրիգորի՝ Աւոնդ ոմն աշակերտ սըրբոյն Մաշտոցի տեղապահ լինէր սրբոյն Սահակայ: և Յովսէփ եպիսկոպոս . . . . »

«Իսկ Աարքան Մամիկոնեան, որդի Համազասպայ Մամիկոնէի, թռուն սրբոյն Սահակայ խոյս տուեալ գնաց զկողմամբն Մոկաց:

Նւ քանզի յետ մահուանն մեծին Սահմկայ Բագրատուա-  
նւ ող սպարապետի ասպետի և զօրավարի Հայոց հաւատացեալ էր  
Թէոդոսի կայսեր զսպարապետութիւնն Հայոց Համազասպ Մամիկոնէի և  
որդւոյ իւրում Աարդանայ . . .

Ունի ոյս ոյն Ունի է որոյ հրաման բրեց Ի՞ն վորոնեալ Սուխե-  
ռիշեալ անունն է բրենը ոչիշ Պատմութեան Հայոց Ի՞ն հրաման յօքէ-  
ռաւ ունի անունը յուրաքանչիւն մինչ զենա Զենա ուրոյ իւրաքանչիւն ունի-  
ռիշեալ ան օն (Յուրիշ անուն) : Այս և ուրութեալ ներանիւնի որդւու բրեու ունի-  
ռիշեալ Ի՞ն ոյս է արքութ քառութիւն բարձրանաւուն ունի Սուխեալ Խոր-  
ացու միշտունաւուն է միրոյ երիշեալ քառութեալ հաստանէն, ոչ և  
երանակն արքան, անունն իւնիւն և ունիւն որբոյ Մերութոյ՝ յի-  
ւուն անունն անունն ունի անունն անունն Ի՞ն հաստանէն անունն է : (Թով-  
մայի Աարդ Արծրունոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց, Ա. Պետրո-  
րուրդ, 1887, եր. 72—76):

Այս հատուածի մէջ մեր զլիսաւոր ուշագրութիւնը գրաւում է հե-  
տևեալը : « Որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի չորրորդ գրուագի խոս-  
ւատաննեալ Պատմութեանն Մովսէսի Խորենացւոյ » : Դրուագ բառը  
Խորենացին գործ է ածում ոչ իրրե գիրք կամ հատոր, այլ իրրե  
դլուխ, օրինակ՝ « Այս գրուագ մեծ, և հաւատոի պատմութեամբ լի » (Խո-  
րեն, Բ. 7.) : Մինչզեռ Խորենացին իւր իւրաքանչիւր հատորը կոչում է՝  
գիրք և ոչ թէ գրուագ : « զի ահա որ ինչ առ մերով ժամանակաւ ե-  
ղեալ կամ գոյզն ինչ հեռի զրուցեցից քեզ անսխալ երբորգ առ-  
նելով գիրս » (Խորեն, Գ. 1.) : « Գրեմ քեզ այժմ և որ ինչ ա-  
ռանձին մերոյ աշխարհիս գործք, եր կը որդ առնելով գիրս » (Բ. 1.) :  
« Զի ոչ յ առ աջինսն մեր ասացեալ զիրս և ոչ ի վերջին բանս ար-  
ժանաւորեցաք շարել » (ի Պարսից Առասպ.): Դրուագն հասկանա-  
լով իրրե գլուխ, որոնենք Խորենացու երեք զրբերի չորրորդ գլուխ-  
ները : Եւ մեր վիստաածին քիչ թէ շատ համապատասխանող բան գըտ-  
նում ենք միմիայն Առաջին զլիքի Դ զլիում, ուր Խորենացին խոստա-  
նում է խօսել մի բանի վրայ : « Արդ օրէն է մեզ աստանօր զկարծիս  
նոցա յայտնեն, թէ զինչ իւրաքանչիւր որ ի նոցանէ խորհեցան այս-  
պէս զայսոսիկ գրել այլ վասն երկարութեան առաջիկայ գործոյս՝ այ-  
լում տեղւոյ և ժամանակի զայսոսիկ թողեալ հաւատաւում այն  
ցուք աստանօր զրանս սկսանելով յաղագս այսորիկ օրպէս և հաւատա-  
ցեալ եմք » : Բայց ի մօտոյ քննելով այս չորրորդ գլուխը, տեսնում  
ենք, որ սրա բովանդակութիւնը բոլորովին չէ համապատասխանում այն  
նիթին, որի վրայ խօսում է Թովմա Արծրունին, ուստի և եթէ Խորե-  
նացին, ուրիշ տեղում և ուրիշ ժամանակում կատարել է իւր

այդ խոստումը, այսուամենայնիւ այդ չէ կարող վերաբերիլ այն չորր որդ  
դրուագին, որի վրայ մատնացոյց է լինում Թովմա Արծրունին:

Այս կողմից ոչ մի որոշ հետեանքի չասնելով, այժմն ընդունենք,  
ինչպէս այդ ընդունել են մինչև ցարդ այս խնդրով զբաղուող բոլոր բա-  
նասէրները, թէ թով. Արծրունու դրուագը նշանակում է դիրք. և  
որովհետեւ մինչև այժմն ոչ մի տեղում չէ յայտնուել Խորենացու չօր-  
րորդ դիրք և ոչ մի ուրիշ տեղում էլ չէ յիշուած այդ մասին բացի  
Արծրունու այս հատուածից, և որովհետեւ բոլոր այս խուզարկութիւննե-  
րի և Ենթադրութիւնների պատճառը միակ չորրորդ բառն է, ուրեմն  
և ի՞նչ կլինի, եթէ այդ չորր որդ բառը սխալ լինի և կամ փոփոխուած,  
կամ աղաւաղուած.

Չեռագրերի մէջ ոչ մի բան այնչափ յաճախ չէ և սովորական,  
ինչպէս թուերի շփոթումները: 2 որ բորդը եթէ իրրե թիւ գրուած  
լիներ տառով — և այդ կարող էր լինել, ինչպէս որ Արծրունու նոյն  
հատուածում երկու տեղ հարիւր քսանը գրուած է՝ Ճի, — այն ժա-  
մանակ չոր բորդի փոխանակ կունենանք մի գա՝ = Գ: Խոկ դան ամե-  
նից յաճախ շփոթում է գիմի հետ: Աւստի և սկզբնականը ամե-  
նայն գիւրութեամբ կարող էր լինել գիմ և ոչ թէ դա: • Որպէս գրեալ  
աւանդեցաւ մեզ այս ի Գ (այն է՝ յերրորդ) դրուագի խոստարանեալ  
պատմութեանն Մովսէսի Խորենացւոյ: :

Անշուշտ այս դեռ ևս մի լոկ ենթադրութիւն է:

Բայց ուշի ուշով քննելով ի՞նչ ենք տեսնում:

— Տեսնում ենք, որ այս ենթադրութեան ամենադրական ապացոյցը  
գտնուում է իւր կողքին անմիջապէս, որի վրայ և, շատ զարմանալի  
բան, ոչ ոք ուշագրութիւն չէ դարձրել: Ահա այդ ապացոյցը:

— «Աերագարձութեան ի վերայ երկեցունց դրուագել ալ հա-  
տուածին»: Այսինքն թէ՝ աւանդուեցաւ այս մեջ Մովսէսի Խորենա-  
ցու պատմութեան երրորդ դրուագում, որ վերագարձութիւն էր եր-  
կու դրուագեալ հատուածների վրայ: Կամ աւելի պարզ ասած՝ երրորդ  
դրուագում, որ դրուեց երկու դրուագից յետոյ: Ուրեմն և Մովսէսի  
պատմութիւնն ունէր առաջին, երկրորդ և երրորդ դրուագ կամ գիրք,  
բայց ոչ բնաւ՝ չորրորդ: Երկու գրքից կամ դրուագից յետոյ  
գրուող գիրքը լինում է երրորդ գիրք և ոչ երրեք չորրորդ: Երկեց  
ցունցը ամենադրական ապացոյց է, որ պէտք է սկզբնագրում լինէր  
անպատճառ գիմ: որ յետոյ շատ սովորական սխալմամբ կարդացուել է՝  
դա: Խոկ գիմի և գայի շփոթման օրինակներ, ոչ միայն թուերում, որ  
շատ հասկանալի բան է և ներելի սխալ, այլ և հասարակ և յատուկ  
անուններում այնչափ յաճախ են, որ շարժէ անդամ օրինակներ բե-

բել Յիշենք միայն երկու յատուկ անուն Խորենացուց, որոնք աղաւա-  
դուած են զիմի դա կարդացուելով և որոնք դեռ մինչև այժմն էլ չեն  
ուղղուած բնագրի հրատարակութեան մէջ. (Տպ. Տփիսիս, 1881), Այս  
յատուկ անուններն են Մերու փոխանակ՝ Մերու-ի և Փղեռոնիսու փո-  
խանակ Փղեգոնիսու (Խորեն. Ա. 9 և Բ. 13) ։

Այսպիսով ուրեմն Թովման Արծրունին ինքն էլ երբէք չէ տեսել որևէ  
չորրորդ գիրը և ոչ էլ այդ մասին որևէ գաղափար ունեցել. Անուշաղիք  
գրչի մի փոքրիկ չնչին խաղը գարձել է ահազին շփոթութեանց պատճառ.

Բայց կարող են մեզ հատուցանել մեր գրամով՝ ընդունելով հանդերձ  
որ երկու թուերից մինը կամ «չորրորդը» և կամ «երկեցունցը» սիսալ  
է, կարող են մեզ առարկել թէ այդ սիսալը «երկեցունց» բառի մէջն է և  
ոչ թէ «չորրորդի» ։ Եւ իսկապէս եթէ այժմեան «երկեցունց»-ի փո-  
խանակ լիներ «երեցունց» ։ այն ժամանակ ոչ միայն մեր հաստատութեան  
գլխաւոր հիմքը կործանուեր, այլև «չորրորդ»-ի համար կդանուեր մինոր  
և առաւել զօրաւոր փաստ. Բայց «երեցունց» չկայ. Թովման Արծրունու-  
առ աջին հրատարակութեան մէջ «երկեցունց» է (Ա. Պոլիս, 1852. եր.  
82), «երկեցունց» է նաև երկրորդ տպագրութեան մէջ (Ա. Պ. Բ. 1887.  
եր. 76), որին խնամով հսկել է Քերովքէ Պատկանեան, բաղդասա-  
րով նորից հնագոյն ձեռագիրը (զրուած Աղմամարում, 2ՇԲ  
թուին) երկու նորագոյն ձեռագիր երի հետ և էջի  
ն երք և ու մ նշանակելով տարբեր ընթերցուածն են,  
երած բոլոր հրատարակութիւնները այս երկու տպագրութիւնն են,  
ուստի և այս հրատարակութիւններից եղած բոլոր քաղուածքներումն էլ  
«երկեցունց» է. ինչպէս նաև Բրոսսէի փրանսերէն թարգմանութեան մէջ.  
(Ա. Պ. Բ. 1874) 2. Միւս կողմից այն բոլոր խորհրդածութիւնները և

1) Գիմի եւ գայի շփոթութիւններ այնչափ յանձնի են թու և երաւմ, որ ով որ  
գոնէ մի ձեռագիր ծոյցը ծայրէ տնտեղեւս քաջութիւնն է ունեցել, անշուշտ հան-  
գիպած կլինի մի քանի սպասիք վրբակների. Գիմի եւ գայի շփոթութիւնից ծո-  
գած, արդէն ոչ թուերի. որ հաստրակ բան է եւ առօրհոյ երեւոյթ, այլ աղջու-  
տուած բառերի օրինակներ ունի հմտան հարազը նիւթանդացին. իւր պատագի-  
տութեան մէջ. թէեւ յորդելի հեղինակի բերած բալոր գէալգերին մենք համա-  
ձայն չենք. Օրինակ՝ «Եկրմակ» բանի եւ արբարկան «Եկրմակ»-ի մերձեցումը եւ  
գիմ ու գայի հնիթագրական շփոթուամից ծագելը մինք չենք կարող ընդունել այն  
հաստրակ եւ պարզ պատճառով, որ գիմ բանկը ոչ միայն գըստ բառ է, այլ պահ-  
պանուել է եւ ժողովրդեան բերանում (Այսարտանու բարբառաւ): Իսկ ժողովրդեան  
բերանում չէր կարող գրչի վը ի պ ա կ ի ց ծագած սիսալը հետեւանք ունենու.  
Աւելորդ է տաել եւ այն, որ գերմանկը, արարացիների մեր երկիքն արշաւեւուց շատ  
տապէ, յայտնի էր մեր եւզուին Առ ու բ թ գ թ ու մ (Գ. Թագ. Գ. 22):

2 Այցը Աթոռիս մատենագարանը դժբաղդարար թովմայի Պատմութեան ոչ մի  
Ձեռագիր չունի. Աւելի առ կերում եւ ուրիշ միաբանութեանց քով գտնուած էր-

գատողութիւնները՝ որոնք գրդում էին բանասէրներին և մեզ կասկածել Խորենացու չորրորդ գրքի գոյութեան մասին։ այդ բոլոր գատողութիւններն, ասում ենք, այժմս մեր այս քննադատութիւնից յետոյ ինձ թւում է, թէ ստանում են իրենց բոլոր ուժն ու զօրութիւնը։ Ինչպէս ամեն բան խօսում է յօդուտ երեք գրքի, ուրեմն և «երրորդ» ընթերցուածի և հակառակ «չորրորդ»-ի։ այսպէս և ամեն բան վկայում է յօդուտ «երեք եցունց» ընթերցուածի և հակառակ «երեք եցունց»-ի, որ չկ այ է լ։ 2 եղած մի ընթերցուածի գէմ գրել հարկադրում է մեզ այն սովորական և յաճախ կրկնուած երեցիցը, որով առաջնորդուած շատ անգամ սրբագրուում են հակասական երեցած հատուածներ, առանց երկար բարակ հշուադատութեան։ Արծրունու «չորրորդն» ու «երեկեցունցը» հակասական են և կարող է գտնուել մի նոր ձեռադիր, որի գրիչը նկատած լինելով այդ հակասութիւնը, սրբագրած լինի գրան «երեկեցունցը» «երեցունց»-ի փոխելով։ Աւրեմն այդ ենթագրական գէպքումն էլ մենք նախապատռութիւնը պէտք է տանք «երեկեցունց» ընթերցուածին։ Եթէ «երեկեցունցը» տառով գրուած լինէր նախօրինակում, այդ գէպքումն էլ դժուար է ենթագրել «երեցունց» ընթերցուած, քանի որ բնն և գիմ անհամեմատ աւելի աննման են միմնանց։ քան՝ գա և զիմ։ Բայց եթէ այդպիսի մի սխալ սրբագրութիւն կատարուած լինէր և հասած մեզ բոլոր յայտնի եղած ձեռագրերում։ այն ժամանակ ոչ մի հաւանականութիւնը կարող պիտի լինէր վերականգնել ուղիղը և գտնել այդ կատարուած և յղկուած սխալը։ Բարեբաղդարար այդ չէ տեղի ունեցել և «երեկեցունցը» չէ ենթարկուել վրիպական «չորրորդի» ազդեցութեանը։ Թէպէտ և այդ կ կարող էր լին ել։

Այսպիսով մենք գալիս ենք այն համար զամանը, որ երբէք չէ եղել Խորենացու չորրորդ գիրքը, ուրեմն և գրամասին յիշատակութիւն։

Բայց տեսնենք արգեճօք այս յարմար է գալիս մեր յառաջ բերած Թովման Արծրունու ամրող հատուածի բովանդակութեանը և մտքին։

Առգերի համար ահա թէ ինչ է տառւմ Հայութեալ։ «Իսկմայի Արծրունու Պատմութիւնն առաջնորդին անգամ տպագրեցաւ ի Մէջագիւղ Պալսոյ յամին 1852։ Աղթամարս մէջ գրուած օրինակն մը, որ հիմայ ի կ. Պալիս է, եւ ուսկ ի ց գուշափար ար ար ած կ երեւան ուրիշ տեղ մեջ կ ի ծանօթ օրինակ քաւար է» (Հայկ, Հիմարական Պատմ. Վհնեա. 1886, եր. 513)։

1) Այսպիսի մի սրբագրութիւն նկատուած է Հ. Ալեքանի վերոյիշեալ յօդուածում եւ Հ. Զարբանակեանի դասագրքի մէջ, ուր «երեկեցունց» փոխանակ գրուած է «երեցունց» (Հայկական Հիմարական Վհնեա. 1886, եր. 356)։ Այս մի գեղեցիկ օրինակ է, թէ ինչպէս մի սխալ կամ վրիպակ, երերի բնական ընթացքի ուժով, ու առաջ է դասուամ ուղիղն էլ սխալ սրբագրելու։

Կոր ասելով՝ ի՞նչ է քաղեր, Թուման Արծրունին Մովսեսի այդ երրորդ (կամ չորրորդ) գրքից՝ — Քաղել է Մովսեսի լի և ու առ առ ու ծեր և առ մասսին վկայութիւն, աւելացնելով զբան իւր կող մի ցոր Մովսեսը ապրեց հարիւր քսան տարին. Կոր կող մի ց ենք առում, որովհետեւ Մովսեսինը իւր մասին չեր կարող գրել թէկուզ չորրորդ կամ հինգերորդ գրքում, թէ ինքը քանի տարի ապրեց. Սակայն անշնուշտ կարող էր գրել իւր ծերութեան մասին. Խու յիրաւի՛ բաց անելով Խորենացու երրորդ գիրը, զանում ենք այդ վկայութիւնը. «Զի և ես այս եմ ծեր առ եւ առ լ և հիւ անդ ու առ և անգարատ ի թարգմանութեանց» և զերազելն միայն խոկացի. ոչ ինչ մաքրագունից պարապեալ բանից, զի և քո (Սահակայ Բագրատունոյ) կամքդ կատարեացին. և ես ճողովրեցաց ի քոց հարկեցուցանող բանից և աղաւանաց, մարդ զքեզ վարկանելով կարեկցութեամբ՝ մեզ հաւասարեալ, և ոչ որպես քերթողքն ասեն, մերձադաշտաւութեք և մօտասերք դու և նոյնասերմաննք ասուսածոց իշխանք. (Խորեն. Գ. 65):

Լուսի պէս պարզ է, որ Թուման Արծրունին այս Յաշ գլուխն է ունեցել իւր աչքի առաջ, վերևում բերուած հատուածը դրելիս. Այս գլուխում կդանելք նոյնը, ինչ որ Թումայի մեր մեջ բերած հատուածում, այն է՝ Սահակայ Պարթևի վերադարձը Պարսկաստանից և Վարդան Մամիկոնեանին և Սահակ Բագրատունուն. «Որոյ հ բա ման աւ գրեաց մեծ վարդապետն Մովսես, ափեղերահայս չակեալ քերթողն, զգիրս Պատմութեան Հայոց մեծաց», Կամ Խորենացու խօսքերով ասած» «և ես Ճաղոսրեցաց ի քոց հ ար կ ե ց ու ց ան ո դ բ ան ի ց և ադ աւ չ ան ա ց»: Այսպիսով յօդս է ցնուում չորրորդ գրքի դայութեան խնդիրը:

Բայց Արծրունու վերոյիշեալ հատուածը, բացի չորրորդ գրքի գրչագրի վրապակից յառաջացած խնդրից, ունի և այլ հետաքրքրական կէտեր:

Առաջին՝ Խորենացու 120 տարին, Բայց Արծրունին 120 տարի վերադրում է նուև Սահակ Պարթևին: Անընդինիս մասին հաստատապէս գիտենք: որ յիսուն և մի տարի եղիսկոպոսութիւն կամ եղիսկոպոսապետութիւն արաւ. «կեցեալ եղիսկոպոսապետութեամբն ամս յիսուն և մի»: Մեռաւ իւր ծն գ ե ա ն օ ը ծ ն ե ր ու թիւնից և հիւանդութիւնից չնեղուեց»՝ իրք զի ոչ պակասութիւն (պակասութեան) իրիք մասն ի ծերութենէն եղանիլ. և ոչ յախոնից առընդունել. (Խորեն. Գ. 67): Այսի և նոյնը վկայում է և Կորիւն (Եր. 25): Ակներեւ է, որ հարիւր քսան տարին: կամ երկարակեցութեան այս լրումը. մի բարեպատճեն, առեղծուած եարեւ պատկառելի ծերունիներին, մի աւանդութիւն, առեղծուած գարեր անցնելուց յետոյ: Կոր ծնած օրը մեռնելն էլ երկարակեցութեան և անցաւագարութեան նման, նշան են սրբու-

թեան: որ վերագրուում է այս և այն մաքրակրօն անձին: Ներսէս մեծն էլ, ներսէս եւ: Աշտարակեցին էլ մեռած են համարուում իրենց ծննդեան օրը:

Խոկ ինչ վերաբերուում է Խորենացուն: Նա հինգերորդ դարի սկզբին հաղիւ թէ ծնուած լինէր: զոնէ Նա այնքան փոքր էր: որ այբուբենի գիւտի ժամանակ՝ աշակերտների թւում չէր: Աւսանողութեան գնաց արտասահման: թարգմանիշների Եփեսոսի ժողովքից դառնալուց յետոյ՝ 432—33 թուին, երբ հազիւ թէ 30 տարեկան լինէր: Ինչը տարի ուսանողութիւնից յետոյ վերագրածաւ հայրենիք և, ինչպէս կարծւումէ: շատ ուշ սկսեց զրել իւր պատմութիւնը: Մեռաւ հաւանականաբար՝ 493 թուին, ուրեմն հազիւ թէ 93 տարեկան հասակում:

Երեկի այս բաները աչքի առաջ ունենալով՝ ոմանք այդ՝ Արծրունու առած 120 տարին վերագրում են ոչ Մովսէսին: այլ Սահակ Բագրատունուն: Բայց այս աւելի ևս անհեթեթութիւնն է: քանի որ մնկը գիտենք Խորենացուց: որ Ս ա հ ա կ Բ ա գ ը ա տ ո ւ ն ի ն ա ն հ ա մ է մատ փոքր է ը Մ ո վ ս է ս ի ց: — ։ Ա յ լ տացուք զայսոսիկ մանկական ի ք ո յ ո ց տ ի ո ց և անհասութեան խակութեանդ լեալ տարիանք . . . . .: Մովսէսը ինքը քանի՛ տարեկան պիտի լինէր: որ վկայէր իրենից փոքր Սահակ Բագրատունու 120 տարեկան լինելու մասին: Խոկ Թովմա Արծրունին էլ այդ չէ ը կարող անել երբէք: քանի որ նա՝ Թովման, Սահակ Բագրատունուն: հարկաւ սիսալմամբ, աւելի շուտ մեռած է համարում: քան թէ Վարդան Մամիկոնեանին (տե՛ս վերևում մէջ բերուած Արծրունու հատուածը):

Գանք երկրորդ կէտին: Թովմա Արծրունին Խորենացու Պատմութիւնը համառօտում է այսպէս: «սկսեալ յԱգամայ մինչ ի կայսր Զենոն»: Այս կէտը շատերին, կամ լաւ ևս: ամենքին կարծել է տուել, որ Խորենացին պէտք է զրած լինէր Հայաստանի պատմութիւնը: Հայոց թագաւորութեան անկումից յետոյ էլ շարունակելով մինչև Զենոն: այն է՝ 433—491 թուականը: Եւ այս էր համարուում այն ենթագրեալ չորրորդ զբքի զլսաւոր պարունակութիւնը: Խոկ որովհետեւ չորրորդ զիրք չկայ, չէր կարող լինել և նրա պարունակութիւնը կամ բովանդակութիւնը: Խորենացու մէջ չկայ

1) Աւրիշների հետ միասին այս կարծիքին է եւ Հ. Ա. Խոհիանէն (աշխարհաբար խորեն: յառաջաբան եր: 1: ծնթ: 1: եւ եր: 1թ: ծնթ: 1): Հայր Խորենի այս աշխատութիւնը զերծ չէ մնացել այսպիսի կոպիտ սխալներից եւ այս աւելի դարձանալի է: քանի որ ոչդ աշխատութեան գործ ա կ ց հ է լ է հ ւ ո յ ։ Առ Մալիստանին: Արժ: Հայրը տնում է: օրինակ, ասովիսի սխալները: — ի զ ն ի կ ի ծ ն ն գ ա վ ա յ ր կողքը գնում է Տ ա յ ք ո ւ մ (? !) (Ծնթ: 734): Մամուկեատիք քաջաբարում է՛ իրերւ թէ չկայ (Ծնթ: 737): ուստի եւ ուզզում է՛ Սամուատ: մինչդեռ թէ «Թէսդորոս Մամուկեատացին: շատ յայտնի է եկեղեցական պատմութեան

Զենոնի անուն, «մինչ ի կայսր Զենոն» էլ չէ նշանակում թէ այդ պիտի լինէր, Եթէ Խորենացու պատմութիւնը այն կերպարանքն ունի, իբրև թէ վերջացած լինէր Ա. արդ գ ա ն ա ն ց պ ա տ ե ր ա զ մ ի ց ա ռ ա ջ, թէ ողբի մէջ կարելի է տեսնել ակնարկութիւններ այդ պատերազմին վերաբերեալ սակայն ինքնը զրոյլ՝ Խորենացին, անշուշտ ապրեց մինչև Զենոնի և Պարսից Պերոզի ժամանակը : ուստի և հ ա ւ ա ն ա կ ա ն է, որ Նրա պատմութեան առաջին օրինակներում յիշուած լինէր իբրև թուական, կամ թուականութեան հետ միասին Զենոն կայսեր անունը և այդպիսի մի յիշատակարանից երեխ առաւ Անցին Մովսէսի (մահուան) թուականը՝ 493, որ մեզ շատ մօտ է երեսում ճշմարտութեան, եթէ նոյն իսկ ինքը Ճշմարտութիւնը:

Թովմա Արծրունու համար (ինչպէս և Սերէսուի և Յով. կաթողիկոսի համար) Խորենացու պատմութիւնը ա զ բ ի ւ ր է ր Ադամից մինչև Զենոն կայսրը, և այդ ժամանակամիջոցի համար Թովման չունէր այլ աղբիր, չհաշուելով Եղիշէի կամ Փարոպիցու մասն ա կ ա ն պատմութիւնները 2:

Երբորդ կէտ: Թովման յիշում է Խորիւնին իբրև վկայ հաւատարմութեան Մովսէսի պատմութեան, որովհետեւ Սահակի (Պարմէկ) և Մաշտոցի մասին պատմուածները կ ա ն և Ա ո ր ի ւ ն ի մէջ չ, որ անշուշտ, թէ Մովսիսից և թէ Ա. արդ գ ա ն ա ն ց Պ ա տ ե ր ա զ մ ի ց ա ռ ա ջ է ր զրել 5: Խորիւնի մէջ վիտուել Մովսէսի 120 տարեկան կամ ծեր լինելու մասին վկայութիւն և non-sens է, քանի որ այդպիսի բան, ըստ Էռութեան, չէր կարող լինել: Թովմայի խօսքերը, թէ՝ զոր և երանելին Կորիւն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ սրբոյն Մեսրովայ, յիւրում

սէջ եւ թէ այն, որ Մամուհսախտ եւ Մապսուեստ միեւնուն քաղաքն է՝ Աիլէկիայում: 437-դ. Տանօթութեան մէջ առում է, որ Անի ամրոցն այժմս կոյւում է Ա. ւ ա շ է ր տ (? !) եւ այլ այսպիսի բաներ:

Ասց պատուածնեցինեւ: Արժանադրամիւ Հօր աշխատանքը օ դ ա ա ւ է տ ե ւ գ ե ղ ե ց ի կ ո ր ծ է, մանաւանդ օստրազգի լեզուներ չգիտցողների, այն է՝ մի ժամանութեան համար, եւ նոյն իսկ սցդ լեզուներն գիտցողների համար էլ, եւ ընդունակ սրբագրուելու: Քննողատութեան ի բ ա ւ ա ց ի ցուցումների համեմատ:

1) Ակրեսուը իւր առաջին գլուխը սկսում է՝ Պերոզով: իսկ իւր ժամանակակրական ցանկում Զենոնին դնում է ժամանակակից Պերոզի (եւ Ա.ահան Մամիկոնեանի) (պատմ. Աեր. Եոզ. 4879, եր. 24, 19):

2) Խորենացու Պատմութեան երրորդ (Հորբորդ համարուած) Գրիեց յետոյ թովման իբրև աղբիւր յիշում է՝ «Համառօտութիւն Արքահամու խոստվանողի» (եր. 30), Եղիշէ (եր. 81) եւ չունի այլ եւս ոչինչ քաղաք Խորենացուց:

3) Այս բանին վկայութիւն է Խորեն մէջ Բովսէփ անունը:

4) Աշխարհաբար Խորենացի, յառաջաբան եր, ից Ա:

ստուգաբանեալ և պատմութեան զայսոսիկ մեզ հաւատարմացուցանէ, անշնուշտ վերաբերում են այն կտորներին, Մաշտոցի և Սահակի մահուան վրայօք, որ Խորենացին երեկի փախ է առ եւ Կորիւնից, աւելացնելով ինչ որ կարող էր լսել նաև ժամանակակից ականատեսներից, ինքը Պարմեկի և Մաշտոցի վախճանին բացակայ լինելով Հայաստանից:

Խորենացին ապրելով մինչև 493 թուականը, անկասկած կարող էր գրել և կրօնական պատերազմների պատմութիւնը, իրօք հասցնելովիր գրուածքը մինչև Զենոն կայոր inclusivement, բայց այդ բանը չարաւ նա, որովհետեւ գրում էր Սահակ Բագրատունու ինդրանօք, իսկ Բագրատունիները, ինչպէս պարզ յայտնի է Եղիշեից, Վարդանանց կորիւներում բռնել էին ուրացողների, այն է՝ Վասարի կողմը, ուստի և Խորենացին ստիպուած էր բաւականեալ մի ընդհանուր ողբով:

Այստեղ վերջացնում ենք մեր այս յօդուածը, կարծելով ապացուցած լինել, այ Խորենացու չորրորդ գիրը դցաւթիւն չունէր, բ. ուստի և այդ չորրորդ գրքի մասին ոչինչ չգիտէր և Թուղմա Արծրունին, գ. 2որ. րորդ գրքի գոյութիւնը սկիզբն է առել գիմը գա կարդացուելուց, զրչագրքի վրիպակից կամ սխալ վերձանութիւնից, գ. Արծրունու բոլոր յիշածները գտնեւում են Խորենացու մէջ, բացի Զենոն կայորից և Հարիւր քասն թուից, և այդ երկուսն էլ չպէտք է լինէին ըստ ինքեան, քանի որ Խորենացին չէր կարող գրել իւր մահուան թուականը կամ իւր տարիքի չափը մեռնելու օրին, իսկ մինչև Զենոն պէտք է հասկանալ ոչ միասին կամ միանգամայն առած (inclusivement, включительного), այլ միամին չհաշուած—exclusivement.

Քանասէրները փոխանակ նախապէս Արծրունու բնագիրը հետազոտելու, ընտրել են աւելի գիւրին ճանապարհը, անձնատուր լինելով զանազան ձրի տեսութեանց (spéculation) և ենթագրութեանց, ուստի և չեն հասել բաւարար եղբակացութեան:

Այսպիսով հերթում է վերջնականապէս և հայ հոգեորականութեան վրայ ծանրացող այն ահազին ամրաստանութիւնը, որ իրրե թէ սրանք այրած լինէին այդ ենթագրեալ չոր բոր գիւրքը:

Յ ա ւ ե լ ո ւ ա ծ . 2որրորդ գրքի մասին յայտնուած բազմաթիւ կարծիքնե-

1) «Ստուգաբանեալ» պատմութիւն է կոչւում կորիւնի գրած Մերովովի վարքը, որի մէջ կորիւնն ասում է. «Ոչ եթէ ի հին համբաւուց տեղիկացիալ եւ մատենագրական զայս կարգեցաք, այլ որ ոց մեր ի սկ ա կան ա տե և ե զ ե ա լ կերպարանացն» եւ առջնթերակայ հոգեորական գործոց, եւ լսող շնորհապատւմ վարդապետութեանն, եւ նոցին արբանեակ ըստ աշետարանական հրամանացն» (կորիւն, եր + 28).

րից և ենթագրութիւններից մի քանիսը, նոյն իսկ մեր այս՝ չորրորդ գլոբից ոյսութեան հեղբուժից յետոյ, կարծես թէ պահպանում են իրենց զօրութիւնը, ուստի և այս յաւելուածում պարտաւորւում ենք մի քանի խօսք ասել դրանց մասին, Մի կողմ թողնելով այն բազմաթիւ հատուկտորները, որոնք և. Ալիշան իւր 1851 -ի յօդուածում համարում է ենթադրեալ Դ գլոբի մասն, կանգ առնենք «ի Պարսից առասպելեաց» երկու գլուխ գրուածքի մի վկայութեան վրայ. — Այլ ծանիր զատելութիւն մեր առայսպիսի բան (առ առասպելս Պարսից), զի ոչ յ առ ա ջի ն ս ն մեր ասցեալ գիրս, և ոչ ի վե ջի ն բ ա ն ս արժանաւորեցաք շարել այլ զատ և որիշ։ Այս հատուածից և. Ալիշան հետեցնում է թէ «առ ա ջի ն գ ր ք ե ր ս ասելով Խորենացին հասկանում է՝ իւր Պատմութեան առաջին, Երկրորդ և Երրորդ գիրքը, իսկ «վերջին բանով» չորրորդ գիրքը, որի և մասն է համարում և. Ալիշանն այդ «ի Պարսից առասպելեաց» երկու գըլուխը՝ Կախ այդ երկու գլխի համար է, որ Խորենացին ասում է թէ արժան չհամարեց զնել ոչ առաջին գրքերում և ոչ ի վե ր ջի ն բ ա ն ը ս ։ Ուրեմն և եթէ ընդունենք անդամ, որ «վերջին բանքով» ակնարկուած է չորրորդ գիրքը, այսուամենայնիւ՝ այդ գլոբի մասը չէին կարող լինել նոյն իսկ իւր՝ Խորենացու խօսքերով՝ Պարսից առասպելները, Բայց տեսնենք «վերջին բանք» նշանակում են արգեճք չորրորդ գիրք։ Ուշադրութեան մէջ այս միակ հատուածն է, որի մէջ թէեւ աղօտ, սակայն՝ միակ և բաւականաչափ որոշ վկայութիւնը կարելի է դժունը Պատմութեան գրքերի թուի մաս ս ի ն ։ Ա. Երջին բանքը՝ անորոշ ասացուածով անկասկած կարելի է հասկանալ և Երրորդ գիրք, և չորրորդ գիրք, և հինգերորդ, և վեցերորդ։ Աչ մի փաստ չկայ «վերջին բանքով» անպատճառ չորրորդ գիրք հասկանալուն։ Ընդհակառակն՝ մենք ունինք փաստ, որ ստիպում է մեզ «վերջին բանքով» անպատճառ հասկանալ երբ որ գ ի ր.ք. Այդ փաստը նոյն իսկ Երրորդ գլոբի անունն է։ Աւարտաբառութիւնն ։ Աւարտաբառութիւնն նոյնանիշ է վերջաբանութիւն կամ վերջին բառ բառերի հետ հանդիպութիւն առաջանանական գլուխութիւն անդամ կամ վերջին բանքը առաջանանական գլուխութիւն անդամ կամ վերջին բանքը անշուշտ Աւարտաբառ անութիւն ու թէ ե ա ն, այն է՝ Երրորդ գիրքն էր ։ Իսկ եթէ

1) Ռուսոր թարգմանիները միտակեակ սիամալ հն թարգմանում ոյս նշանաւոր հատուածը, անշուշտ բացի չ. Ալիշանից, յառաջինան մեր ասացեալ գիրս՝ թարգմանում են եր գ ա կ ի առանց ուշք դարձնելու, ոյ ա ս ա ջ ի ն ս ն ս բառի յոգնակի ձեւելու, իսկ ովերջին բանքը՝ թարգմանում են՝ վերջին բանք՝ ասելով հասկանում էր իւր Պատմութեան գրքերից որևէ է մէկը, այդ անշուշտ Աւարտաբառ անութիւն ու թէ ե ա ն, այն է՝ Երրորդ գիրքն էր ։ Իսկ եթէ

վերջինը առաջ է երրորդ գիրքն է, ուրեմն առաջին գրքերը կլինին՝  
առաջին և երկրորդ գրքերը այս է՝ Ծննդաբանութիւնը ու Տիրակ Պատ-  
մութիւնը, ինչոր պահանջ առաջարկութիւնը մասն ու ամենամեծ մասն

Մեռմ է մեզ խօսիլ Հ. Ելիշանի գտած վերին աստիճանի հետաքրքրական հատուածի վրայ). որը բաղմահմուտ և պատկառելի ծերունին գեռսրանից քատասածն տարի առաջ համարում էր չորրորդ գրքի մասն ինպէսայդ համարում է և մինչև զարութ ԱՀՀ առ հառաւած ամսութեանին.

8-1-1- 1-1-1-1 S-1-1-1-1 1-1-1-1-1 1-1-1-1 1-1-1-1

Եսկ թագաւորն Տրդատ յետ հաւատոցն ի Քրիստոս՝ ամենայն առաքի-նութեամբ փայլեալ մինչև ցվախճան արի և ծերութեան. այլ խստարտութիւնն ազգի մերոյ կամ ամբարտաւանութիւնն որ ի սկզբանէ պատահեցին՝ ամենայն գլորմանց սոցա պատճառք. քանզի շարք ոմանք հրամանաւ Ըապհոյ Խորհեցան սպանանել զԾրդատ, և մրւանդամ անդրէն զկոապաշտութիւնն հաստատել յաշխարհիս Հայոց. յորում խորհրդի լեալ էր և սենեկապետն Ծրդատայ ըստ օրինակի Յուդայի մատնչի. Բայց ոչ գիտէր թագաւորն թէ քանիք կամ ոյք իցեն. վասն որոյ կուեալ զսենեկապանն զայն, հարցանէր եթէ իցէ ինչ ի գրանս արդարեւ այսպիսի խորհուրդ: Նա իբրև լոււաւ զահի հարեալ սրտարեկ լինէր, և ուրացաւ թէ ոչ երբէք լուեալ է իմ այսպիսի բանս. վասն որոյ ելեալ առ ընկերուերիղազին, ի բաց կորուսանէին զխորհուրդն անօրէնութեան որպէս զարհուրեալք. Բայց ինքն թագաւորն ոչ առնելով դուշ հեռանայր յարեմուտս կոյս մինչև ի գաւառն Եկեղեց, տեղի տուեալ լրոյն այնորիկ. Խւ քանզի բազումք էին ի խորհրդին. ոմանք զկնի նորա գնացին, մանաւանդ ազատքն Ոիւնեաց կողմանցն. որք առաւել հրամանակատարք Ըապհոյ լինէին վասն աշխարհին իւրեանց Խաղաղական մնալց. Որբ և ի յորս երեսոց երբեմն ընդ թագաւորին լինելով յորոց և խոցեալ լինի թագաւորն որպէս թէ յանգէտս ուստեք դիպեալ պատահեաց նետն. և եկեալ յարբունիսն դնի ի մահիճս սակաւ ինչ վիրաւորեալ. Յորոց մտեալ սենեկապանն այն պատել զվերս նորաւ և տեսեալ զի ոչ մեռանել նմա ի վիրէն՝ արբուցանէ գեղ մահու և վախճանէ. որ յետոյ յայտնի իսկ ե-

Համարեցիք գրել (ողբեկն շաբաթը զետէ) ոչ առաջ ու ի հայ գրքի մեջ եւ ոչ գիր-  
շան գլուխերում, ոչև զատ եւ տառը ձիս:

դե ի նորին խորհրդակցացն։ Եւ քարձեալ տարան զնա ի Թորդան արծակ թագաստ գիտեալիր գագաղօք յորում լծեալ ջորիք ուկեսանձը և դունակ հանգերձիւք զգագաղըն զարդարելով։ և վաշտք զօրացն ատոփ և անտի վառեալք գինուք և նշանակօք իսկ առաջի գագաղացն ձայն աստուածօրչնութեան և բուրմօնք խնկոց իսկ արտի և անտի բարեկամք և սիրելիք բնտանիք և բազումք յորդացն նորա հետևակ անկեալ և գինի դագաղացն վաղք և տափէղք ողբոց և կաւսանիք ողբասաց թող դայլ աշմենայն ամիկոն որ երթային զիետ անմիւ բազմութեամբ և այսպէս հասեալք ի տեղին արարեալ տապան թագաւորական ի քարանց կճեաց և ի վերայ ապակի արկեալ յորում եղեալ զդանձն պատուական զանուշահոտ զպատարացն զմեծ վաստակաւորն և տարեալթաղեցին զնա ի տեղւոց սրուսանաց մեծին Գրիգորի զոր պարսպեալ անուանեաց իւր պարտէզ և կանոնեցին զօր կատարման նորա տոնել ամ յամէ զոր յանձն արարեալ եպիսկոպոսին գեղջն գնացին Տրդատ թագաւորեալ ամն 57 և ապա կատարեալ ի Հայր և յորդի և ի Հոգին սուրբ։

Աչ մի տարակոյս չկայ որ մեզանից հազար տարի առաջ այս հասուածը արգէն մուտք էր գտած Խորենացու մի քանի օրինակների մէջ՝ մասնաւորապէս Թովման Երծրունու ձեռքումն եղած օրինակում բայց ոչ իբրև չորրոդ գիրք կամ չորրորդի մասն ինչպէս կարծեց Հ. Ալիշան և Նրան հետեւով շատերը այլ ի բ ը և յաւելուած երկրո րդ գրի ո րդ գրքի վերջում Ահա Երծրունու վկայութիւնը բայց մեք զյոյժ հաշակեալն միայն նշանակեցաք սրբոյ թագաւորին և քաջ նահատկին Տրդատայ զբարիք պատերազմ պատերազմեալ ընդդէմ անմարմին և մարմնաւոր պատերազմողաց փոխի Երկրուառ աշխատութեանցո ի հանգիստ մեծաւ պատուով թագաւորական շնչք եղան շքեղ դե երեւելի դիազ ը գ ու թե ա մ ը ո ր պ ու թե ա մ ը ո ր պ ու թե ա մ ն շքեղ դ ե ե ր ե լ ի դ ի ա զ ա ը ք ո ւ թե ա մ ը ը ո ր պ է ս ը ն մ ե ռ ն ո ւ ք ի բ ա ն ի բ ու ն գ ր ա կ ա ր գ ու թե ա ն մ ա ս ի ն ։ Սովուէսի տիեզերահուշակեալ վարդապետի և քերթողի և մերայ լուսաւորութեանցո հաստատագոյն յօրինողի ո ր պ է ս պ ա տ մ է ի գ լ ո ւ խ ե ր կ ր ո ր գ ի պ ա տ մ ա գ ը ը ո ւ թե ա ա ն ։ (աաազին հրատարակ Ա. Պոլիս 1852 եր 62—63 Երկրորդ հրատ Ա. Պետերբուրգ 1887 եր 58) Մեր այժմեան Խորենացիների մէջ ոչինչ չկայ Տրդատի մեծաւ պատուով թագաւորական մասին Ակներե է որ այս խօսքերը ակնարկում են Հ. Ալիշանի գտած հատուածին Այս հատուածը Թովմայի Խորենացու օրինակի մէջ դրուած էր երկրորդ գրքի վերջում ։ Ի գ լ ո ւ ի բ ա ռ ը մենք վերջ ենք թարգմանում խօսավանելով հանգերձ որ գ լ ո ւ ի սովորական նշանակութիւնը է ս կ ի զ ր ն ։ բայց կայ այդ բառը և Երկրորդ նշանակութեամբ զործածուած իրրե վերջ կա-

տարած, գլխաւորումն է Այս յայտնի է նաև՝ դիմաւորել գլխել ի զլուս  
հանել բայերից, որ նշանակում են՝ վերջաւորել վերջացնել վերջանալ,  
(տե՛ս և Հայկաղ, բառգիրք զլուս ծագ յետին կատարած, դիմաւո-  
րումն). Եթե չորրորդ գիրքը դպրումիւն ուներ այն ժամանակ այդ դիր-  
քը պետք է լիներ անշնչառ թովմա Արծրունու Խորենացու օրինակում,  
և եթե այս Տրդատայ մահուան վերաբերեալ հատուածը չորրորդի մասն  
էր պետք է վետեղուած լիներ այդ չորրորդ գրքում, և ոչ թէ երկրորդ  
դրբի վերջում ինչպէս վկայում է ինքը Թովման, Այսուղից էլ է եր-  
եռում պարզապէս որ ոչ չորրորդ գիրք հար և ոչ էլ այս հասուածը  
չորրորդի մասն Էր 2).

Մեր կարծիքով՝ Յա զագս մահուան Տրգ աւայ թագաւորի ի-  
նը ի, և զօրի ի բառ չի և և ապի նոյ յօդուածը վկայաբանական մի  
գրուածք է, մասսամբ հետեւթեամբ Խորենացու և մասումը մի ուրիշ ա-  
ւանդութեան վրայ հիմնուած։ Ծարադրուած է Տրդատի սրբոց կարգը  
դասուելը, առթիւ և կանոնեցին զօր կատարման նորա տօնել ամ յա-  
մէ, Խորենացոյն էլ թէ Տրդատին սուրբ է անուանում, բայց նրան սրբոց  
կարգը դասելու մասին ոչինչ չէ ասում։ Տրդատի սպանման մանրամաս-  
նութիւնները՝ թէ նա տուած նետով վիրաւորուեց նման Գնէլի, «որպէս  
թէ յանդէտս ուստեղ դիմեալ պատահեաց նետն» անծանօթ են Խորենա-  
ցուն, նոյնպէս Տրդատի սպանութեան մէջ Ծաղուհի մաս ունենալը.  
Մանաւանդ պատճառաբանութիւնը, թէ կամենում էին նորից կռապաշ-  
տութիւնը հաստատել Հայաստանում անտեղի է, նախարարները ըստ  
Խորենացու պահանջում էին միմիայն որ Տրդատը կրօնական գործերում  
բանութիւն գործ չդնէ ։ Իսկ յայտնի է որ Տրդատը Արգարի նման չէր  
բաւականանում միմիայն Հաւանեցոցանողականաւ բանիւց այլ գոր-  
ծում ։ Եր նաև բռնաւորկանաւ բանիւ, քանզի ըստ Հաւատոյն ոչ  
ինչ կասեցուցաներ զգործն (Բ 92)։ Թաղման հանդիսի նկարագրու-  
թիւնը մասսամբ Ագաթանգեղոսի բառերով է կազմած ոսկի և արծաթ,  
ձիս և զորիս և հանդերձս գունակ գունակ զարդ։ (Ագաթ. ՃՓԳ),  
բայց զիմաւորապէս և այս աչքի զարնելու շափու նմանութիւն է Արտա-  
ւուածուած առանձնութ խն մըս ։ Յա այս առանձնութ առաջնորդ մասնակիութեան ըստ

1) Արծրունու պատկ Քարք մանիչը, Բրոսուէն և գլուխ երկրորդի պատմագրու-  
թեան, ապացուածը թույգունում է։ “en tête du second livre de son Histoire,”  
յետոյ ծանօթւթեան մէջ տեղի փոխանակ գունում է “dans le cours,” Արկու-  
թարդ մասութիւնն էլ, ըստ մեր կարծեաց, անշաջող են

2) Հ. Ալեքսանդ յօդուածուած փոխանակ ի գլուխս ի կայ «իգլոււխս ընթերցուա-  
ծը» բայց նոյն չեն երտոշիւալուամ ոչ Արծրունու երկու հրամատակութիւնները, և ոչ  
պատկանեանի բազուգատած ձեռագրերը.

շիսի թաղման ըստ Խորենացու Անշուշտ ինքը Խորենացին չէր նկարագրի երկու թագուորի թաղումը նոյն տեսակ և գրեթե նոյն բառերով։ Տրդատի թաղման անցոյած հեղինակը աշխատել է զուրս թողնել Արտաշիսի թաղման նկարագրից հեթանոսական սպորտմիւները և երկում է որ նա չէ գրել խարդախ մոքով։ որ ներմուծեր իւր գրուածքը Խորենացու մէջ, ապա թէ ոչ չէր կրնի Խորենացու խօսքերը, առներզ և գրքի վերջին գլուխ և ոչ ել նոյն տեղից առած Տրդատի քանի տարի թագաւորելը, այլ Կաշխատէր յարմարացնել իւր գրուածքը իրեն յաւելուած։ Պարզ է որ յիսոյ է ներմուծուել այս գրուածքը Խորենացու մի քանի օրինակների մէջ, ըստ յարմարութեան տեղույն, և գրքի վերջում։ Եթէ ոյս հասուածք հարազատ լիներ անկարելի էր մեզ բացատրել թէ ի՞նչ պատճառավ նա կարգ էր գուրս ձգուել մեզ յայտնի պատմութեան բոլոր ձեռագրերից։ Համեմատութեան համար ահա Արտաշիսի թաղման հանդիսի նկարագրից մի հատուած։

Հասանէ վախճան Արտաշիսի, և զբէ, և թէ որշափ ամրոխութիւնը մեռուն ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք և հարճք և մուերիմ ծառայք և որպիսի շուրջ բազմադիմս արարին առ ի պատի, գիշն, քաղաքական կարգօք և ոչ որպէս զբարբարոս։ Դագագըն էին ոսկեզնքը, գահոցն և անկազմիւն բժիշկեայ, և պատմուանն որ գմարմնովն՝ ոսկեթել թագ կապեալ ի զլուխն, և զենն ոսկով առաջի եգեալ, և զգահցիւքն շուրջ՝ որդիքն և բազմութիւն ազգականացն, և առ այսորիւք պաշտօնէթիցն զինուորութիւնը, և նահապետքն և նախարարութեանցն գունդք և միանդամայն զօրականացն վաշտք, ամեններին կազմեալ զինու հանգերձ, իրը թէ ի պատերազմ ճակատիցին, և առաջի պղնձիս հարկանելով փողս, և զինիսն ձայնարկու կուռանկը սեազգեստք և աշխարոզ կանայք, և զհետ՝ բազմութիւն առմին, և այսուէս ուրբեալ թագեցին։ Նւ շուրջ զգերեզմանաւն լինէին կամաւոր մահունք (Բ. 60), Խնչպէս վերն ասացինք, նկարագրի հեթանոսական մասերը գուրս ևն թողուած կամ փօխուած են բրիստոնէականի։

Արեմն մեր կարծիքով ։ Ալիշանի գուած հատուածը, ոչ միայն ըրբորդ ենթագրական զբքից չէ, այլ չէ նոյն իսկ Խորենացու գրուածք։ Դա է լոկ մի վայելուշ և գեղեցիկ վկայարանութիւն, հանուած ճառընթից և երբեմն, մեզնից հազար տարի առաջ, ներմուծուած Խորենացու մի քանի օրինակներում։ Մի կրօնական ներմուծութիւն եղել է Խորենացու և երրորդ գրքի վերջում (1), ուրեմն և անօրինակ բան չեն այդպիսի ներմուծութիւնները։

1) Տես «Հանդէս ամորեայ» 1890 մայիս եր. 114—115 և «Փարաս» 1874 տես.

Նեթէ մի բան, մի հարազատ հատուցած, պակաս կայ մեր այժմեան  
Խորենացու մէջ՝ այդ միմիայն քան. կամ Տաղ շափաւ լինըն և ի Աս-  
հակ Քաղրատունին. և, որ պէտք է լինէր երրորդ գրքի վերջում,  
որովհետեւ այս վերնագիրը գտնուում է ընտիր ձեռագրերում, և ը որ դ  
գրքի վերջին գլխի վերտառութեան մէջ, Եւյս տաղն էլ և. Ելիշանը հա-  
մարում է չ օրորոր գրքի մասն, Խորենացու մէջ միակ պակասը, մեր  
կարծիքով այս տաղն է, որի մասին մեր արած հետազոտութիւնները  
հասցրել են մեզ մի որ ոշ հետեւ աւանքի, բայց որի մասին կիսուինք  
ուրիշ անգամ, առանձին յօդու ածով:

Երկրորդ յաւելուած . Խորենացու չորրորդ գրքի գոյութեան վկայութիւններից մէկն էլ է Քաղէշու Ամրդոլու վանքում գտնուող Խորենացու իրը թէ ամբողջ ձեռագիրը , հանգերձ չորրորդ գրքով . Այս մասին յիշում է Հ. Ալիշան . 40 տարի առաջ , իսկ Հ. Սրուանձտեան այդ վանքի գրադարանի մասին տալիս է մեզ հետեւեալ հետաքրքրական ծանօթութիւնը . Համրաւաւոր է սոյն մատենագրան , ցոյց շեն տար այլոց գուրս և զածները միայն տեսայ ես . 1) Մեզ անհարին է անշուշտ ստուգելոր և է ճանապարհով այդ Ամրդոլու վանքի չորրորդ գրքի լինել կամ չլինելը , բայց դրա փոխարէն տալիս ենք ընթերցողներին նոյն այդ վանքում գրուած Խորենացու մի այլ ձեռագրին յիշատակարանները . Այս վերջին ձեռագիրը չդիտենք որչափ ժամանակից ի վեր գտընաւում է Մայր Եթուախ դրագրանում , 2463 թուահամարով . Ինըք կաշեկազմ է , կոկուած դեղնաւուն թղթի վրայ գրուած , բոլորագիր . ընտիր գրչութիւն . սկզբումն ունի մի մագաղաթեայ թերթ երկաթագիր (աւետարանից) , գիրը 19×25 հարիւրամետր : Այս ստուար ձեռագիրը հաւաքածոյ է Պատմութեանց Բովանդակութիւնն է . Ագոմանգեղոսի պատմութիւն , Դաշնանց թուղթ . Մեծին Ներսիսի վարքը , Պատմութիւն Մովսիսի

Խորենացւոյ Պատմութիւն Եղիշէի Պատմութիւն Վազարայ Փարսկեցւոյ Թուղթ Վազարայ առ Աահան Մամիկոնեան Պատմութիւն Սերեսոյ Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեօրովպայ Աորեան Այս վերջին երկուը վերնագիր չունին Այս և սրա նման հաւաքածուն կարդացալ առանց սուտ խօսած լինելու կարող էր ասել ըստ վկայութեան և Ելիշանի յառաջ քան զատկաւ ամս յԵմըրտուու վանս ի Բաղեշ հանդիպեալ դրոցն (Մովս. Խորենացւոյ) և ընթերցնալ զպատճութիւնն աշենոն կայսր 1) ։ Սոյն ձեռագիրն ունի և մի քանի պատկիր և բազմաժմիւ զարդեր լուսանցքում և գլխակարգութեանց սկզբին Առաջին պատկերի տակ գրուած է ։ յիշեայ զիս տէր իմ և ստեղծող զվանեցի Սահակ ծաղկուզ ։ Առաջին յիշատակարանին հանդիպում ենք Ագաթանգեղոսի մէջ ։ զԱրդան վարդապետն զԲաղիշեցին յիշեցէք ի Քրիստոս և աստուած ողորմի ասացէք իւրն և ծնօղաց իւրոց՝ որ ետ գրել զամ յիշատակ իւրն և եգ ի գուռն սուրբ Յովանիսայ Եւ զիս զմեղաւոր Պօղոս սուս երեցս որ եմ գծող սորաւ աղաւէմ յիշել ի տէր և գուք յիշողք յիշեալ լիջիք մուածի Քրիստոսի Մի այլ տեղ՝ Ափեղբարք և Հոգեոր հարք և սպասաւորք և քարողիչք Բանին Աստուծոյ որք ընթեռնուք զայս զիրքս և Հոգեառ բանս օգտիք ի սմանէ ։ յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զԱրդան վարդապետն զԲաղիշեցին և զիս զՊօղոս երեցս զԴաւլցիս որ եմ գծող սորաւ ։

Սրբոյն Գրիգորի վարդապետութեան վերջում ։ Քրիստոս Աստուծան բարեխստութեամբ և աղօթիւք օրբոյն Գրիգորի Լուսաւորչին ողորմեա ստացողի գրոցս Վարդան քաջ և սրբաւէր վարդապետին և իւր ծնօղաց հօրն Եղիշին և մօրն Վարիպին և եղբարցն Խաչատուրին և Խօշխաբարին ։ Եւս առաւել հոգեառ ծնօղին իւրոց Խաչատուր բարունապետին և հոգեառ որգոց իւրոց Արբահամ վարդապետին և Սարդիս պատանեկին Զի յայժմիր և փափաքանօք ետ գրել զգիրք զայս յիշատակ իւրն և ծնօղաց իւրոց յիշելով զբան մարդարեին որ ասէ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն այսինքն յեկեղեցի և ընդանեակս ի վերինն երուսաղէմ ։ Արդ աղաւէմ զձեզ ով հոգեառ հարք և սիրելի եղբարք օրք հանդիպիք այս սուրբ տառիս ինչ կերպիւ և իցե թէ կարդալով թէ օրինակ գնելով և կամ հարևանցի տեսանելով յիշեցէք ի մաքրափայլ յաղօժմ ձեր զԱրդան քաջ և բարունի վարդապետն զԲաղիշեցին որ իրին զարեգակն փայլէ և լուսաւորէ զիսաւարեալ և մեղսաւէր մարդիկք ասելով և իրատելով և զամենեսեան դարձուցանէ ի չարեաց քաղցր բարբառովն և աստուածային քարոզութեամբն զի միշտ և հանապազ ոչ գագարի ի քարոզելոյ

և յուսուցանելոյ:

Ֆանգի զբաղում՝ ժամանակաց զխանգարեալ և զարեալ եկեղեցիսն նորոգեալ կանցնեաց և զու եղեալն շինեաց և հիմանէ և այլ բազում բարեգործութիւնն արար ի վերայ երկրի գոր ոչ կարեմ մի ըստ միոջէ արկանել ի չարս քարտիսիս:

այլ բարեաց հատուցանողն որ տայ պիրողաց իւրօց զիւր անձառ բարիսն՝ տացէ նմա և զիւր երկնից արքայութիւնն ի միւսանդամ գալատեանն իւրում և ի կեանս յայս ընդ երկայն աւուրս պահեացէ զնաւ ամէն: Եօ Պօղոս քծող սորա ազաշեմ զձեց զի յիշման արժան առնէք զիս:

**Դաշտնց թղթի վերջում կայ հետեւալ յիշատակարանը.**

Արդ ես Ա.արդան վարդապետս Բաղիշեցիս ցանկացայ բարի աւուրցն որ միշտ արծարծէր չնորհք Հոգւցն օրրայ յարժանաւորս իւր: սիրոյ նոցին և աղօթիցն տենչացայ: Եւ ետու գրել զպատմութիւն սուրբ կաթողիկոսացն և թագաւորացն: զի աղօթիք նոցա ողորմեսցի Քրիստոս Աստուած մեզ և մերոցս ամենայի: Հօրս իմոյ Եղիային և մօրս Դ.արիպին և եղբարցս Խաչատուրին և Խոշխապարին և զաւակաց նոցին: Եւ ևս առաւել Հոգեւոր Հօրս իմոյ և ուսուցի: Խաղիշեցցին: որ յախմ ամի որ ըզգիրս ետու ծրել՝ Ժ. ամաւ յառաջ փոխեալ է առ տէր: Եւ նորարողոց Հոգեւոր որդոցս իմ՝ Արքահամ վարդապետի Համեթեցոյն և Սարգիս փոքը պատանեկին և մրաբան եղբարցն ամենեցուն որ կան ի սուրբ ուխտո Յովհաննու Մկրտչի: ի ծառայութիւն սուրբ խորանացս և ի սպասամուռութիւն մեզ: որ մականուամբ Ա.մրդոլու վանք ասի: Արդ աղաշեմ զձեզ: ով Հարք մեր և եղբարք: որք ընթեռնուք և Հոգեւոր բանս օգտիք ի սուրբ գրոցս: բոլոր Հաւատով աստուած ողօրմի ասացէք ինձ Ա.արդան վարդապետիս և քծագրողի սորա Հոգեւոր որդուոյ իմոյ տէր Պօղոս երիցու Դաւուրցոյ և գուք յիշողքոյ յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի: ամէն: Գրեցաւ ի Ռ. և ի Ճ. և ի Ի. թղթին (1121—1672).

Խորենացու Ա.գիրք: 5 գլխում: «զՊօղոս մեղապարտ երեցոյ յիշման արժանի արաւ: ոսկիցդ Հող եմ և փոշի: Փոքր ինչ ներքեռում: զԱ.արդան վարդապետն: . . . և Պօղոս գծօղս զոտդ կու Համբուրէ որ թէ յիշման արժան առնես: Փոքրը ինչ յետոյ: «Դարձեալ յիշեցէք . . . և այլն: 19 զլիսում»: Արդ յիշեցէք . . . զԱ.արդան վարդապետն բաղիշեցին որ ետ զրել զպատմաղիրքս . . . և այլն: Խորենացու մէջ լուսանցքում և էջերի ստորեւում կան նշանակուած նոյն զըսով ուղղութիւններ և տարբեր ընթերցուածներ: Երկրորդ հատորի ցանկից յետոյ: «զԱ.արդան . . . յիշեցէք . . . և Բաբոնենց Յովհաննէս վարդապետին և ինձ . . . : Երկրորդ գրքի վերջում: Արդ յերես անկեալ աղաշեմ զձեզ ով սուրբ Հարք և վարդապետք և իմօստուն ընթերցուզք այսմ ասանիս: զի յիշման արժան առ-

նէք զիողին միիլիսոփայն և զհողիընկալ վարդապետն զՎարդան Քաղի-  
շեցին, որ յայսմ ամի ի հալածանս է յանիծեալ աղքէն մահմետակա-  
նաց՝ յերկիրն Սուրացոց, որ այժմ Հազու վերաձայնի. Որ յայսմ հալա-  
ծանաց միջի ետ գրել զգիրս յիշատակ իւրն և ծնօղաց իւրոց, Եւ ես  
Պողոս ուսւ երեցս որ եմ գծողատոիս աղաջեմ զձեզ զի յիշման ար-  
ժան առնէք զիս, Խորենացու վերջում. • Փառք . . . • Որ կարողացոյց  
զիս ծրագրել զպատմութիւն թագաւորացն մերոց ի Յարեթէ սկսեալ մինչ  
ի Սահակ հայրապետ Պարթևն, Աղաչեմ զձեզ զամենեաւան յիշելոյ և  
թողութիւն խնդրելոյ . . . Եւս առաւել զհողեր հայրն Խորա զեաչա-  
տուր քաջ վարդապետն զբաղիշեցին և զբարունենց Յովհաննէս վարդա-  
պետն. որ նա ևս բազում աշխատութիւն ունի ի վերայ նորայ. ի գրոց  
սերտցուլն, Եւ զիւր աշակերտն զԱրքահամ վարդապետն զՀամթե-  
ցին . . . • Թողութիւն արա՝ խիստ եմ նեղացեր. Մեծին Ներսիսի  
կենսագրութեան մէջ երկու տեղ այսպէս. «ով եղայր, այս բակապ  
է, ի նշանած տեղն պիտի, ահա ի ներսիսի պատմութեան վերջն գրեցայք,  
բաց և կարգա. . . . Եւ այս ևս պակաս է՝ ի վերջն պատմութեանս դիմ. . . .  
Եւ զայս ևս ի վերջ պատմութեանս գտցես. Սրբյն Սահակայ տեսիլքից  
առաջ. «Զբաղմավէր հոգիս՝ և զաղքատո ի բարեաց և զլրացեալ ի չա-  
րեաց՝ զՊողոս գրիս՝ զտարտամեալս և զտարագրեալս ի կենաց կտակէն,  
պատահող սմա յիշման առնէք արժանի. Եւս և զստացող տառիս՝ ըգ-  
Արդան վարդապետն և զիւր ծնօղոն և զամենայն երախտաւորքն իւր, և  
գուք յիշողքդ՝ յիշեալ լիճիք առաջի քրիստոսի, ամէն. Այս՝ Պողոս  
գրչ վերջին խնդրուածքն է, սրանից յետոյ շարունակում է նա ընդօրի-  
նակել. բայց չէ ատիկում նոր յիշատակարան գրել, ընդօրինակում է ամ-  
բողջ Եղիշէն և Եղիշէի յիշատակարանը, որը կիսատ է մնում, ամենա-  
հաւանականաբար վրայ հասնելով «իիստ նեղացած — յոդնած և տար-  
տամեալ». Պողոս գրչին հիւանդութիւն և մահ.

Հաւաքածուն շարունակում է նոյն Վարդան վարդապետի համար ուրիշ  
գրչի ձեռքով, Եղիշէի վերջում գրուած այդ յիշատակարանը, որ մեր  
կարծիքով Պողոս գրի շարագրածը չէ և ոչ էլ Արդան վարդապետինը,  
այլ Եղիշէի հին օրինակից ընդօրինակութիւն է և թէն թերատ և անթուա-  
կան, այլ գարերով առաջ Պողոս գրչի ժամանակից, որին վկայում է իւր  
ընտիր և վայելուշ հայկարանութիւնը, իսկապէս մեղ ամենից շատ հե-  
տաքրքրողն է, որովհետեւ գրա մէջ յիշում են ի թիւս այլոց Խորե-  
նացու Պատմութեան բովանդակութիւնը և երեք գրքի տրու-

հուած լինելը:

Եհան այդ գեղեցիկ յիշատակարանը ամբողջապէս. «(Փ)առք հօր անսկըզ-  
բան» և որդւոյ անսկըզբան և սկզբան և սրբոյ հոգացոյն անքննաբար ի նո-

ցունց էութենէ անհատաբար և անսպառ բղխմանն, եռատրոհ՝ անձնաւորութեանն, եզաբուն բնութեանն, միակամ և միաչեծան իշխանութեանն, ամենակալ և անվախճան թագաւորութեանն, միասնական ամենասուրբ երրորդութեանն, յամենից շնչոց կենդանեաց իմանալեաց և զգալեաց, որ յանէից եղեալ գոյացան, ի նորին զարհուրելի հիմարաշ հրամանացն և ի լրումն նորայն կամաց անհատ և անվճար օրհնութիւն, գոհութիւն և անդադար փառաբանութիւն, ի վեր քան զմիտս և անդր քան զպայմանըն՝ անեզր յաւիտենիւ և յաւիտենից, ամէն:

Երդ՝ զի որպէս երիս երրեակս իմացուցանեն դասակարգութիւնս հրեշտակաց ի միտս մեր զիրբ աստուածայինք՝ գոլ փառաբանիչս ստեղծագործողին իւրեանց, այսինքն՝ անմարմին գուարթունք՝ նոյն ձեռվ տարազու երիս կարգագրութիւնս տեսանի ի սուրբ եկեղեցի, որ ճշմարտապէս երկին է ի յերկրի, առ ի պայծառութիւն և ի լուսաւորութիւն ընդ հանուր տիեզերածաւալ մարդկութեանս սեռի: Նաև և ի փառաբանութիւն մարմնառիկ տնօրէնութեան միածնի մարդացելոյ Բանին Աստուծոյ, առ ի քարոզել և հոչակ հարկանել զփրկութիւնն և զերախտիսն Աստուծոյ, որ ի նմանէն ի մեզ ծաւալեցաւ, եւ այս ո՛չ ի ձեռն հրեշտակաց և անմարմին գերաշխարհիկ զինուօրութեանց, այլ ի ձեռն հազարապէտացն Աստուծոյ, Քրիստոսի ասեմ առաքելոցն, զոր յօրինեալ շարակարգէ ընտրեալն և զարմանալին այն Պօղոս, յիւրականն թիստի ասելով. Եւ զորս եդ Աստուծ յեկեղեցւով այս են. նախ՝ զառաքեալսն, երկրորդ՝ զմարդարէս, երրորդ՝ զվարդապէտս: Եւ այս ո՛չ վարկարազի և ունայն գոլ՝ որք դասեցան մի զինի միմեանց, այլ խորհուրդ իմն յայտնեալ տեսանին ի նոսա: Վասն զի համաքատակ և նմանասարաս են լուսաւորացդ, որ յերկինս արեգականն՝ առաքեալք, և լուսնին՝ մարդարէք և աստեղաց վարդապէտք Եւ որպէս զանազան են լուսաւորութիւնք լուսաւորացդ, ոմն զցայդ և ոմն զցերեկ, այսպէս են և բանք տեսանողաց և լուսատուաց հոգւոց մերային զարմից: Եւ որչափ է՛ր կար և հնար նոցին, լուսաւորեալ պայծառացուցին և զխաւար տղիտութեան ի միդապատ և ի մոպայլատեսակ մտաց մարդկայինս ազգի փարատեցին և (լուսանցքում՝ միշտ) փարատեն. Եւ ունին վարդապէտք զնմանութիւն մարդարէից և զտիպ առաքելոց. զի որպէս նորա ի հնումն զինչ և պատահէր ազգին իւրեանց զնոյնն մարդարէանային, եթէ տրտմականս և թէ ուրախականս, որպէս նոցին իսկ բանքն յայտ առնեն, այսպէս և վարդապէտք եկեղեցւոյ՝ ժըրացեալք ի սուրբ Հոգւոցն, քարոզեն առաքելաբար և մատուակեն զգինին ուրախարար, և սերմանեն զրանն կենաց ի սիրտս հաւատացելոց և արրուցեալ ոռոգանեն զրովն աստուածային զպապեալ հոգիս բանաւորաց: Եւ թէ նեղութիւնս ինչ՝ և մրրիկ դառնութեան եկեալ ժամանէ յանօրի-

նաց և յայլագեմ անասուռած բռնաւորաց, և կամ այլ իմն ուղխաձեւ փորձութիւնս զիւական՝ ի վերայ հաւատացելց, յառնեն իրրե զմարդարէ՝ և պատմեն զանցս աղետից և զկսկիծս թշուառութեան որպէս զԵրէ քեմիայ և կամ իրրե զմի ի մարդարէիցն՝ իւրաքանչիւր որ իւրում ազգի, վասն որոյ և երրորդ զկնի առաքելոց և մարդարէից գասեալ կարգեցան, եւ որպէս աստղ քան զաստղ առաւել է փառօք՝ նոյնպէս և վարդապետքան զվարդապետ՝ բանիւք զիտութեան և վարուք առաքինութեան. Որպէս այլք այլոց աղգաց են պատմղք, նոյնպէս ազգիս մերոյ և զարմի են պատմիչք և վիպասանք՝ կորովի՛քն և քաջարանքն, անյաղի՛ք փիլիսոփայքն և յոգնահանճար և առատամիտ փաղերայքն ։)

Նախ՝ Ագաթանգեղոս քաջ քարտուղարն՝ որ հրամանաւ թագաւորին Տրդատայ զսուրբ Լուսաւորչին մերոյ Գրիգորի զերաշխէպսն ի կիր արկեալ թուէ, թէ ո՞րբանաբար անըմբերելի կարծրագոյն տանջանաց և սարսուելի չարչարանաց և կիրց տարեալ համբերեաց. և ապա թէ ո՞րբան ժամանակս յամեալ ի վիրապն իսոր և անդնդային. Աւրանաւը իրը յարդանգի մօր զմերն լինէր յզացեալ զիրկութիւն, ուստի արեգակնասարաս ելեալ ծագեցաւ և լուսաւորեաց զխաւարամած երկիրս Հայաստանեաց, և ձնաւ վերստին, ըստ ասացուածոյ մարդարէութեանն, զազգ մի ողջոյն. և այսպէս պատմաբանելով տարեալ զբանն յանկ ածէ ի փառս Աստուծոյ.

Եւ ապա զկնի ի նորին, մեծի ի մասսան Մովսէս քերդողաչայրն, զեղեցկապէս և հարուստի մասսութեամբ սկսեալ զպատմութիւնս Հայոց, կարճ բանիւք և մանուսոյ բարի ծագաւ և բարձագանէ զբանն առ մեծն Խոահակ և Մեօրոպ, և անդ դաղետալի ողբսն ասացեալ սակս ամայութեան աշխարհ հիս և երկուց գաւազանաց՝ գագարէ ի փառս Աստուծոյ,

Եւ ապա ընկերք նորին, Աղիշէ վարդապետն որ Վարդանանց զիրսն՝ և զքաջապէս նահատակութիւնսն ձառեաց. Եւ Կաղար Փարագեցի, պատմագիր և ձարտասան, զնոյն ոճ երկորդեաց. Եւ այլք յոգունք, որք մի զկնի միմեանց յանցնիւր ի գարս և ի ժամանակս պատմաբանեցին՝ և արձան Միշատակի յետ իւրեանց կենդանի թողին. Զորս բազմաց և յոլովից բազմավէպ պատմութեանց աստուածային որեարցն, որք ասացան . . . . Այս տեղում ընդհատում է այս գեղեցիկ յիշատակարանը, որն այնչափ

1) Այս բառն առաջամ ոնչամ է հանդիպում մեզ այս հատուածում, թերեւն նշանակէ բառամիտ, փոյսուն, զատ յաւականին՝ Յուլօս. Համեմատիր փաղերակնեւն քառի հետ.

մեզ ձանօթմ է թւում, որ կարծես թէ կարդացել հնք մի այլ տեղ և այս ձանօթութիւնը անշուշտ հետևակը է այս հատուածի լեզուի արծաթի գարու հայկարանութեան հետ ունեցած քիչ թէ շատ նմանութեանը:

Այսպէս կամ այնպէս, այս գրուածքը ոչ մէկ գեղքում չէ կարող լինել Ժէ գարու գործ և իւր հին վայելուչ հայկարանութեամբ մի նոր փաստ է ընդգէմ չորրորդ գըքի գոյութեան:

Համառօտենք Վարդան վարդապետ բաղիշեցու հաւաքածոյի մնացած լիշտակարանները: Այս հատուածից յետոյ, ինչպէս արդէն ասացինք, գրչութիւնը փոխուում է, թէպէտ շարունակումէ մնալ բոլորագիր բայց աւելի անվարժ և տգեղ:

2է երեսում այլ ևս Պօղոս գրչի սահունութիւնը: Մի տեղ Վազարայ պատմութեան մէջ էջերի ստորեւում նկատում է գրիչը՝ «ի թղթէս է պակաս» և յօրինակն այսպէս էր գրած: Մի այլ տեղ՝ Վարդանանց կոտորածից յետոյ: «Աւաղ զայք յայնմ աւրէ և առ յապայ»: Վազար Փարպեցու թղթի առաջին երեսի ստորեւում՝ «Ճգնաւոր էր Աղան յազգէն Երծրունեաց, բնակեալի յայրն Եղանայ»: Ի յԱնրերդ:

Թղթի վերջում կայ յետևեալ յիշտակարանը:

— Այս սուրբ վարդապետ զոր ինչ ասացեր Ճմարիտ է, զի և այժմ նոյնպէս եղե և լինի հանապազ: Ավ սուրբ ընթերցաւզք և եղբարք, գիրքս հին էր և աւրինակս: Յունան վարդապետն կարդացեալ էր զաւրինակն և նորոգեալ և զպակասութիւն թղթոցն որ պակասէ ոչ էր գտեալ, և եռ ոչ կարացի գտանել: աղաչեմ զամնեսեան, եթէ գտցի գիրքս այս ուրեք, գրեսջիք զպակասումն թըլթոյս և դիք ի սմայ: Նախ զսկիզբն գրոցս, և յապա յերիս տեղիս թուղթմի անկեալ կայ: Եւ եթէ սխալ գտջիք ի սմա թողութիւն խընդրեցէք ինձ ի Քրիստոսէ յանցանաց իմոց և ծնօղաց իմոց: ամէն: Ազգիս մերոյ և յառաջագոյն նախնեաց սրբոց որ երկրորդեցի զգիրքս վասն յիշողութեան սրբոցն ի պարծանս մեր, և անսրբոցն յողբումն թշուառութեան և յամօթ յաւիտենից: Քաջքն զօրացին ի Քրիստոս, և տկարամիտքն կորանացցեն: Եւ որբ լինն աւաղեացն զազգիս մերոյ զտառապանս: —

«Աւարտեցաւ գիրքս Վազարու վարդապետի Փարպեցւոյ ձեռամբ բազմավէր և անարժան Գրիգոր Երիցու, ի հարկէ սրբազան և քաջ վարդապետին Վարդան դիտապետի: Երդ աղաչեմ զընթերցողքդ յիշեսջիք և այլն: Սերէսոսի վերջում նոյն գրչի յիշտակարան: «Զյետինս ի գըրշաց և զառաջինս ի մեղաւորաց, զանարժանս զանարհեստ և զանիմաստ զՔրիգոր երէցս արժանի առնել աղաչեմ» . . . և այլն: Կորիւնի վերջում՝ «Յիշեցէք զքայք բարունապետն զՎարդան վարդապետն առ Քրիս-

տառ Աստուած։ և լի բերանով Աստուած ողորմի ասացէք։ Նա և եղինի  
դրչիս ամէն։ Այստեղ աւարտում է այս երկիջեան ամրողջ հաւաքա-  
ծուն։ որի թերթերը շամարեցինք։

Զանց ենք առնում այս ստուար ձեռագրի մանրամասն նկարագրութիւ-  
նը։ թողնելով այդ Մայր Աթոռիս հարուստ և ան ծ ան օ թ մատենա-  
դարանի պատճայ ցուցակ կազմողներին։ Սակայն աւելորդ չենք համարում  
այս ձեռագրի Եղիշէից «Թարգմանութեան» օրինակներ մէջ բերել։  
Դժուարին և օտարազգի բառերը լուսանցք ու մ թարգմանուած  
կամ բացատրուած են, երբեմն յաջող և երբեմն անյաջող և սխալ։ Այս  
թարգմանութիւնները ժամանակին, եթէ ոչ ամրողջովին, գոնէ մասամբ,  
իբրև սրբ ագր ու թիւն կարող էին ներմուծուել բնագրի մէջ, ինչ-  
պէս այդ պատահէլ է տեղ տեղ մանաւանդ Խորենացու մէջ (տե՛ս մեր  
և և Բ յօդուածները)։ Առաջին բառերը բնագրից են, իսկ գծիկից յե-  
տոյ գրուածները լուսանցքից, կամ երբեմն տողամիջից։

«Քանդի բազում ինչ է սրբութիւն, սատար լինել ան օ սր ու թ ե ան —  
տկարութեան»։ — «թ ու թ ե ա մր յարձակեալ ի վերայ մահու — կա-  
մակարութեամբ» (այսպէս է և տպագրում)։ — «Որդւոյն Տրդատայ —  
Տիրանայ» (այս չե թարգմանութիւն, այլ սրբագրութիւն)։ — «ի վեր քան  
զմարգկային բնութիւն ընդվկեալ ապար թ անէր (տպ. ապարասանէր) —  
հակառակէր»։ — «ցնորեալ դ ա ն դ ա չ է ր — երկրոյէր»։ երկրորդ Յե-  
ղանակ։ Միհրներակէհ վ զ ր կ (տպ. վզուրկ) — մեծ։ — «ե ր ա ն և տ ա-  
ն ե ր ա ն (տպ. երան և աներան) — մեծաց և պատուական»։ — «Դէնի մազ-  
դէղն — հաւատոյ հաւատ»։ — «ն ա ր ա ւ մ ա ն ո յ (տպ. հարամանոյ) — պատ-  
րողաց։ — «Զ ը ո ւ ա ն — Կոօնոս կամ Արամազդ»։ — «Հ ա շ տ ա ռ -  
ն է ր — ներգործէր կամ ստեղծագործէր»։ — «Ո ր մ ի զ դ — անդրանիկ»։ —  
«ի կատարեալ դ ենէս — հաւատոյս»։ — «Նածարեցիսդ (տպ. նածրացիսդ) —  
նազօրեցի»։ — «մեծի սպահ հ ի դ Արեաց — հեծելիդ»։ — «հ ո ծ ո ւ )  
թ ե ա մր — առատութեամբ»։ — «դ ե հ ա լ ե տ ք — գլխաւորք»։ — «փ ա ն-  
դ ու ր ա կ ա յ ո ր դ ի — հիւսան»։ — «Ե ւ ք ր տ ի կ ա ր չ ա ռ ն ե լ ո վ ո յ ժ  
տ ա յ ք խ ա ր ա մ ա ն ո յ ն — լուացումն ի փոր շառնելով մուտ տայք զի-  
ւաց՝ և հոտոյ գարշութեան»։ — «հ ա պ ա յ ա հ ա զ ա զ ի կ ա յ ք»։ — «շ կ ո-  
թ ա կ — տարաշխարհիկ»։ — «Այսք առանց փ ա ն դ ա ն ի (տպ. փանդամի-  
մի զանգին — կոզպատ երեսացն»։ — «ձեռք առանց դ ու մ ի զ ո յ մ ի լուա-  
ցին — աւշնան խոտն է»։ — Երրորդ Յեղանակ։ «կ ե շ տ ք — կ ր օ ն ք»։ — «Մով-  
պետական մովպետի (տպ. Մովպետան մովպետի) — պարոնաց պարոնի»։ —  
«գ ե ր ա ն դ ե ր ձ ա պ ե տ — փ ա ռ ա շ »։ — «պ ա տ ա ր ու ձ ա կ — ո չ խ ա ր»։ — «կ ա ն ա յ ք փ ա ս-  
տիպանացն (փշտիպանացն) — արսնապահ (?) կ ա ն ա յ ք մ ո գ ո ւ ն ց ն»։ — «ա ն-  
շ ո ւ շ տ կ ե ա ն ք — ա ն ս ո ւ տ»։ — «զ ս տ ա մ բ ա կ ս ն — զ ա ն ի ր ա ւ ս ն»։ — Զ ո ր ր ո ր դ Յ ե -

դանակ. « ս ա դ աւ արք (տպ. սաղարթ) — զօրագլուխ» . — « լակիշ (դակիշ) — համագունդ» . Եւթեներորդ Յեղանակ. « փշտիպանացն — մարմնապահ կանանցն» . — « քրտիկար — պատրոլ» :

Աւթերորդ Յեղանակ. « լաշկարաւ վատախտար ակ արարեալ — միաժողով ի քմի (?) կացեալ» . — « գենգետ էր — գլխաւոր էր» . — « տեղեակ զրագեցտական օրինաց — բանիբուն ի կարեոր ուխտ» . — « Համակդէն — բոլորից ուսուցիչ» . — « գիտէր զւմբարտքաշն — լուսամիտ» . — « Քանզի այս Խ կեշտք են որ գրաւեալ ունին զամենայն օրէնս մոգութեանզը. (զբազում) մեծամեծաց զգիտութիւն ունէր» . — « յիւրաքանչիւր խշտեաց կանգնեցան — գաղարեաց» . — « հանդէս առաքինութեանընարութիւն» . — « ապարասան — անհաւան» . — « ետես և ի ձեռին նոցազանցուշտ որունեան պսակն (տպ. զանցուշտ ուարունայն) — զանցարժ» . — « Մովկետան մովկետ — իշխանաց իշխան» . — « շկօթակ — տարատիր» . — « ուսուցից զմեղմեծն Զ ը ա գ է շ տ ն — կարեոր ուխտ» . — « փոխանակիցէ ընդ անարդ թրուշայի — ոչնչի» . — « շկօթակ — վրտարանդիր» . — « ձեռք մեր փապարեալ են — խոշորեալ» . — « զի մի, ասեն, ակդէնք եկեալ (տպ. զի մի այլադենքն եկեալ) — անհաւատքը» . — « տագնապեալք — ցնորեալք» :

Ներողութիւն ենք խնդրում ընթերցողից երկարութեան համար: Եւյս թարգմանութեանց օրինակները մի գեղեցիկ լուսաբանութիւն են այն կարելի փոփոխութեանց, որոնց ենթարկուած կարող են լինել մեր հինգ դպրութեան բնագրերը այս ճանապարհով — թարգմանութեամբ:

Միւս կողմից՝ այս օրինակները ցոյց են տալիս թէ ո՞րչափ մեծ ուշադրութիւն պէտք է գարձնել « թարգմանութեան խնդրին» , ոչ միայն Խորբենացու, այլ նաև մեր բոլոր բնագրերի ուսումնատիրութեան ժամանակ: Կարելի է երևակայել թէ ինչ մեծ փոփոխութիւն կմտնի բնագրի մէջ, երբ մովկետան մովկետի տեղ մուծուած լինէր « իշխանաց իշխան կամ պարունաց պարոն» . և կամ՝ գումիզի կամ կովմէզի փոխանակ՝ օշնան:

---

Ե.

Խորենացու հակասութիւնները, — Ամբատ = Տրդատ, — Պարոյր չէ « ո ը դ ի Ա կ ա յ ո ր դ ւ ո յ » . — Յովհաննէս Կաթողիկոսն այս մասին, — Լանդլուայի, Լմինի, Գարագաշեանին եւ Ա. Բառումկարտնէրի կաթիքները:

Մեր պատմահօր գրուածքը գարեր շարունակ ընդունուած էր և յարգուած իրեւ սրբազան գիրք, իրրեւ հաւատարմագոյն աղբիւր ազգային

պատմութեան, իրրե անպայման հեղինակութիւն, որի առաջ խոնարհ-սումէին բոլորը՝ Պատմութիւն նշանակում էր՝ Խորենացու պատմութիւնը, Պատմաբան նշանակում էր՝ Խորենացի, ինչպէս Հերոդոտը Յու-նաստանում, ինչպէս Արիստոտէլը փիլիսոփայութեան մէջ, ինչպէս Հռով-մը քաղաքների մէջ, Բայց առ միշտ այս այսպէս չէր կարող մնալ, Խո-րենացու երկասիրութիւնը թարգմանուեց արեւմտեան լեզուներով, ուրիշ խօսքով ասած՝ Խորենացին մատչելի գարձաւ գիտնական աշխարհին, Քննադատութիւնը չէր կարող վերաբերուիլ այդ նորեկին այն հաւատով, այն ակնածութեամբ, որով վերաբերուել էր հայ նահապետական աշխար-հը, իւր Պատմահօրը՝ քերդողահօրը, Խիստ և դառն քննադա-տութիւնը, ընդունելով հանդերձ Խորենացու շատ արժանաւորութիւննե-րը, շատ բան խլեց, շատ բան պակասացրեց նրա անպայման հեղինակու-թիւնից, Գիտնական աշխարհի քննադատութեան լաւագոյն արտայայտու-թիւնն եղաւ մեր հայ գրականութեան մէջ Ա. Մ. Գարագաշեանի «Քըն-նական Պատմութիւն Հայոց» լուրջ և հմուտ երկասիրութիւնը (1880, Ա. Պոլիս): Շատ բաներում մեղադրուեց Խորենացին, մինչև անգամ իւա-րեր այսութեան մէջ, որի մեղմացուցիչ հանգամանքը համարւում էր հայրենասիրութիւնը: Քննադատների ասածներից մեծ մասը չէ կարելի չընդունել, և ես ընդունում եմ այն բոլոր քննադատութիւնները, որոնց դէմ կարող է արգարանալ Խորենացին իւր ժամանակով, իւր ժամա-նակի գիտութեան և հասկացողութեան աստիճանով և պարագաներով: — Բայց սորանից աւելի և ոչ մի կէտ: Խորենացին նոյնչափ ճշմարտասէր է, որչափ հայրենասէր, իսկ նորա հայրենասիրութեան շափ չկայ:

Այս զգացումներով ու համոզմամբ առաջնորդուած, այս յօդուածում մենք կանգ կառնենք Խորենացու՝ մի քանի ակներեւ հակասութեանց վրայ, հակասութեանց՝ որոնց համար նա արժանացել է դառն ու կծու նկա-տողութեանց:

Եւրաքանչիւր բառը կշռող՝ ոչ միայն ճշմարտասէր, այլ և ճշգրիտ Խո-րենացին անշուշտ կարող էր սխալուիլ ժամանակադրութեան մէջ՝ աղ-րիւրների պակասութեան պատճառով կարող էր հաւատ ընծայել ոչ այն-չափ արժանահաւատ աղբիւրների, չունենալով քննադատական այն զէն-քերը, որով զինուած է այժմեան գիտութիւնը, բայց աշկարայ հակասել ինքն իրեն, մի երկու տող ներբեռում կրկնել իւր վերեն ասածի հակա-ռակը, այդ չպիտի անէր նա, այդ նա չէր կարող անել:

Սակայն քննադատութիւնը ցոյց է տալիս մի քանի այդպիսի կէտեր, որոնցով և կամենում ենք զբաղուիլ այսօր:

Սկսենք մի փոքրիկ, բայց ակնյայտնի հակասութիւնից:

Խորենացին Բագրատունիներին համարում է սերուած հրեական ցեղից:

Հաւանական է, որ Բագրատունիների հրեական ծագման մասին և Խորենացուց առաջ կար աւանդութիւնն Աար և մի այլ աւանդութիւն՝ որ Բագրատունիներին համարում էր սերուած Հայկից, կամ Արամենակից, որին համամիտ չէ Խորենացին (ՏԵ՛ս Խոր. Ա. 22, Բ. 24): Բագրատունիների հրեական ծագումն ապացուցանելու համար Խորենացին ըրաւականանալով աւանդութեան վկայութեամբ դիմում է և մի այլ միջոցի յատուկ անունների ստուգաբանութեան, Հարկաւ, Խորենացուց իրաւունք չունիք պահանջելու, որ նա այդ ստուգաբանութիւնները կատարէր այժմեան բանասիրութեան (լեզուարանութեան) ցոյց տուած օրէնքների համաձայն: Եւ նրան ու նրա ժամանակին բոլորովին ներելի են այսպիսի մերձեցումներ, ինչպէս օր. Սմբատ = Ըամբաթ = Ըարաթ: Այսպիսի ստուգաբանութեամբ Խորենացին Բագրատունիների կրած անունները բաժանում է երկու դասի: ա. երբայական անուններ, որ իբրև թէ առաջ կրում էին Բագրատունիները և բ. խժական, այն է՝ հայ - հեթանոսասկան անուններ: որ իբրև թէ միայն շատ ուշ սկսան գործ ածել Բագրատունիք: Այս ստորաբաժանումը հիմնուած է մի քանի հայ անունների բռնազրօս և արտաքին նմանութեան վրայ ենթագրական հրեական անունների հետ: Ահա Խորենացու իւր խօսքնը.

«Բայց ծանիք զ Սմբատ գ անուն, զոր յաճախ Բագրատունիք ի վերայ պատահաց կոչեն, Ճշմարիտ Ըամբաթ է՝ ըստ նախնի իւրեանց Խոսիցն, որ է երբայեցի» (Ա. 22): Մի այլ տեղ. «Բայց գիտեա, զի ի թողուլ աղդին Բագրատունեաց զօրէնս հարցն, նախ խժական ժառանգեցին յոր ջորջումն՝ իւրատ և Սմբատ և այլ այսպիսի կոչմունս, զրկեալ ի նախնական անուանցն: որպէս կոչէին յառաջ քան զուրանալ՝ Բագադիա, Տուրիա, Սենեքիա, Ասուգ, Սափատիա, Վազարիա, Ենանոս: Եւ ինձ թուրի, թէ որ այժմէ կոչին Բագրատունիք Բագարատ՝ Բագադիա է դա, և Խոսուդ՝ Աշոտ. դոյնպէս և Վազարիա՝ Վարազ, որպէս Ըամբատ՝ Սըմբատ» (Բ. 63):

Այս երկու հատուածից երեսում է, որ Խորենացին երկու անդամ Սմբատ անունը համարում է երբայական և մի անդամ՝ իւր ասածի հակառակ՝ ուրեմն և ինքն իրեն հակասելով. Սմբատն համարում է իւժական — հեթանոսական<sup>1)</sup>: Հակասութիւնն ակնյայտնի է: դորա դէմ ոչինչ չէ կարելի ասել, բայց արդեօք Խորենացուն իրենն է այդ գոռացող հակասութիւնը, —այս մասին քննադատաները ամենեին հոգս չեն քաշել և ուղղակի մեղադրել են Խորենացուն: Մենք գոնէ միշտ կասկածել

1) ՏԵ՛ս պատմագիրներ՝ Քանիական, Պատմ. Հայոց, Գալրագաշեանի, երես 175.

Անք: Բարեբաղդաբար մեր բաղդատած ներսէս գրչի օրինակը մի բառով արդարացնում է և Խորենացուն և մեր կասկածը: Ահա ներսէս գրչի ընթերցուածը. «բայց գիտեա: զի ի թողուլ ազգին Բագրատունեաց զօրէնս հարցն: նախ խժական ժառանգեցին յորջորջումն՝ Բիւրատ և Տըրդատ և այլ այսպիսի կոչմունս: Այսպիսով հակասութիւնը բոլորովին ջնջումէ: Պարզ է որ անուշագիր զրիչներից մէկը Տրդատի փոխանակ՝ սիալմամբ գրել է Բագրատունիների մէջ յաճախ գործածուղ Սմբատ անունը: որը մի քանի տող ներբեռումն էլ կրինուելու էր: Մենք բոլոր յայտնի եղած ձեռագրերի Սմբատ ընթերցուածից նախընտրելի ենք համարում ներսէս գրչի Տրդատ ընթերցուածը, ոչ այն պատճառով միայն, որ այդպիսով ջնջում է ակնյայտնի հակասութիւնը, այլև այն պատճառով որ այդ ընթերցուածը Սմբատ չլինելուց ի զատ, ու էտք է անպատճառ Տրդատ լին էր:

Այդ երեսում է այս հատուածը պարունակող 63 դ գլուխի վերտառութիւնից և բովանդակութիւնից: «Յաղագս Տրդատայ Բագրատունոյ և անուանց ազգի նորա առաջնոյ: Երբ գլուխը ամրողջովին նուիրուած է Տրդատ Բագրատունուն: անուանց ստուգաբանութեան մէջ պէտք է լինէր անշուշտ և Տրդատի անունը: Իսկ Խորենացին ինքը չէր կարող անուշագրութեամբ և ամբ Տրդատի փոխանակ Սմբատ գրել՝ քանի որ այդ կլինէր անուշագիր թողնել զլիսաւոր առարկան, որի մասին ճառումն էր, որի վրայ ուրեմն և կերպոնացած էր: Եւ մեզ թուում է թէ լուրջ քննադատութիւնը, նոյն իսկ առանց ունենալու ներսէս գրչի «Տրդատ» ընթերցուածը պէտք է կարողանար վերականգնել ուղիղը: Հիմնուելով ակներև հակասութեան և այդ ՅՅ դ գլուխի վերտառութեան և բովանդակութեան վրայ:

Խորենացու այս հակասութիւն պարունակող հատուածը ունի և մի այլ հետաքրքրական կետ, այն է՝ որ Խորենացին զգում էր Տրդատ և Բիւրատ անունների հեթանոսական ծագումը, մինչդեռ նոյնը չէ կարելի ասել Սմբատ և այլ անունների համար: Տրդատը իմ կարծիքով կրծատ ձեւն է Ատար—դատա (Atare—dāta) այն է՝ Կրակատուր անուանը, որ հանգիպում է և Աւենդիդատում<sup>1)</sup>:

Ատարը հայերի մէջ դարձել է Ատր, իսկ ատրի կրծատ ձեր—Տր բացի Տրդատ անունից պատահում է և Տր—պատունի (փոխանակ՝ Ատր—պատունի) անուան մէջ: Քրիստոնէական կերպարանքի տակ պահպանուած և մինչեւ մեզ հասած Բիւրատ պատի կիւ առասպելը վկայում է նմանապէս Բիւրատ անուան դիւցապաշտական ծագմանը<sup>2)</sup>:

1) Ormazd et Ahriman, J. Darmesteter, p. 256.

2) Ժողովրդի բերանում: մի քանի գաւառներում: Տրդատի փոխանակ հանդիպումները:

Տրդատ - Սմբատ անունների շփոթութիւնից ծագած հակասութիւնը մի փոքրիկ, բայց գեղեցիկ օրինակ է, որ ցոյց է տալիս մեզ այն ձանապարհը, որով պէտք է ընթանանք Խորենացու մի քանի ակներև հակասութիւնները բացատրելիս: Միւս կողմից այս օրինակը նորից ակներև է կացուցանում, թէ ո՞չչափ սխալում են քննադատները՝ կասկածելի, մժին և հակասական երեցած հատուածների համար մեղադրելով՝ Պատմահօրը, առանց ուշք գարձնելու մեր այժմեան ունեցած բնադրի վիճակի վրայ:

Դանք մի աւելի մեծ հակասութեան:

Առաջին գիրք, գլուխ 21 և 22, Խորենացին մի առանձին ոգեսրութեամբ խօսում է Պարոյրի թագաւորելու մասին, կոչելով՝ Պարոյրին և նրա սերունդը՝ «Բնի կք, արեանառուք և հաւաստի հարազատք»: Պատմում է Նմանապէս թէ Աարբակէսը մեր քաջ նախարար Պարոյրին իւր կողմն է գրաւում, նրան թագաւորութիւն խօստանալով: Յինքն և զքաջն մեր նախարար յանգուցանէ զՊարոյր, թագաւորութեան ձև և շուրջ խօստանալով նմա: Եթէ չկամենանք բռնազրօսել բառերը և նրանց միտքը, այն ժամանակ այս ասացուածներից պէտք է հետեցնենք, որ Պարոյրով սկսում է նոր հարստութիւն, որ Պարոյրից առաջ եղած հայպետներին՝ Պարէտից մինչև Ակայորդի, Խորենացին չէ համարում հարազատ, արեանառու և բնիկ, կամ այլ խօսքով ասած՝ Հայկայ սերնդից: Աւրեմն և Հայկից մինչև Անուշաւան, ըստ Խորենացու, կարելի է կոչել առաջին բնիկ հարստութիւն, Անուշաւան - Պարէտից մինչև Ակայորդի՝ երկրորդ, ոչ - բնիկ, ոչ - հարազատ հարստութիւն և վերջապէս՝ Պարոյրից սկսած մինչև մրւս Հայկակը, ընդամենը եօթն հոգի, երրորդ, բնիկ հարստութիւն: Յովհաննէս կաթուղիկոսն էլ որ բառ առ բառ արտադրում է Խորենացին, և կարող է համարուիլ իրեւ Խորենացու մի ընդօրինակութիւն կատարուած ժառ գարի սկզբում, այս հատուածը հասկանում է ինչպէս պէտք է հասկանալ ինչպէս կարելի է միայն՝ հասկանալ: — Ի զարմից սորա (Անուշաւանայ) և զաւակաց ոչ տիրեալ գտանեին հայրենի նահապետութեանց, այլ այլք ոմանք բռնակալեալք ոչ ըստ զգի, այլ ըստ յառաջադիմութեան տիրեալ Թորգոմեանս գրոհի, որոց անուանքն Պարէտ, Արբակ, . . . Ակայորդի, յետ ամենցուն սոցա Պարոյր անուն՝ յազգէ Հայկայ, զանազդիսն ի բաց լքեալ, և զնահապետութիւն ազգի իւրօյ վերստին նորոգեալ պայազատէր» (Ցով. կաթ. գլ. Բ):

Յովհաննէս կաթուղիկոսի այս ասութեան մէջ ոչինչ հակառակ չկայ Խորենացուն, այլ ընդհակառակն այս գլխովին համապատասխանում է Խորենացու 21 և 22 գլուխներին: Յովհաննու «անազդիս» բառը Խորենացու «բնիկի», հարազատի և արեանառուի: Հակադիրն է, մինչև անգամ՝

« ոչ ըստ ազգի, այլ ըստ յառ աջադիմութեան տիրեալ Թորդոմեանս զբոհի։ Խորենացու բառերն են, մի ուրիշ երեսից ընդօրինակուած՝ — «ի սմանէ յառաջ՝ ոչ ըստ ազգի, այլ ըստ յառ աջադիմութեան արանց, զի և ամենեքեան յԱրբահամեն» (Խորեն. Ե. 19), Խորենացու ասածը Յեսուի յաջործների մասին Յովհաննէս կաթողիկոս փոխ առնելով դիտակցարար՝ յարմարեցնում է Անուշաւանի յաջործներին, առանց մեղանչելու պատմութեան մօքի դէմ։ Այս լոկոնի կամ բառերի փոխառութիւն է և այսպիսի փոխառութիւններով ձայրէ ձայր լիբն է Յովհաննէս կաթողիկոսի Պատմութիւնը։

Աւրեմն և Յովհաննէս կաթողիկոսը իրենից ոչինչ չէ հարել այլ գրեթէ բառացի կրկնել է Խորենացու միտքն ու բառերը։ Վարբակէսին վերագրուած վարմունքիցն էլ երևում է, որ Պարոյրը Սկայորդուն հակառակ մի նախարար էր, որին Վարբակէս խոստանում էր թագաւորութիւն եթէ Պարոյրն օգնէր նրան՝ Վարբակէսին, Պարոյրն օգնում է Վարբակէսին և Վարբակէսից էլ ինքն է օգնութիւն գտնում։ «Սա (Պարոյր) ոչ փոքր ինչ օգնականութիւն գտեալ ի Վարբակայ մարէ» — հարկաւ ընդգէմ Սկայորդու, որից և իլում է իշխանութիւնը։ Այս վերջին գործողութիւնը արտայայտուած է Խորենացու մէջ՝ «Որ ի Սկայորդույն Պարոյր շատ համառօտ բառերով։ Այս համառօտութիւնը կարելի է ընդարձակել այսպէս՝ «Որ ի Սկայորդույն Պարոյր առնլով զիշխանութիւնն առաջին ի Հայո թագաւորէ» (գլ. 21). «Առնլով զիշխանութիւնն կամ զտերութիւնն ոճը յատուկ է Խորենացուն և սովորական գործածուած, ինչպէս օր. Բ. գիրք, 10 զլիսում»։ «Ե որ ինչ (տպ. ինչ որ) յետ նորա եղեն թագաւորք աշխարհիս մերոյ ի նորին սերմանէ, որդի ի հօրէ առնլով զտերութիւնն անուանեցան Երշակունիք յԱրշակայ»։

Այս բոլորը ինքն ըստ ինքեան շատ պարզ և որոշ է, և այս բաների գէմ ոչ ոք ոչինչ չէր ունենայ, եթէ որ նոյն 22 շ զլիսում, Հայկազունի առաջին թագաւորների ցանկում, Պարոյր անուան կողքին ըլինէր երկու բառով մեկնութիւն։ «Պարոյր, որդի Սկայորդույն այսպիսի որդի որդ է ոյ»։

«Որդի Սկայորդույն երկու բառը ամբողջապէս հակառակ ան են թէ Խորենացու 21 և 22 շ զլուխներին և թէ բնականաբար, այդ զլուխների միացն անփոփող Յովհաննէս կաթողիկոսի հատուածին։ Այնց եթէ Պարոյրը Սկայորդու որդին էր, ուրեմն Սկայորդին էլ և նրա հայրը կամ նախորդն էլ, նախորդի նախորդն էլ և ըստ կարգին գէպի վեր, նոյնպէս և նոյն չափով հարազարդ ան առ աջանակ առ առ ու և բնի կ։ Աւրեմն և Խորենացու առանձին իմն ուրախութիւն յայտնելը Պարոյրի հարազարդութեան մասին անտեղի էր, այդ ուրախութիւնը պէտք է յայտ-

ներ նա գոնէ Սկայորդու համար ևթէ Սկայորդին իրաւամբ Պարսյրէ հայրն էր:

Աներեր է որ 21 և 22 շ գլուխները մի կողմից և միւս կողմից այս երկու բառը՝ «որդի» Սկայորդւոյ», տրամադօրէն հակասում են միմեանց ուստի և պէտք է ընտրել սրանցից մէկն ու մէկը:

Մենք չենք կարող ենթադրել, որ Խորենացին երկու դլուի Պարսյրէ մասին գրելուց յետոյ, երկու խօսքով ջրէր իւր երկու գլխում ասածները ուստի և «որդի» Սկայորդւոյը բառերը մենք համարում ենք ընդի ջարկութիւնն, յետոյ ներ մուծուածուած:

Մինչև այժմ Խորենացիով զբաղուողները կամ չեն նկատել այս հակասութիւնը և կամ եթէ նկատել են, աշխատել են մի տեսակ ելք գլուխները խորսափել կնճռի գժուարութիւնից:

Լանգլուան բաւականացել է մի ծանօթութեամբ, որի մէջ «իսկ բնկի նախնույն» բառերի և Յովհաննէս Կաթողիկոսի ասածի վրայ հիմնուելով հետեցնում է որ Պարսյրով սկսում է նոր հարստութիւն և թէ այս հարստութիւնը Հայկի ցեղիցն էր, ըստ Խորենացու: (Collection, I, p. 32, n. 2):

Էմին, իւր Династический списокъ Хайдековъ (1884) գրուածքի մէջ, ամրողովին ընդունելով Խորենացու և Յովհաննէս Կաթողիկոսի միաբանվկայութիւնները Պարսյրի մասին, երկի նկատում է մեր վերեւումը մէջ բերած մեծ հակասութիւնը, թէս այդ մասին որոշակի ոչինչ չէ ասում: Իսկ հակասութիւնից խորսափելու համար զիմում է հետևեալ անյաջող սրամտութեանը: Սկայորդուն հանում է Պարէտեան ցանկից և դնում է Պարսյրեան ցանկի գլխում, իբրև Պարսյրի հօր մինչգեռ յայտնի է, որ Խորենացու մէջ Պարէտեան ցանկը վերջանում է Սկայորդով, իսկ Պարսյրեան ցանկը բոլորովին առանձին է և անջատ: Էմին Պարսյրին կռուաց նում է ոչ Սկայորդու, ինչպէս անում է Յովհաննէս Կաթողիկոսը, այլ սրա նախորդի՝ Կայպակի հետ<sup>1)</sup>: Երկի Կայպակին յաղթելուց յետոյ, Պարսյրը հայես ստաբար հրաժարուեց գահից և իւր հօրը՝ Սկայորդուն դրեց գահի վրայ: Այսպիսի քնքուշ զգացմունքն է թէմինը իւր նշյն գրուածքի մէջ վերաբրում է և Տիգրան Երուանդեանին: Տիգրանին համարում է նոր հարստութեան կանգնող և պարագլուխ, բայց այդ հարստութեան իբրև առաջին թագաւոր գնում է Երուանդին:

Անշուշտ: այս առասպելախառն թագաւորների ծննդաբանութեան վրայ

1) Համարելով, ինչպէս ընդունուած է մինչեւ այժմ, Կայպակին եւ Սկայորդուն տապրեր, միմեանցից որոշ երկու անձն:

մենք երկար չեինք կանգնիլ եթէ չլինէր Խորենացու բնագիրը ուղիղ և անսիալ վերծանելու խնդիրը:

Գարագաշեան այս կէտում վարում է աւելի մեծ ըմբռնողութեամբ և աւելի վստահ, առանց ինդրի կնճռու և գժուար կէտերից խուսափելու: Բոլոր յանցանքը ձգում է նա «պառաւական վէպեր գրող» Յովհաննէս կաթողիկոսի վիզը, իրրե թէ Յովհաննէս կաթողիկոս ի բ ե ն ի ց չ ն ա ր ե լ ի ս լ ի ն ի Սկայորդու և Պարոյրի ոսոխութիւնն ու հակառակամարտութիւնը (Քննակ. Պատմ. եր. 187): Խոկ Խորենացու «բնիկ, հարազատ, արեանառու» բառերի վերաբերութեամբ, որ վիճելի խնդրի ծանրութեան կեցրոնն են, անում է հետեւեալ՝ խելքի մօտիկ ենթադրութիւնը: «Կոչել Խորենացւոյն զՊարզը և զյաջորդս Խորա «բնիկ, արեանառու և հարազատ» ոչ թէ կցուցնէ թէ քան զնոսա առաջինք օտարագդի էին, քան զի Պարոյրի նախորդն Սկայորդի ի ս տ ն ո յ ն պատմութեան, հայրը էր Պարոյրի՝), այլ Խորենացին, հաւանականապէս, զՊարուրեանս, իրրե Հայկայ սերունդ, կկոչէ բնիկ և հարազատ, համեմատութեամբ յաջորդ հարստութեան Արշակունեաց, զորս օտարագդի կհամարէր: Յովհաննու կաթողիկոսի ենթադրութեան նման կամայական, երբեմն նաև պառաւական վէպեր գժրախտութեամբ շատ են առ պատմիւմ մեր, մանւանդ առ յետինս» (187):

Այս ինքնուրոյն և ուշագրութեան արժանի ենթադրութեան հետ մենք չենք կարող համաձայնիլ որչափ և մեծ լինի մեր ունեցած վարկն ու յարգանքը գէպի Քննական Հայոց Պատմութեան հեղինակը: Խորենացու «հասանելով ի տեղիս մերում իսկ բնիկ նախնացն» և «Արդ այժմ անց ի ց ի թիւ մեր ո ց ար ա ն ց, մանւանդ թագաւորաց, ասացուածները պարզ և աշկարայ վկայում են, որ բ ն ի կ է Պարոյրը նախորդն երի և ոչ յաջորդների վերաբերութեամբ: Հասանելով բայց, նաև անց ա ն ե լ ը պարզ պապացց են այս բանին: Երկրորդ՝ Արշակունեարի մասին ոչ մի տեղ Խորենացու մէջ չենք հանդիպում ասուած ոչ՝ բնիկ: Խորթ, անհարազատ և այլն: Ընդհակառակն՝ նոյն իսկ ինքը Պ. Գարագաշեան գեղեցիկ և համոզիչ փաստեր է բերում Արշակունեարի ը ն կ ու թիւ ե ա ն և հար ա զ ա ս ո ւ թիւ ե ա ն վկայող» (Քննակ. Պատմ. 75. Գ.): Մեր հին պատմիւներից Արշակունեարը սովորաբար կոչւում են՝ «բ ն ի կ տ ե ա ր ք ա շ ի ս ա ր հ ս» (Քննակ. Պատմ. եր. 85—88): Եւ վերջապէս՝ Գարագաշեանի գլխաւոր պատճառարանութիւնը, թէ՝ «քանզի Պարոյրի նախորդն Սկայորդի, ըստ նոյն պատմութեան, հայր էր

2) Այս պատճառարանութիւնը մենք ստուգեցինք:

Պարոյրին ընկնում է ինքն իրեն, եթէ մեր ենթադրութիւնը ճշմարիտ է՝ որդի Սկայորդոյոյ երկու բառի ներմուծութիւնը լինելու մասին։ Արքան մենք ճանաչում ենք Յովհաննէս կաթողիկոսին։ Նա անընդունակ էր գրել Խորենացու հակառակ, իսկ Պարոյրին հանել Սկայորդու գէմ՝ չէ հակառակ Խորենացու այլ այդ ներմուծեալ երկու բառին։ Իսկ այս ընդդիմարկութիւնը, հաստատ կարելի է ասել, որ կատարուել է Յովհաննէս կաթողիկոսից յետոյ, Յովհաննէս այս գույքի կողմէ սկայորդու գէմ չէ չկայ որ գույքը բառ երը։ 2 կան այս բառ երը և մեր միւս պատճեն այս երկու բառը բաց թողնել։ 2է կարելի ենթադրել, որ ամենուրեք ստրկօրէն ընդօրինակող Յովհաննէս կաթողիկոսը հենց այս երկու բառը մոռացաւ արտագրել։ Իսկ ենթադրել թէ գիտութեամբ բաց թողեց, աւելի գժուարին է, քանի որ գիտենք այն անպայման հաւատը, յարգանքը, կարելի է ասել՝ պաշտամունքը, որ մեր պատմիչները, մասնաւորապէս Յովհաննէս կաթողիկոսը, տածում էին գէպի Պատմահայրը։

Մեր մինչև ցայդմ յայտնած կարծիքներին հակառակ է դուրս գալիս նաև գերմանացի գիտնական Ելուլֆ Բառումգարտնէրի մի ենթադրութիւնը։ Այս գիտնականը իւր՝ Խորենացու Պիտոյից գրքի քննագատութեան մէջ ի միջի այլոց մի մեծ ծանօթութիւն է գնում (Բազմ. 1887, եր. 312, ծնթ. 1) խօսելով մեզ հետաքրքրող խնդրի վրայ։ Հերքելով Լանգլուայի մի այլ կարծիքը, որով Լանգլուան (Coll. I. 316, not. 1) ենթադրում է թէ թերեւ Յովհաննէս կաթողիկոսը իւր ձեռքումն ունէր բացի Խորենացուց և Մար Արասի բուն գրուածքը, որից և քաղեց Սկայորդու և Պարոյրի ոսոխութիւնը և «անազգի» բռնաւորների մասին տեղեկութիւնը, ինքն այն կարծիքն է յայտնում, որ Յովհաննէս կաթողիկոսը բացի Խորենացուց չունէր այլ ազբիւր այս մեզ հետաքրքրող խնդրի վրայ ձառելիս։ Այս բանում մենք էլ համաձայն ենք Պ. Բառումգարտնէրին, Բայց յարդոյ գիտնականը գեռ աւելի հեռու է գնում։ «Անազգիների» և հարազատների խնդրը նա չէ համարում բռն Խորենացու բնագրից ծագած, ինչպէս մենք, այլ նման Պ. Գարագաշեանի վերագրում է միմիայն Յովհաննէս կաթողիկոսին, առանց նեղութիւն քաշելու, գոնէ ինչպէս անում է Պ. Գարագաշեան, նոյն իսկ բռն Խորենացու մէջ եղած հակասութիւնը այս կամ այն ձեռով պարզելու։ Սակայն Բառումգարտնէրը տարբերուում է և նրանով Գարագաշից, որ Յովհաննէս կաթողիկոսի կարծիքը վերագրում է ոչ թէ նրա «պառաւական» զրոյցներ անելու հակումին, այլ նրա՝ պատմաբան կաթողիկոսի, ունեցած Խորենացու օրինակի (ձեռագրի) պատճեն ու ուռութեանը։ Բառումգարտնէր կարծում է թէ Յովհաննէս կաթողիկոսի «ոչ ըստ

ազգի, այլ ըստ յառաջադիմութեան արանց խօսքերը, որ առնուած էն Խորենացուց, կաթողիկոսի ունեցած օրինակում ոչ թէ Յեսու անուան տակն էին գրուած (ինչպէս որ է Խորենացու Տիշտ օրինակներում), այլ Էնուշաւան անուան տակը, որից հետեցը Յովհ. կաթողիկոսը թէ Ենուշաւանի յաջորդները «անազգի» կամ բռնաւորներ էին։ Բառմգարտնէրի այս ենթազրութիւնից ծագում է երկու հետեւակը. ա) որ Պարսցի Հարազատ» լինելը և նրա Նախորդների «անազգի» կամ «անհարազատ» լինելը ծագում է, իրբեք թէ, միմիայն կաթողիկոսի ունեցած Խորենացու օրինակի պակասաւորութիւնից, բ) որ այդ օրինակը լաւ օրինակ չէր, պակասաւոր էր։

Եթէ Բառմգարտնէրի կարծիքը՝ օրինակի պակասաւորութեան մասին հիմնաւոր էլ լինէր, այսու ամենայնիւ զրանից չէր հետևի, որ Պարսցի Հարազատութիւնը և Հանկադարձարար Սկայորդու անհարազատութիւնը կաթողիկոսի ունեցած օրինակի պակասաւորութիւնից ծագած մի սխալ է, քանի որ մենք տեսանք, որ այդ «բնկութեան», Հարազատութեան խնդրին վկայում են և այդ խնդրին են նույիրուած Խորենացու 21 և 22-դ գլուխները, բոլորովին անկախ Յովհ. կաթողիկոսի պատմութիւնից։ Բայց մենք Համաձայն չենք նաև Բառմգարտնէրի յայտնած կարծիքին օրինակի պակասաւորութեան մասին։

Ծառ Տիշտ է որ «անազգի» բառը բոլորովին նոյնն է «ոչ ըստ ազգի, այլ ըստ յառաջադիմութեան արանց» ոճի հետ։ Բայց չէ՞ որ մենք գիտենք Յովհաննէս կաթողիկոսի զրելու ձեւը, սովորութիւնը։ Նա անգիր գիտէ Խորենացու (նաև Եղիշէի, Սերէկոսի և այլն) բոլոր ոճերն ու գարձուածները և տեղի անտեղ դրծ է ածում այդ ամբողջ ասացուածները բառ առ բառ, թէ նոյն անձանց և անցքերի վերաբերութեամբ, որոնց Համար գործ է զրել Խորենացին, և թէ ուրիշ չեռ աւոր անցքերի և նքն երի անձինքն երի համար, Եթէ այս վերջին գեղգում, այդ ոճերի գործածութեան գաղտնիքը կամնանք բացատրել այնպէս, ինչպէս այդ անումէ Բառմգարտնէր, բոլորովին խառնաշփոթուած պիտի ենթադրենք պատմաբան կաթողիկոսի Խորենացու օրինակը, և այդպիսով էլ գեռ շատ բան անբացատրելի կմնայ։ Յովհ. կաթողիկոսը Խորենացու բառերով և ոճերով արտայայտում և նկարագրում է նաև բազմաթիւ այնպիսի գեղգեր, որոնք Խորենացուց դարերով ուշ են կատարուած։ Այսպիսի կետերը արգէն՝ ձեռագրի որ և է պակասաւորութեամբ կամ խառնաշփոթութեամբ չէ կարելի բացատրել, այլ միայն և միմիայն պատմաբան կաթողիկոսի ոճաբանութեան առանձնայատկութեամբ։ Բերենք Հենց առաջին Հանդիպած օրինակները։ Յովհ. կաթողիկոսը Աշոտ Բագրատունի թագաւորի թագարդութիւնը նկարագրելուց յետոյ

ասում է նորա մասին. «Եւ այնուհետեւ բազում երևելի կարգս յարդարէր աշխարհի տէրութեան իւրոյ յօրինուածս տանց, ազգաց քաղաքաց շինից, դաստակերտաց, և հարթհաւասար ըստ իւրաքանչիւրոցն կատարէր կարգս լեռնականաց և ջերմահովիտ բարեխառն դաշտականաց, և զամենայն տափարակ տեղիս՝ ագարակս և գոմս զնէր, և զմարմանդս յայդիս և ի բուրաստանս զարդարէր. և զամենայն որ ինչ օրէն է թագաւորութեան և որ շուրջ զթագաւորութեան և որ շուրջ զթագաւորութեամբ ոչինչ իւրիք կասեցուցանէր, և գրեթէ հարստագոյն և խոհեմագոյն քանզամենայն թագաւորութիւնս գտանէր» (եր. 78, տպ. Մոսկուա. 1853): Այս հատուածը ամբողջ բանաբաղութիւն է Խորենացու զանազան տեղերից և մասնաւորապէս Ա. 6. գլուխ՝ «Գեղեցիկ իմն կարգելով զերկիրն հաւասարելով զլեռնայինն և զֆերմահոտն իւրաքեխառն և ի զուգագեղեցիկ վայելչութիւնիւրոյ թագաւորութեանն», Քերենք մի այլ աւելի որոշ օրինակ: Յովհաննէս կաթողիկոսը նկարագրումէ Եղուա իշխանաց իշխանին ձիշտ միենցն բառերով, որով նկարագրուած են Խորենացու մէջ Սմբատ Բագրատունին և Տիգրան Երուանդեանը. «Վասն զի ի տիս հասեալ միջակութեան» քաջահասակ էր նա և անձնեայ և թիկնաւետ և զուարթերես և մրայօն նկարէն իմն, և նիշ արեան յաւսն ունելով որպէս զյափինթ կարմիր ի մէջ մարդարտի ծագեալ, և վայելչացեալ զեղեցկութեանն ալեօք. մեծիմաստ և քաղցրաբան, և առ կերակուրս խրախճանաց պարկեցաւ. ոչ խանդացեալ նորա ընդ լաւագոյնն և ոչ արհամարհեալ զնուաստագոյնն այլ հասարակաց ի վերայ տարածանէր զզեստ խնամաց իւրոց, և լծակօք իմն կշռէր նսխ զիւր և ապա զամենեցուն կենցաղս. միանգամայն իսկ ասել, եթէ որ ինչ մարդկութեանս է պիտանի ոչ ինչ կասեցուցանէր» (եր. 77): Այսպէս որ այս բառացիք բանաբաղութեամբ մինչև իսկ կարելի է Խորենացու այժմեան բնագիրը սրբագրել: Զոր օրինակ այս վերջին հատուածից մենք իրաւունք ունինք մակարերել, որ տասներորդ գարի սկզբում, երբ գրում էր Յովհ. կաթողիկոսը, Խորենացու Ա. գիրք, զլ. 24 - ի «զնուաստոն» ընթերցուածը գեռ չէր թարգմանուել — «զստրուկս», ինչպէս այդ տեսնում ենք Լամբրոնացու կոչուած օրինակում: Կամ թէ նոյն զլիսի «զինամոցն իւրոց ի վերայ տարածել զգեստ և տաս» այժմեան տպագրի ընթերցուածը կարող ենք սրբագրել՝ «տարածանել զգեստ և տաս» լաւագոյն ընթերցուածով, որին երաշխաւորում են և ուրիշ ձեռագրեր: Միովրանիւ ասած, ամբողջ Յովհաննէս կաթողիկոսը բանաբաղութիւն է ոճերի, ասացուածների, բառերի, այնպէս որ շատ անգամ ներքին իմաստը բոլորովին կորչում է փոխառնովի ոճերի տակ: Աւստի և Բառումգարտնէրի կարծիքը մեզ անհիմն է երեւում: Մենք չենք կարող և իրաւունք էլ չունինք օրինակի պահանջման մասին և ութեան վերագրել այն, ինչ որ յա-

տուկ է և անբաժան պատմիչ կաթողիկոսի գրելու եղունակից, նորա ճռումարանութիւնից: Նա ու իւր սեփական մաքերն ունի և ոչ էլ իւր սեփական բառերն ու ոճերը, այլ այդ ամենը փոխ առնելով՝ այստեղից այնտեղից՝ կցկուուր կարկատում է, առանց գոնէ կարկատանների ձերին ու գոյնին ուշք գարձնելու:

Այսպիսով մենք հաստատ ենք մնում մեր ենթագրութեանը, որ Պարոյր չէր, ըստ Խորենացու՝ «օրդի Սկայորդւոյ»: Այս բանին վկայութիւն է և այն, ինչպէս ասացինք, որ այս երկու բառը են գտնւած մեր և ոչ մի այլ առ մութեան մէջ. իսկ յայտնի է, որ մեր բոլոր պատմութիւնները առանց բացառութեան, Հայկազունիների պատմութիւննը գրելիս ունեցել են իրեւ ազբիւր միմիայն Խորենացին: Սրանից հետեւում է և այն, որ «Որդի Սկայորդւոյ» Ներմուծութիւնը կատարուել է համեմատաբար շատ ուշ:

Հարկաւոր է սակայն խոստովանել, որ մինչև այժմն չէ գտնուել ձեռագիր, որ չունենար այս երկբառեան ներմուծութիւնը, կամ եթէ կայ այդպիսի ձեռագիր, ուշագրութեամբ զննող չէ եղել: Բայց մինչև օրս չունեինք մենք և սիսալ «Մրատի», «Տրդատ», «ուղիղ ընթերցուածը»:

Մնում է մեզ ցոյց տալ թէ ինչ պատճառով կարող էր գոյութիւն ըստանալ և ներս սպրգել Խորենացու բնագրի մէջ այս ընդմիջարկութիւնը:

Այս գեղքում ներմուծութիւնը չէր կարող ունենալ որ և է «նպատակաւորութիւն»: Ինչպէս այդ մենք ենթագրեցինք Կատարի՝ Կունդթմանութեան դէպքում (Ա. Յօդուած): Պարոյրը լինէր Սկայորդու որդի կամ չլինէր, դրանից ոչինչ հետեւանք չէր ծագի, բացի բնագրի խանդարութիւն: Աւստի և մեր կարծիքն է, որ «օրդի Սկայորդւոյ» բառերը լուսանցքի բացատրութիւնն էն, Քանի և երկուերորդ զլիսի վերնագիրը՝ այսպէս ասած, թելադրում էր քիչ թէ շատ բանիմաց և հետաքրքիր գրչին մի այդպիսի ընդմիջարկութիւն: Աչա այդ զլիսի վերնագիրը՝ «կարդ թագաւորաց մերօց և համար նոցունց որ գի ի հօր է առնելով», որից յետոյ դրուած է վերից վար Մարաց և Հայոց թագաւորների ցանկը՝

Աւրեակիս:

Պօդակիս:

Առտիկիս:

Գէովիկիս:

Փուաւորիս:

Կուաքս:

Աժգահակ:

Պարոյր (օրդի Սկայորդւոյ):

Հրաշեայ.

Փառնուաս.

Պաճոյճ.

Կոռնակ:

Փաւաս:

Միւս Հայկակ.

Այս ցանկից և զլիսի վերնագրից երեսում էր, որ Հրաշեան Պարոյրի որդին էր, Փառնուասը՝ Հրաշեայի օրդին, Պաճոյճը Կոռնակի, և այլն

ըստ կարգին բաւական էր որ զբան գլխում՝ ծագէր այս շատ բնական հարցը իսկ Պարզըն ում որդին էր: Աւ մենք կունենայինք, ինչպէս և ունեցել ենք՝ պատասխանը: Արդի Սկայորդւոյ: Իսկ թէ ինչու անպատճառ Սկայորդւոյ: և ոչ մի ուրիշի այդ էլ շատ պարզ է, որովհետեւ Սկայորդին է նախընթաց հայ նահապեաների ցանկի վերջինը: այն է՝ Պարզըրին ամենից մօտիկը:

Խորենացու թարգմանիշները՝ առանց բացառութեան: ոչ միայն Պարզըրին համարում են Սկայորդու որդի: որ այդպէս էլ պէտք է լինէր: այլ նաև, այդ հասկացողութեամբ առաջնորդուած: Ա. գիրք: 21 զլիի վերնագրի Ար ի Սկայորդւոյն Պարզըր առացուածը թարգմանում են առանց առասամա ութեան: Սկայորդու որդի Պարզըր որով առելացնում են մի նոր կեղակարծ փաստ յօդուտ ընդմիջարկութիւնից ծագած սիսալի:

#### ՄՈՒՐԱԲԱՌԻ ԴՐԱԽԱԼԻ:

Նախընթաց յօդուածում զիտեցինք Խորենացու երկու հակասութիւնը: երկուսն էլ բացատրեցնիք լնագրի խանգարմանը և ջանացինք ուղիղը վերականգնել: Մեր Ի. յօդուածում առիթ ունեցանք ցոյց տալու թէ ինչպէս «Հայկայ» անուան յապամամբ: Ա. գիրք 5 զլիում: Ա ըմենակն է դարձել Իէլի հետ կոռուզը: որով ծագում է հակասութիւն Խորենացու պատճենութեան մէջ: Ակների է որ այս հակասութիւնը նմանապէս ձեւուագրի աղջատման հետեանք է, ուստի և մեր կարծիքով սիսալում էր հանգուցեալ Ք. Պատկանեանը: ևնթագրելով այս 5 7 զլիի իրը թէ Երբիւգենոսից առնուած հասուածի վրայ հիմնուած: թէ Հայաստանում պահպանուել էր երկու աւանդութիւն: օրոնցից մէկը Իէլի գէմ եղած կուիը վերագրում էր Հայկին: մինչդեռ միւսը՝ Երմենակին ( ): Եթէ այդպիսի կրկին աւանդութիւն գոյութիւն ունենային, Խորենացին այդ չէր կարող ծածկել և ստիպուած կլինէր երկուսն էլ յիշել մէկն ընտրելով միւսն հերքելով ինչպէս վարուել է Բագրատունիների ծագման խնդրում: Թէև որանով չեն խախուած Պատկանեանցի այն հիմնակները, որոնց վրայ յենուած՝ նա փարձեց Հայկի գիւցաղնական շրջանը ( Cycle ) որոշել Երմենակի շրջանից ցիկլց:

Բայց այս բոլը հակասութիւնները չնչին դանէր են համեմատած այն

Ճեծամեծ հակառակութիւններին, այն՝ իրար սրամագծօրէն հակառակ տեղեւ կութեածց, այն՝ իրար հերրող բացատրութիւններին, որ զանում էն քընդհանութեալ Խորենացու մէջ մասնաւորապէս Մար Երամի կամ Մար Արամի միրակրութիւնը: Եւ յանդ արգեն ամեն բան հերրումն է, բաեզմումն և տապարումն, Կործանումն է պատմութիւն ամբողջ շէնքը և վլատակների տակն է մնում ինքը քերգողը, որ այլ ևս ոչ միայն ծերունի է՝ զառամեալ և մոռաց կոտութեամբ հակառաց, այլ և՝ խարզախիւ և՝ խարեւոց և չեղած Մարիմասի յարինադ—մակոնուդ: Եւ յանդ արգեն գիմազգրութիւնն անկարեցի և մնում ընկճազ և տապալոց փաստերի տառ և մնում է միայն անձնուտուր լինել, — և անձնուտուր էլ եղան: Անձից վերժը իւր զէնքը վար զրեց Խորենացու ամենավերը՝ երկրպագունք, ամենամայեսանց հաւատացեալը՝ Մկրտիչ Էմին: որ ոչ միայն հաւատում էր Մարարասի գոյութեանը, այլ և զիսէք այդ Մարարասի գրած զրբի հատորների թիւը (1): Առ էլ առում ենք, 1881-ին զէնքը վար զրեց և արտասանեց իւր նոր հաւատամքը: ։ Մարարասը երբէք գոյութիւն չէ ունեցել, նու Խորենացու մասցածին ստեղծագործութիւնն է (2), Միայն թէ Էմինի այս նոր հրատարակութեան մէջ ոչինչ նորութիւն չկար Մարարասի վերաբերութեամբ: Արանից տառաջ նոյն միարն յայտնել էր Մարարաշեան, և օրանից էլ տառաջ՝ Գուտչմիկ:

Մեր նպատակից զուրու է Խորենացի՝ Մարարասին դասուց և դատափետուց Քննարանների կարծիքներն ու զՃիւները այսունդ համախմբել բայց որովհետեւ զրապուած ենր Խորենացու հակառակութիւնների ինքրոզ: ուստի և անհարին է մեզ նորից շրաբքացնել պիտափ անդամ՝ յեղինդուած: և բայ մեզ նուև չեղած ու մաս ։ Մարարասեան հարցը՝ որովհետեւ այս ինքրին հետ է կապուած Խորենացու վերագրուած հակառակութեանց մեծ մասը: Բայց կրկնարաններներից խցու տալու և արգեն յարանի կարծիքները նոր ի նորոց չեղաց եղելու համար: մենք այդ հարցին կմատենակը բոլորովին մի նոր կողմից:

Հարցի այդ նոր կողմն է հետեւալլը: Եւ զի ևք նոր են ացին իւր պատմութեան ուր մասերը, ուր զլուխները, ուր ուեցել է թիւները քաղելէ (կամ ցայց է տալիս թէ քաղելէ) իսկապէս զոյսթիւն ունեցող կամ մատացածին Մարարասունան զրբից: Մէ խօսրով տառած: կաշխատենք օրոշել Մարարասի ձաւալլը:

1) Խորենաց ռուսացօրէն Մարգարութիւն Եմինի յանաչորան եր. 6. էլ. Ա. գիր. 21 դւրբ. եր. 59. (История Армении М. Хоренского, пер. Эминь. Москва, 1858.)  
2) Консей Хоренский и Древ. Эпосъ Арм. Москва, 1881.

Մեզ թուամ և թէ նախ քան գտան և դատապիտել անհրաժեշտ է ձշտի որոշել և սահմանառել այն նիւթը՝ որն ենթարկուելու և քընութեան։ Բայց մինչեւ այդ չեն արել այն բազմաթիւ և ականաւոր զիտակարանները՝ Քառորդեն, Անկան, Ֆրերե, Ան - Վարտեն, Գուտչմիզ, Գարագաչ, Պատկանեան և Խորենացու բազմաթիւ թարգմանիւններն ու հետազոտողները, որոնք քիչ թէ շատ զրազուել են Վարարասով Դրանց մեծ մասը՝ օտարազգիները՝ ընդհանրապէս զտան ևն Խորենացու Վարարասոն, ոչ հայերեն բնագիրը հիմք գնելով իրենց քննութեան, ոյլ որ և թարգմանութիւն։ Եւ վերջապէս զրանցից բալորերեանն էլ չեն հասել այն կատարեալ ժխտողական և զրակացութեանց, որոնց հասան Գուտչմիզ, Վարագաչ և Ամին։ Միւս կողմից բոլոր թարգմանութիւնները՝ առհասարկ շատ և շատ անճշտութիւններ և յարունի սիսարներ ունին, որոնք տեղ ունեց գլխավիճ յեղաշրջում են բնագիրը։ Հարկաւ, պրգրամի սիսարներն ու անճշտութիւնները շատ կամ սակաւ շափով չեն կարող չափարազանալ քննագատութեանց մէջ։ Այս էլ կամ որ Խորենացին, Խորենացու միւս ազդիւրներն և Վարարասը միշտ շփոմուել են և մէկը միանք տեղ գտանել։ Ճշտի որոշուած շինելով թէ որ տեղ է վերջանում Վարարասը, և ո՞ր տեղ է սկսուած բան Խորենացին։ Կամ նրա միւս ազդիւրները՝ ճիշտ է, Լանգլուան փորձել է ջոկիլ Վարարասը և գուրս հանել Խորենացու Պատմութիւնից։ Աւ այդ առանձնացնելը բոլորսին անհրաժեշտ էր Վարարասը քննագատելու համար։ Բայց Լանգլուայի այդ փորձը աւելի վնասել է զործին, քան օգնել։ Կա ի՞նչ է արել Վարարասը առանձնացնելու համար։ — Անը է առել ուզզակի Խորենացու Ռ. զիրը աթերարդ գլխից սկսեալ որի մէջ տաաջին սնկում յիշում է Վարարասի անունը, մինչեւ Ի. զիրը բններորդ գլխի վիրջը անընդհատ առ բարբար, ուր վիրջին անգում յիշում է Վարարասի անունը, և այդ ամբողջութիւնը ու ծու արտատպել է անուանելով Վարարասի Պատմութիւն։ Դրանից էլ հեշտ բան չկար։ Կա բնմերցողներին է թաղում ջուկել այդ ինչպէս կարող է Վարարասը Խորենացու (1)։ Սակայն այնքան էլ հեշտ բան չէր այդ չպեղութիւնը թէ առաջ և թէ յետոյ։ Վարարասով բոլոր զրազուազները՝ թէ Վարարասի ինքնուրողն զոյտթիւնն ընդունացները և թէ այդ հերբորները։ Վարարաս ասելով հասկացել են Խորենացու այդ ամիսաց հասուածը՝ Ա. զիրը 8 զիրից մինչեւ Ի. զիրը 9 զլութը inclusivement։ Մինչդեռ Խորենացին շատ տեղերում պարզ կերպով ցցց է առ-

լիս թէ ինչ բան է առել Մարարասից, ինչ բան երգերից և ինչ բան ուրիշ ազդիւրներից, կամ թէ երկու և աւելի ազդիւրներից միանգամցնե ու որ են նացու այդ ժե ծ հատուածի ամենամեծ մասը, մեր կարծիք ու վայրի մեջ են ամբու Բայց ոչ միանգամ նախառեալ կարծիքը արմատացել է և բոլորեքեան սպօրել են այդ ամրող հատուածի վրայ նայել իբրև Մարարասի վրայ այս կարծիքը տուել է մինչեւ անգամ գասագրերի մէջ), և այս տեսակետից էլ քննում և քննագառում են Խորենացուն: Եթէ բան է, Խորենացին ցոյց է տալիս մի ուրիշ ազդիւր՝ յունական քաղցէաւ կամ կամ ասորական քննագառները գժգոհ են այդ բանից և այդ համարում են հակասութիւն սախառութիւն: — Այսպէս մեր ծերունի պատմութիւնը Քաղցէացոց արքունի գիւանին մէջ գնելով՝ մերթ ասէ թէ այն պատմութիւնը գրողք բուն Քաղցէացիք էին, և մերթ փոքրունց ունանց և աննշանից կուտայ զայն հաւաքել. մերթ հանել կուտայ զայն Մար Երասոյ ձեռքով՝ սինուէի գիւանէն, և մերթ հարցանողաց թէ ուստի գտաւ այն պատմութիւնները՝ պատասխան կուտայ թէ ինք հանեց Քաղցէացոց Խորենացնեաց և Պարսից գիւաններէն. (Քննակ, Պատմ. Հայոց, եր 94). Կարծես թէ ասելիս լինեն Խորենացուն. Գումազը խօսացել ես ամրող պատմութիւնը Մարարասից առնել և պատմել, ուրիշ ազդիւր չենք ընդունում: Բայց Խորենացին այդպիսի խօսաւում բնաւ չէ տուել: Թէե քննագառների այս բանած ընթացքը աւելի ես զիւրացնում և Խորենացւն իւր Մարարասով՝ հանգերձ կործանել և խորտակել: Մի պատմութիւն, մի ասացուած՝ որ Խորենացու սեպհական բերանում իւր տեղումն է, վերագրուելով Մարարասին, գտանում է անտեղի, սխալ կամ սուս: Եւ այս Մարարասի ընդարձակութեան, ծաւալի կամ շափակերի վրայօք եղած, եթէ կարելի է այսպէս ասել, նախաղաշարունքը՝ այնչափ զօրեղ է, որ յատկապէս Մարարասեան շափսով կամ ծաւալով զբաղուող միակ գրողը՝ Վարագաշեան: Նմանապէս ենթարկում է այդ վնասակար նախառեալ կարծեաց ազգեցութեանը և Մարարասին է վերագրում Խորենացու ամրող գլուխներ, որ բնաւ կապ չունին Մարարասի հետ: Իսկ թէ ինչ մեծ թիւրիմացութիւններ, անտեղի, խօսաւ և անարդար վճիռներ, դատումներ և դատապարտումներ են ծագում այդ մեծ սխալից կամ անզգուշութիւնից, այդ մենք կը տեսնելու ուղղում:

1) Հայկական ՀՀն Գոլութեան վառ մասթիչն, Զարսանս լեռն. 1889, վեհակ երս 134 — 150:

Արեմն սկսենք համառօտակի Խորենացու զլուխները թերթել՝ որոշելով այն ինչ որ Մարարասիցն է ըստ իւր՝ Խորենացու առ ուժ ե ան և այն՝ ինչ որ Մարարասից չէ Խողբում ենք ընթերցողին, եթէ հետարքը բռում է այս հարցով ձեռքն առնել մի խորենացի (անպատճառ զրարար ընագիրը) և հետեւ մեզ Պենք երկարութիւնից խոյա տալով բաւականանում ենք միայն զլուխների բովանդակութիւնը և շատ հաստատենարի մի միայն սկզբնաւորութիւնն ու վերջաւորութիւնը նշանակելով:

Ա. զիրք. 8 շ զլուխն առաջին անգամ՝ պատահում ենք Մարարասի անուանը: Այս զլուխն պատճեռմ է Պարթև Երշակ մեծի և Աաղարշակի մասին և թէ վերջինս ինչպէս ուղարկեց Մարարասին Երշակի մօտ արքունի գիւղնից հայոց պատճեռթիւնը բերելու: Այս զլուխն ամփոփուած բոլոր տեղեկութիւնները սերտ կապակցուած են Մարարասին մատեանի ծագման պատճեռթեան հետ: ուստի և իրաւունք ունինք համարել դրանց առնուած նոյն իսկ Մարարասից որ իրրեւ յաւելուած իւր բերած (կամ յօրինած) գրքի յառաջարանում կամ վերջարանում կարող է՛ այդ տեղեկութիւնները հաջորդել լինէր Մարարասը ինքը՝ Աաղարշակին իսկապէս ժամանակակից: կամ թէ Յ. Ք.՝ Ի կամ Գ գարի՝ և կամ ինչպէս մենք կարծում ենք՝ միմիայն ՚ի գարի գրող: Այս մեզ համար առ այժմ բոլորովին անտարբեր է: Արեմն առ ժամ մի հաւատալով Խորենացուն որ նա իրանից չէ յօրինել Մարարասին մատեանը՝ այլ խսկապէս ունեցել և մի արդապիս մատեան: որ ինքն (մատեանը) իւր մասին տալիս էր ուղիղ կամ կեղծ տեղեկութիւններ: որոնց և հաւատ լնծայեց Խորենացին: — պէտք է ընդունենք որ այդ Մարարասեան մատեանում կային Պարթևական տէրութեան ծագման յիշատակութիւնը: Երշակի, Աաղարշակի անունները, Մար Երասի կամ Երասի կամ ինչպէս գիւրութեան համար մենք գրում ենք մի բառով Մարարասի անունը և երա գրքի ծագման պատճեռթիւնը:

Ա. զիրք. 9 զլուխն: Այս զլուխն գրուած է Աաղարշակի Նամակը իւր եղբօրը կամ հօրը Երշակին: — զի գտեալ զըդաւլին եղբօր քո և որդուոյ: — որի մէջ խնդրում է Աաղարշակը Երշակից՝ թոյլ տալ Մարարասին արքունի գիւղնը խուղարկել: Այդ գիւղնում Մարարասը զտնում է այն մատեանը: որն իրրեւ թէ Եղեքսանդրի հրամանավ Քաղցէարէնից Յունարէն էր թարգմանուած: Այդ գրուածքի մէջ յիշում էին Զրուան Տիտան: և Յապիտոսթէ (1): Այդ մատեանից հանում է Մարարասը Հա-

(1) Այս Յապիտոսթէ միայն ձեւի մասն ու որ Ֆադել է յանակուն ամէ մասնկան Յապիտոսփ հետ ձուլուելոց խօսել են գրեթէ բարք քննագաւանելոր: առնելով Պետերմանից էւ Խնձրէնեանից (Վանքի Խանու, 43, Ֆադ, 1): զ ուղարկուան այն կարծիքին է որ Խա-

յոց պատմաւթիւնը և բերում է Առղարշակին : Եցն և ասորի դրով : Անկ է թէ ենթագրեալ Քաղդէարէն բնագիրը նոյն ինքն Առղարշակը շահաւար ենթագրեալով թէ Մարարասը Առղարշակին ժամանակակից լիւնէր : և թէ Մարարասը ինը թարգմանեց Յունարէնից Ասորերէն : Այս յիշասակութիւնից պարզ երեսոմ է : որ Մարարասեան մատեանի վերջին խմբագրութիւնը (հաւանականաբար միակը, որ իսկապէս զոյութիւն ունէր) չէր ոչ քաղդէարէն : ոչ յունարէն : այլ ասորերէն : Թէև այդ Յապետոսը թէ բարից կարելի է եզրակացնել : որ Մարարասը իւր մատեանը խմբագրելիս ոգտուել է և յունական աղբիրներից : Բայց առ այժմն մեր նորատակը չէ քննադատուել Մարարասի մատեանը, այլ միայն օրոշելը ուստի և որ են ացու՝ այն իրազութիւններն և գեղքերը, որոնք առնուած են Մարարասից : Մարարասի բերած մատեանը Առղարշակը իրեն թանկագին գտնեամ է արբունի պահեստում և զմասն ինչ ի յարձանի հրամայէ գրոշմել : Արքեն պատմաւթեան մի փոքր մասը միայն գրոշմում է արձանի վրայ Մծրինում: ուստի և անշուշտ ասորերէն : «Յորմէ» ասում է Խորենացին : մեր հաւաստի ի վերայ հասեալ կարգի գրուցաց երկրորդեմք այժմ քում հարցասիրութեանդ : (Սահակ Բագրատունուն) : Այս տղերը նշանաւոր են, օրովհետեւ ցոյց են տալիս թէ Բնչակղից ձեռք բերեց Խովսէոր Մարարասին : Ըստ իրաւամբ Կարագանչ հարցուամ է թէ այս «Յորմէ» ի նշակես պէտք է հասկանալ արձանէն թէ զիրքէն : — Յիրաւի՛ շատ կարեւոր է որոշելը թէ արգեաք Խորենացին Մարարասի ամրադջ պատմութեան օրինակն ունէր, որ արքունի պահեստուն էր գրուած : թէ այդ պատմութիւնից մասն ինչ : — մի փաքր մասը (իրը) արձանի վրայ գրոշմուածը : Խորենացու խօսքերը այս վերջին իմացուածին են իրաւունք տալիս : և զմասն ինչ ի յարձանի հրամայէ գրոշմել : Յորմէ մեր հաւաստի ի վերայ հասեալ . . . . . Աւրելն Խորենացու Մարարասը չէր ամրողական մի գրուածք, այլ հատուած միայն : Այս կէտի վրայ անհրաժեշտ է լուրջ ուշագրութիւն դարձնել : մենք կտեսնենք ներքեւում թէ Բնչակէս արգարանում է մեր այս բացարութիւնը և թէ այս որչափ թիւրիմացութիւններից աղատելու է մեզ :

Յետոյ Խորենացին շարունակում է՝ «երկրորդեմք այժմ քում հարցասիրութեանդ, ձգելով զմեր բնիկ նախարարութիւնունը մինչեւ ցքաղաք է ացաց ացաց Ամրագաւնապահ անհրաժեշտ է լուրջ ուշագրութիւն դարձնել : Այս Խորենացու այն հակիրճ խօսքերից մէկը, որ ամրադջ

բնական բնակութիւնների կոպիտ սկսուածք է ու կարող անել, եւ ոչ էլ Խորենացու ընկերներից որ եւ է մէկը, օրմաք ծայրացեղ հշկութեամբ ուսկագանել են տառապարձութեան կամանը մէտք մասնիկը չեն գրել թէ» : Վանք, Ա. եր. 43.

